768
L. I. 5.

272.2

4

Գ 1341 տ. 1868.

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

Բ. ՏԱՐԻ — ԹԻՒ Ա. — ՅՈՒՆՈՒԱՐ — 1861

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐՔ

ԳԱՐԵԳԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՌ ՊԱՐՈՆ ԳԱՐԵԳԻՆ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

ԹՈՒՂԹ ՆՈՒԻՐՄԱՆ

Քեզ եմ համարձակում ընծայել, աղնիւ բարեկամ, այս քեզ համանուն ողբերգութիւնն, որն որ մեր արդեան քերթողական դրականութեան մէջ իմ ունեցած երեխայական կարողութեանս առաջին երախայրիքն է։ Այս առաջին անդամն է, աղնիւ Հայաստանցի, որ կամք և տենչ ունեցայ մեր յառաջագոյն ծաղկած և բերրի՝ և այժմոյս անմշակ և անբերրի Գողթան դաւառի դաշտերու և բլուրներու վրայ թռթռալով մեն դալ իմ երիտուն թևերով և դողդոջուն ծնկներով։ Այս առաջին անդամն է, ասում եմ, որ բանաստեղծաց դրախտը մտնել յանդգնեցայ, որպէս զի մի քանի վարդ և շուշան, մեխակ և մանիշակ քաղելով՝ արդեան աղգային դրականութենից մի քերթուածոյ փունջ շինեմ. կարծում եմ, որ փունջս չինեցի և ահա քեզ եմ ընծայում, որ քո ունեցած հոգեղէն ղդայութեամբդ նրա անոյշ և համեղ բուրից զմայլելով, ղդաս և տեսութեանդ ճաշակովը նրա գոյնղգոյն և անթառամ տեսքը հիանալով վայելես։ Արդ՝ քեզ և քեզ նման բանասիրաց կմնայ քննել իմ այս դրականական փունջս և վկայել, թէ արդեօք բաղդաւոր եղել եմ նրան հաճոյատես և անուշահոտ ծաղիկներով զարդարել, եթէ ոչ անբաղդ կոչտ ու չոր թըփերով և խոտերով։ Իմ նպատակս ջանք և փոյթ անել է եղել յաջո-

ղելու համար, եթէ հասել եմ իմ նպատակին, բաղդաւոր եմ համարումինձ. եթէ չեմ հասել, ընդունեցէք, խնդրեմ, գարձեալ իմ այս ջնջին նուէրը ի նշան իմ շնորհակալութեան այն մտերիմ և անկեղծ բարեկամութեան, որ ինձ նման օտար աշխարհներում ծնած և մնած մի Հայկազն երիտասարդ եկել գտել է քեզ նման բուն իր աշխարհումը մնծացած և իր հայրենիքումը դարդացած Հայկազն երիտասարդի մօտ։

Մի քանի տեղեկութիւն ևս տալ քեզ այս ողբերգութեան մասին ամենևին անպէտք չի երևցաւ ինձ։ Այս ողբերգական հատուածն մէջ մինչդայն մեր հայրենական աշխարհի, կրօնի և աղդի հողին և կիրքը նկարագրելու համար ԱԶԳԱՅԻՆ վիրաղիրը յաւելցնել յանդգնեցայ. իսկ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐ անուն տալ կամենալս ուրիշ բան չէ, այլ նրա ձևոյն և կերպին մի տաւանձին յատկութիւն տուած լինել եմ կարծում. ընդհանրապէս Եւրոպիական թատրց ձևերից մերկացնելով նրան և Ասիական ձևեր տալով, կամ թէ աւելի պարզ ասելով նախնի հայկական միտքն ու բարքը նրա տաւանձին կերպարանք և հանդամանք անելով։ Եթէ մի յաւալի ճշմարտութիւն դիտենալ կկամենաս, կիմացամ ես այս տեղուն իմաց անել քեզ, իմ ազնիւ բարեկամ. ըստ իմ կարծեաց դրեթէ համոզուել եմ, որ մենք արդիւքս չենք կարող մեր ներկայ վիճակին նայելով՝ մի ճշմարիտ Հայկական կամ Աղգային թատր ունենալ թէ դիւցազնական և թէ ընտանական. սրա հաղար և մի պատճառները քեզ յայտնի են անշուշտ, որոնց գլխաւորներն են, նախ՝ մեր նախնեաց իրանց համար թատերական խաղերու նման մի յատուկ հրապարակական զբօսանք չունենալը կամ եթէ ունեցել են, որն որ խիստ շատ հաւանական է, մինչև մեզ արդեաց չհասնիլը. երկրորդ՝ ինչ ես տեսնում այժմեան ժամանակումս, բացի Հայոց աշխարհի մի քանի կողմանց ընիկ ոդուց մինչից օտար աշխարհներ տարաղիր եղող Հայոց մէջ, որոնց աղդային վարուց և բարուց դրոշմն ու հոդին այսօրուան օրս այն աստիճան զլալի և երևելի լինի, որոնք կարելի լինի թատերական խաղերում իբրև կենդանի պատկեր ներկայացնել։ Եւ այլ սրանց նման այլևայլ անհամար պատճառներ կան, որոնք ուրիշ անգամ առիթ կունենամ Աստուծով յառաջ բերելու թատերական խաղերու վրայ ճաւելու որ լինիմ։

Ուստի ես, ազնիւ բարեկամ, արդեան Հայոց քաղաքական և ընտանեկան բարքն ու վարքը արդեան թատերական զրականութեամբ ոգտակերացնելու և կենդանացնելու ճարտարութիւնը ուրիշ կորովի հանճարեղ զրիչներու թող տալով, յետ մղուեցայ հաղարաւոր տարիներով վեր կացայ, գնացի իմ սիրելի նախնեաց մէջ հայկական հոդի և սիրտ որոնելու. հաղարաւորներու պատահեցայ, բայց իմ հոդին և ուշքը դրաւողն եղաւ Գարեգին Սրուանձտեանը, այն մանկադոյն նախարարը, որոյ անունը դու քո վերայ ես կրում և որոյ պատմութիւնը մեր երա-

ենալի Եղիշէ վարդապետի գրքէն առաջին ուշադրութեան արժանի է, ելել, ինչպէս երևում է իր ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ գրուածոյն մէջ։

Պատուական բարեկամ, Գարեգին Սրուանձտեանի պատմութիւնն որչափ ինձ՝ անշուշտ և քեզ այնչափ և դուցէ աւելի ևս յայտնի է։ Եւ նրա պատմութիւնը Եղիշէից եմ վերցուել, բայց Փարպեցւոյն և Ճառընտիրի մէջ ևս մի քանի անդրկութիւններ եմ դիտել նրա մասին, որոնք Եղիշէի ասածոյն այնչափ յարմար չեն պատասխանում. Փարպեցին յիշում է երկու եղբարք ի տանէ Սրուանձտեայց Խուրս և Գարեգին անուն, որոնց նահատակութիւնը Վարդանանց պատերազմումն է դնում. իսկ Եղիշէն Գարեգինն է միայն յիշում Յաղկերտի ձեռամբ չարչարանքով սպանուած։

Ահա քեզ նաև Զամչեան Միքայել վարդապետի պատմածը ևս այս դէպքի մասին, որն որ այս ողբերգութեանս նիւթը պարզացնելու բաւականին լոյս կտայ։

«Ի պատերազմիլ Յաղկերտի ընդդէմ Հոնաց, տեսեալ թէ երկարի այն գործ, «չինեաց մօտ ի դուռն Ալանաց բազում աշխատանօք և բազում ծախիւք զրերդ ամի մեծ և հզօր, և այս այն է, որ կոչի ի գիրս Եղիշէի Պահակ Հոնաց, և շուրջ ըզ ճոմաւ կանգնեաց զրաղում աւանս ի բնակութիւն մարդկան իրրև զքաղաք. և «արար անդէն զարքունիս, և բնակէր անդ. և ընդ ժամանակս ժամանակս գնայր «ի Տիսբոն, և դառնայր անդրէն։ Այսպէս առնէր մինչև ի մեռանելորդ սմն «Թագաւորութեան իւրոյ։ Եւ հանապազ երկնէր ի սրտի՝ տրամ ի կամս իւր ըզ «քրիստոնեայս, որք էին ի բանակի. երբեմն խրախտայր ի վերայ նոցա. և երբեմն «տոքէր. երբեմն արհամարհանօք խօսէր, և երբեմն յուցանէր առ երեսս՝ թէ հաւատն է ընդունել զՀնչնարիա Աստուածն. քննեսցի, ասէր, և տեսցի, թէ Աստուած գոյ իցէ, ընտրեսցի նա ի պաշտօն. և ապա անտի բանիւք դողէր զարեղոին և «զնոսա, և արհամարհէր զօրէնս քրիստոնէից. և բազում անգամ եպերելով ասէր. «արդեաւք է այն Աստուած, որ խաչեալ իցէ և մեռեալ և թաղեալ։

Ի հանապազորդել նորա զայսպիսի բանս, յաւուր միում մանկադոյն նախարարս սմն «ի Հայոց ի տոհմէ Սրուանձտեայց՝ զորում անունն էր Գարեգին, չհանդուրժեալ այսչափ անարգանաց նորա՝ ասէ ցնա. արքայ քաջ՝ դու ասացի դիտես, թէ խաչեալ «է Աստուած մեր, և մեռեալ և թաղեալ։ Եւ նա ասէ. իմ առաջի ընթերցան ըզ «գիրս մարգարէութեան ձերոյ։ Ասէ ցնա պատասխանի. ընդէր արքայ ցայդ վայր միայն «ձառաւ ընթեռնայ, այլ ևս յառաջ առեր կարդայ, զոր լուիցես և գայարութիւն «նորա, և զվերանալ նորան յերկինս, և զիաստատն միւսանգամ գալուստն, և այլն «զոր ի կարդի։ Ընդ այս զամենայն հարեալ թագաւորին՝ ձիծաղեցաւ ի վերին իրեանս, «և ասէ. այդ ամենայն խարէութիւն է։ Պատասխանի ետ Գարեգին, և ասէ, եթէ «ճաւատարիմ թուին զքեզ չարչարանքն և անարգանքն մահ նորա, ապա հաւա«տարմագոյն ևս թուեսցին փառաւոր յարութիւնն և հանդարձումն նորին, և ոչ թէ «խաբէութիւն։ Բարկացեալ ընդ այս արքայն՝ նոյն ժամայն ետ կապել զՀեռա և «զտոռ նորա, և արկանել ի բանտ. յորում տառապեցաւ երանելին ամս իրր երկու, «զոր և թէպէտ վճիռ մահու ևս էր ընկալեալ, բայց յետոյ ընդ այլ նախարարսն արձակեալ ի խնդրոյ նոցա՝ նահատակեցաւ ընդ սրբոյն Վարդանայ ի մեծի պատերազմին*։

*) Պատմութիւն Հայոց. հատ. Բ. էջ. Գ. եր. 19։

Իսկ Գարեգնին Երանուհի անուն մի քոյր որ տուել եմ ուն որ երկրորդ դիւցազն եմ արել ողբերգութեանս մէջ, նոյնպէս երէցներն, որ մասնակից եմ արել Գարեգնի արկածքին՝ Զամչեան Միքայէլ վարդապետի պատմածին նայելով եմ արել, որ ասում է Եղիշէից և Փարպեցիից վեր առած Հայոց պատմութեան Բ. հատորին Ե. գլխին և 43 երրորդ երեսին մէջ։

«Իրրև տարածեցաւ լուր այսր զոլծոյ յաշխարհս Հայոց, ամենեքին առհասարակ զինու վառեալք՝ հասանէին անդր, ընդ որս և կանայք ոմանք սուր ածեալ «ընդ մէջ՝ վասն ի ձեռին և սանդարամ ի գլուխս՝ պատրաստեալք ի պատերազմ, «այլ և եպիսկոպոսք և քահանայք բազում յոյժ. ևս և նա ինքն Յովսէփ կաթո«ղիկոս՝ դիմեալ ելին անդր ի յորդոր քաջութեան։ Եւ ևս բազումք ի նոցանէ՝ «որք ի բանակին էին ընդ մոգպետին՝ քահանայք և ժողովուրդք, զատեալք ի բա«նակէ անտի՝ անկան ի քաղաք անդր և եղև ամբոխ բազմութեան մեծ յոյժ»։

Միւս նախարարներն, ինչպէս են Մանաճիհր Ռշտունի, Ատոմ Գնունի և այլն, որոնք երկրորդական անձինքներ են ներկայացնում ողբերգութեանս մէջ, նոյնպէս նրանց մասին Զամչեան Միքայէլ Վարդապետն այս կերպով է պատմում այս դէպքին մէջ։

«Զայսպիսի գործ Յազկերտի տեսեալ երկուց ի նախարարացն Հայոց, Ատոմայ Գնունւոյ, և Մանաճհրի Ռշտունւոյ, որք էին արք երևելիք և պատուեալք «առաջի արքայի, և գիտացեալ՝ թէ այս հուր օր ըստ օրէ առաւել ճարակի և թէ «յաւուր միում հանդերձեալ է Յազկերտ և զինքեանս ստիպել յուրացութիւն հա«աւատոյ, առին զիւրեանց զառանձինն զօրս և մեկնեցան զանխոյլ ի տեղւոջէ ան«ատի, ընդ որս էին և Վարս Սեղոհ յոստանեայ տանէ և Ներսեհ Երուանդունի «և Վարձաւոր Արծրունի։

«Իրրև լուաւ Յազկերտ զիսխուստ սոցա, զայրացաւ անհնարինս՝ և կամե«ցաւ առնել վրէժ ի նոցանէ, բայց զի մի զայրացուցէ զսիրտ այլոց զօրականաց Հայոց՝ որք առ իւր էին, զրեաց նենգութեամբ թուղթ ողոքական առ Ատոմ և առ ընկերս նորա, այսպէս.

«Յազկերտէ յաստուծոյ հաւատարէ՝ արքայից արքայէ՝ առ սիրելի ծառայդ, «առ սպասդ և առ ռամիկ հնձեալդ Հայոց, որ ի մարզէ ասի մեկնեցայք, ողջոյն հասցէ ի մերմէ Տէրութենէս։ Յիշեցաք զվաստակս ձեր և զքաջութիւն՝ որ «առ թշնամիս մեր. և կամիմք մեծաւ պատուով հոխութեամբ արձակել զձեզ «յաշխարհ ձեր, զի տեսեալ եղբարցն ձերոց՝ առաւել փութացին ի մեր ծառայու«թիւն, միայն զի փութով հասանիցիք առ մեզ։

«Զայս թուղթ եւ Յազկերտ ի ձեռս միոյ ուրուք ի հաւատարիմ ծառայից իւրոց «և փութապէս արձակեաց զկին Ատոմանց, և նորա հասեալ առ նոսա ի միջոց «սահմանակցութեան աշխարհին Հայոց և Պարսից՝ մատոյց նոցա զթուղթն և յոր«գորեաց զառանալ յետս։ Իսկ նոքա յայտնի գիտելով զհնարս թագաւորին՝ ոչ կա«մեցան անսալ նմա. զիտեմք ասեն՝ զի կայ մեզ առաջի վտանգ հոգւոյ, վասնորոյ «և ոչ կամիմք դառնալ։ Յայնժամ վաղվաղուն դարձ արարեալ պատգամաւորին, «ծանոյց Յազկերտի զմիտս նոցա։ Եւ նա նոյնժամայն առաքեաց առաւար գունդ «մի յիւրոց անտի դնալ զհետ Ատոմանց մինչև յաշխարհն Հայոց, և եթէ ոչ հա«աւանեսցին դառնալ, մահու սպանցեն զնոսա։ Հասեալ զնդին ի Հայս՝ լուր տուին, «թէ Ատոմ ընկերովք իւրովք և Մանաճիհր այլովքն հանդերձ շրջին յանապատ «տեղւոջ ուրեք յաշխարհին Վասպուրականի ի կողմանս Անձևացեաց. դտեալ ա«ապա իւրեանց զոք առաջնորդ և մատնիչ՝ դիմեցին զհետ Ատոմանց։

«Իսկ Ադամ և ընկերք իւր՝ որք դեղերէն ի դաւառն Անձևացեաց, ընկալան «յայտնութիւն ի կրօնաւորէ միոջէ սրբոյ եթէ հանդերձեալ են մարտիրոսանալ։ «Եւ ապա ի բանակիլ նոցա ուրեք՝ եռեռ Ադամ նախարար տեսիլ սքանչելի։ զի «ձգեցաւ լուսեղէն կամար ի վերայ գնոցին իւրոյ և զօրավարացն՝ որ ընդ նմա, և «այր մի լուսաւոր բաշխէր պսակս ամենեցուն՝ բոլոր ի կարմիր վարդից։ Զայս «տեսեալ նորա պատմեաց ամենեցուն՝ որք ընդ իւր էին և նոքա սկսան ուրախ «գնիլ։ և ասեն։ երանի է մեզ, զի փոխանակ պսակելոյ յերկրաւոր և ի բռնաւոր «թագաւորէ՝ պսակիմք յերկնաւորէն։ Զայս ասացեալ՝ կացին յաղօթս ցնծու- «թեամբ սրտի։

«Եւ մինչ դեռ յայսմ ուրախութեան էին, հասին Պարսիկք ի վերայ։ և նոցա տե- «սեալ զայն՝ զէն հանին պատերազմել ընդ նոսա։ Ցայսմ վայրի դարձեալ երևե- «ցաւ ամենեցուն նոցա տեսիլն այն, զոր տեսեալ էր Ադամ։ յայն հայեցեալ նո- «ցա ընկեցին զզէնս իւրեանց։ Իսկ Պարսիկք սկսան ստիպել և փութացուցանել «զնոսա դառնալ յետս, և հնազանդիլ Յազկերտի, և ուրանալ ևս զհաւատս, բայց «միրև տեսին՝ թէ նոքա հաստատուն կան, սուր հանին ի վերայ նոցա կոտորել ըզ «նոսա։ և նոքա ցնծալից ուրախութեամբ մատնեցին զանձինս իւրեանց ի զենու- «մն, ուր նա ինքն երանելին Ադամ նախ մատոյց առաջի զորդի իւր զՎարոս և «ապա զինքն բոլոր գնդաւն։ Մի ոմն ի Պարսից տեսեալ անդանօր զտեսիլ պսա- «կաց սրբոցն՝ ինքն ևս հաւատաց ի Քրիստոս, և խառնեալ ի զունդ նոցա՝ նահա- «տակեցաւ ընդ նոսա։

«Իսկ Մանաճիր հանդերձ գնդաւ իւրով գնայր ի Ռշտունիս, առ որս հասեալ Պար- «սիցն՝ կոտորեցին և զնոսա յոչխարանոցն ըստ նմին օրինակի։ Ի նահատակել սո- «ցա կրօնաւորն այն՝ որ գուշակեալ էր զմարտիրոսութիւն սոցա, առեալ յԱստու- «ածոյ զյայտնութիւն վասն մարմնոյ երանելեացն՝ ապէ արար եպիսկոպոսին։ և ան- «նա եկեալ ուխտին և այլ բազմութեամբ թաղեաց զնոսա, և շինեաց վանս, որ «կոչեցաւ Ոչխարանից վանք»*։

Եւ մի առանձին յատկութիւն, որ ջանք արի տալ իմ ողբերգութեանս, այն է՝ որ բոլորովին զանց արի նրա մէջ թագուն բանասարկութիւններ և սիրահարութիւններ խառնել, ինչպէս սովորական է Եւրոպական թատերց մէջ, մինչայն հայրենեաց և եկեղեցւոյ սիրոյ անհնարին յուզմունք տալ կամեցայ իմ դիւցազանցս իրանց այլևայլ մարմնաւոր և երկրաւոր սիրոյ կրիցն իրանց յաղթել տալով։ Եւ նայեցայ, որ հատուածս աւելի նկարագրական քան թէ բանաստեղծական։

Սրանք են, իմ պատուական բարեկամ, այն տեղեկութիւնքն, որոնք յարմար դատեցի ձեզ տալով՝ նրանցից ևս մասն հանել նաև իմ ընթերցողացս։

Ձեր մտերիմ և անկեղծ բարեկամ

Մարկոս Աղաբէկեան։

---

* Հայոց Պատմ. Հատոր Բ. գլ. Դ. եր. 20 և 21։

ԳԱՐԵԳԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԵՆԶԻՆՔ

ԱՏՈՎՄ ԳՆՈՒՆԻ
ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆԶՏԵԱՑՑ
ՄԱՆԱՃԻՀՐ ՌՇՏՈՒՆԻ } Նախապարք
ՎԱՐՍ ՍԵՊՈՒՀ . . . . Յոստանեաց տանէ ։
ՆԵՐՍԵՀ ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻ
ՎԱՐՁԱՒՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ } Ազատանի ։
ՂԵՒՈՆԴ
ԽՈՐԷՆ } . . . . . Երէցք ։
ՄԻ ԿՐՕՆԱՒՈՐ ԾԵՐՈՒՆԻ
ՎԱՐԴԱՆՈՅՇ . . . . Մայր Գարեգնի
ԵՐԱՆՈՒՀԻ . . . . . Քոյր Գարեգնի ։
ՄՈՒՇԵՂ . . . . . Դաստիարակ և վերակացու տան Արուանձտեայց
ՄԻ ԿԻՆ . . . . . Դայեակ Երանուհոյ ։
ՑԱՂԿԵՐՏ . . . . . Թաղաւոր Պարսից ։
ԴԵՆՊԵՏՔ և ՄՈԳՊԵՏՔ
ՁՕՐԱՎԱՐՔ և ՁՕՐԱԿԱՆՔ
ԴԱՀԻՃՔ
ՁԻՆՈՒՈՐՔ
ՍՊԱՍԱՒՈՐՔ

Դէպքը պատահում է Հայաստան և Պարսկաստան
Յիսուսի Քրիստոսի 449 թուականն ։

Տեսարանն է Բաղրեւանդայ դաւառին մէջ Բաղուան քաղաքում Գարեգնի հայրենական ապարանաց մի դահլիճի մէջը, որն որ մի զմբէթով է ծածկուած, մէջ տեղից ունենալով մի բոլորակ լուսամուտ, ուրտեղից լուսաւորւում է դահլիճը ։ Դահլիճն է վէց անկիւնի կիսաշրջանով, ունենալով երեք կամարաւոր դռներ, մինը մէջ տեղը՝ երկուսը երկու կողմից, զարդարանքներն են պատերին կախ արած նախնեաց պատերազմական զէնքեր և հագուստներ, սաղ և անդ ահագին հնաձև աթոռներ ամէջ տեղը մի սեղան, որու վերայ մի փայտեղէն խաչ, մի երկապլուխ սուր և մի սուրբ գիրք է դրուած ։

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻԼ Ա.

Նախարարք և Ազատանի կիսաբոլոր կանդնել են երէցներու աջ և ձախ կողմերը, Գարեգինը ներս է մտնում և ողջոյն տալուց ու առնելուց յետոյ սկսում է խօսել։

ԳԱՐԵԳԻՆ

Երէ՛ց եք և նախարարք, սեպուհ ազատանի,
Պաշտպանք, աղատարարք, մեծին Հայաստանի.
Բարի էք եկել իմ մօտ, ինչ լուր պիտանի,
Ստիպել է ձեզ տեսնել ինձ պէս պատանի.
Զընի թէ վերջապէս մի բօթալի համբաւ
Մեծին Վարդանայ ականջն եկաւ հասաւ.
Թէ Պարսկաստան Յունաստանի հետ խառնվեցաւ,
Թէ բիւրաւոր զօրքով Յաղկերտ Կարին զարկաւ։
Տէր հայրե՛ր, ձեզ եմ հարցնում,
Ի հարկէ դուք էք իմանում.
Ինչ որ այսօր անց է կենում
Պարսից, Յունաց աշխարհներում։
Նախարարնե՛ր և սեպուհնե՛ր,
Ազատանի՛ և ասպետնե՛ր,
Գիտէ՞ք, քանի՞ դաւաճաններ
Յաղկերտ պաշտօնի է հասցրեր։
Գիտէ՞ք, որ ասում են, թէ Վասակ Սիւնին ինքն է սպանել
Իր հօրեղբայր Վաղինակն ու նրա տեղն է յափշտակել.
Յաղկերտի թելադրութեամբ Սիւնեաց իշխան է դառել,
Որ մի օր անշուշտ Հայոց վրայ կարող լինի եւս տիրել։

ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ

Գարեգին, իմ ազնիւ որդեակ, դուք նախարարք, աղատանին,
Ականջ դրէ՛ք, ասեմ ես ձեզ, Յաղկերտ արքայն Պարսկաստանին
Հրաման է տուել իր սիրելւոյն՝ Միհրներսեհ մարզպանին,
Բիւր բիւր զօրքով դնայ սիրէ Բագրեւանդայ դաւառին։
Իսկ ինքն Յաղկերտ կատաղաբար դիմել հասել Կարնոյ վրայ,
Քանդել ու աւրել է երկինքն ու երկիր տակնուվերայ.
Ձեռքն ու ոտքը սրբապիղծ, ինքն անօրէն արիւնլուայ,
Ընդունել է կայսեր ողջոյն ի ձեռն մեծին Անատոլայ։

Ա.յսպէս, իմ որդեակներ, Ցաղկերտ վայրենամիտ, անբարտաւան
Ցետ է դարձել Ջարդ և բուրդ արած ամէն քաղաքն ու աւան.
Նոր օրէնք, նոր քարոզ է հանել իր մոգպետաց խիստ հաւան,
Մաքու�է դրել, որ ազգ և ազգնք բոլորն իրան հաւատան:
Ի՞նչ էք ասում, տագնապ, սարսափ Հայոց աշխարհին չի՞ սպառնում,
Հայաստանեայց Եկեղեցին վտանգի մէջ չի՞ դտնուում.
Ժամ է, ժամ է պատանիք իմ, քարոզ կարդալ Եկեղեցում,
Թէ սէր կրօնի, թէ սէր ազգի միշտ մեզ յերկիս են վերացնում:
Եթէ հոգի, եթէ մարմին, եթէ վարք, բարք միաբանին,
Ի սէր կրօնի, ի սէր ազգի արիաբար պատերազմին,
Պաշտպանելով Հայրենիքն ու եկեղեցի Աստուածային,
Ըստ Ցիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ պատուիրանին:
Արթուն կացէք, պատրաստ եղէք արևելքից ու արևմուտ,
Սև ամպեր, սև անձրևներ լոյս կրօնն մեր անում են մութ.
Մոգպետութեան, դենպետութեան, երբ թագաւոր լինի հմուտ,
Ողջ աշխարհիս, ողջ մարդկերանց տիրապետել է հետամուտ.
Ժամ է արդ, ժամ, որ վտանգից մեր աշխարհն մենք ազատենք,
Հոգւով մարմնով, բանիւ սրով Եկեղեցին մենք պաշտպանենք,
Մեր արիւնը, մեր քրտինքը նրա փրկութեան համար թափենք
Սուրբ խաչն, որ մեր դրօշն է, մեր աշխարհի մէջ տեղ կանգնենք:
Մեր աշխարհին թշնամիքը, Բիւզանդիոնն ու Պարսկաստան,
Սուրբ ուխտ, սուրբ դաշն նախնեաց մերոյ, ոչ պահեցին անսասան.
Հաւատալով և մենք նրանց կեղծուպատիր սուտ մուտ խոստման,
Բաժանեցինք մենք մեր ձեռամբ մեր ազնիւն ու մեծն Հայաստան:

Կայսրն Ցունաց Բիւզանդիոնում,
Արքայն Պարսից ի Տիսբոնում.
Հպարտ, հպարտ զոռոզանում,
Թէ ով նրանցից կարողանում,
Հայոց մեծաց աշխարհն ջնջել,
Եկեղեցին ուխտից քակտել.

Ինչպէս աշխարհս կամին ջնջել,
Նոյնպէս հոգւոց տիրապետել.
Այսպէս, իմ որդեակք սիրեկանք
Այս երկու մեծ բռնակալք
Իրար արիւնռուշտ ոխակալք,
Եղել են մեզ մեծ ինքնակալք:
Պակայն թէ մինը, թէ միւսն իրանց նըպատակին համար,
Կորուսին զօրք, կորուսին փող, պատերազմելով մեզ համար.
Միոյն, միւսին կորուստն ու վնասն է եղել անհամար,
Մարտնչելով իրարու հետ տասը տարի կատաղաբար:
Մեր աղօթքը, մեր մաղթանքն ուղղենք Բարձրելոյն Աստուծոյ,
Դու Տէր հըզօր Հայաստանեայցդ Եկեղեցին պահեա, կեցո.
Անիրաւի, բռնակալի որոգայթից մեզ ապրեցո,
Հաստատելով մեզ մեր ուխտին Քրիստոսի Եկեղեցւոյ:
Բիւզանդիոն սարսափումէ Եւրոպիոյ ազատ հոգուց
Արեաց աշխարհս տատանումէ բռնաբարոյ խուժ դուժ մոգուց.
Մեծըն Վարդան, տէր մեր Յովսէփ միաբան են դիտեմ վաղուց,
Եկեղեցին Հայաստանեայց պահպանելու ամէն զէնուց,
Բայց աւաղ, ողբամ մեր վրայ, ահա իշխան Վարազվաղան,
Սիւնեաց իշխանին Վասակայ ուրացող անօրէն փեսան
Դիմումէ առ Միհրներսէհ, լինել բանսարկու, դաւաճան,
Տապալել Վասակն իր անէրըն ու թաւալել Հայաստան.
Բաւ է արդ իշխանք, որ մենք մեր անողորմ ու անգութ ձեռքով,
Զարդ և բուրդ, ցիր և ցան անենք մեզ մենք մեր սրովն ու հրով.
Մռռանանք Պապն ու Արշակը, Արտաշէսն ու Խոսրով,
Իրանց այլևայլ սրբապիղծ ու ազգակործան գործքերով:
Միայն մեր հայրենեաց, միայն մեր Եկեղեցւոյն
Միայն Հայոց ազգին հարազատ բուն որդւոյն
Աղատութեանը վրայ խորհինք օրն ի բուն,
Որպէս զի և մենք մի օր լինինք տեղ և տուն

ԽՈՐԷՆ ԵՐԷՑ

Քաջ խօսեցար, Ղևոնդ եղբայր իմ հոգևոր,
Ներիր և ինձ և ես խօսիմ իբրև զինուոր.
Եկեղեցւոյն և հայրենեաց մեր երկնաւոր,
Ի՞նչ տառապանք, ի՞նչ հալածանք կրեցն այսօր:

Որդի եմ ես սնեալ, օրհնեալ մեր հայրերից,
Որոնց հոգին էր սիրաշունչ Աստուածանից.
Լուսով սիրով փառաւորուած անհուն երկնից,
Սակայն նրանք հալածուեցան մեր ամէնից.
Ա՜խ մենք ամէնքս երկպառակ ենք, երկպառակ,
Կորուսինք դահ, կորուսինք թագ աննըպաստակ.
Վայելումենք կեանք և վիճակ մեզ հակառակ,
Եկեղեցին աշխարհիս հետ է աւերակ.
Մինթէ և դուք, ազատանի և նախարարք,
Պիտի լինիք իբրև ոմանց խրոովարարք.
Չէք տեսնում որ, խուժ դուժ ազգեր ու բռնակալք,
Հալածումեն եկեղեցին ու մեր աշխարհք.
Ի՞նչ օրինօք, ի՞նչ ասելով Պարսիկները մեզ են տիրել,
Մեր երկրումը, մեր դաշտումը գաղթականներ են հաստատել.
Երասխի մօտ, Բաղուանումը ատրուշաններ են կանգնեցրել,
Մեր կանայքը, մեր որդիքը մոգպաշտութեան են դարձրել:
Չի հաւատանք նրանց մեծ մեծ խաբեպատիր խոստմունքնե-
ին,
Այսօր սիրող, էգուց ատող պիտի լինին մեր ամէնին.
Իբրև գերի, իբրև ստրուկ միշտ հանապազ մեզ հետ վարուին,
Ինչպէս արին ազգաց ոմանց՝ արևմտեան, հիւսիսային:
Չի հաւատանք, ասում եմ ես, նրանց խօսքին ու օրէնքին,
Անհաւատ են, անկրօն են, ըստ օրինաց Զրադաշտին.
Դաւ են լարում, հնարք են ճարում տիրապետել տիեզերքին,
Ընդդէմ խաչի, ընդդէմ անուան Տեառն մերոյ Քրիստոսին:
Եւ այն ասեմ ես ձեզ, իմ սիրելիք որդեակք,
Ցաղկերտ կանչում է ձեզ ի դուռն անդ պահակ.
Այրուձին միատեղ, նոյնպէս և հետևակ,
Զօրքերն Հայոց դիմեն անդ միայնակ:
Առանց մեր նախարարաց առաջնորդութեան,
Երթան պատերազմին ի Ճորայ, ի Քուշան.
Այս դաւն Վասակայ է, կամ թէ Վարազվաղան
Խորհուրդ է տալն միշտ արքային անպիտան:
Որ Հայոց նախարարք բաժնելով զօրքերից,
Անզօր, անօգնական, չապստամբեն Պարսկերից.

Եւ այս ինչ իրաւամբ, հարցնում եմ ձեզանից,
Ասէք ինձ, խնդրում եմ, բաժնեց ձեզ այրուձիից.
Ո՞չ ապաքէն Վասակ, իր մտքումն է դրել,
Ջնջելով նախարարքը կարող լինի տիրել
Բոլոր Հայաստանին Նրան միայն տէր ասել.
Մի՞թէ պէտք է տանինք և թողունք Նրան իշխել:
Ձեզ եմ ասում, իմ նախարարք,
Ձեզ եմ ասում, ազատանիք.
Եթէ մենք և դուք միանանք,
Կըսարսափին մոգքն ու արիք:
Դու, իմ ազնիւ Դարեղին,
Դու, իմ մտերմին որդին.
Ցաւագին է ցաւագին,
Թողնուլ քոյր, մայր առանձին:
Սակայն հարկն է պահանջում.
Տէրըն մեր է վարձատրում.
Ով որ իր համար կըռուում,
Ով որ իրա պէս խաչում.
Դու, Ատոմ Գընունի,
Որդի իմ սիրելի.
Ըսա քաջ օրինակին
Մեր սրբոյն Տրդատին:
Դու, Սեպուհ Ոստանի,
Մանաճիհը Ռշտունի,
Ներսեհ Երուանդունի,
Վարձաւոր Արծրունի.
Տուէք ձեր աջերն ինձ,
Խոստացէք այժմ ինձ.
Պիտ՝ աչատէք
Եկեղեցին.
Պիտ՝ պաշտպանէք
Հայոց ազգին.
Քաջալանջ,
Քաջութեամբ,

Նորասքանչ
Արիութեամբ.
Այո՛,
Թէ ոչ
Եղէք
Միշտ ողջ։

Ամէնքն խմեսին բացի Ղևոնդ երէցից, որ բաղկասարած աղօթք է անում, միարերան դոչումեն։

Այո՛, այո՛, ի՞նչպէս թէ ոչ,
Պատրաստ ենք մենք ամէնքս ողջ.
Յառաջն առնել բռնաւորին,
Հալածողին մեր սուրբ կրօնին.
Այո՛, այո՛ և ոչ թէ ոչ,
Կերթանք և մենք ամէնքս ամբողջ.
Մոգպետներն արտաքս վանել,
Բագիններըը քանդել, աւրել
Այո՛, այո՛ Ղևո՛նդ, խորէ՛ն,
Օրհնեցէ՛ք մեզ իսկ այսօրէ՛ն.
Մեր երկայրի թուրն ու սուրը,
Քանդեն նրանց ջուրն ու հուրը։

ԽՈՐԷՆ ԵՐԷՑ

Այսպէս, ով որդեակներ և մեր նախարարներ,
Զէ՛ք լինիլ ասպետներ և քաջ զօրականներ,
Եթէ լոյս, եթէ յոյս ձեր հոգին չեն շնչեր,
Եթէ կրօն և հաւատ ձեզ երբէ՛ք չեն տուեր։

ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ

Օրհնեալ լինիք, օ՜ճեալ լինիք, Սամուէլի օրհնութեամբ,
Արի լինիք, հրաշալի լինիք Դաւթի մեծի քաջութեամբ.
Տէր մեր ինքը փառաւորէ, քաջալերէ ձեր հոգին,
Տէր մեր ինքը ուժգնութիւն, զօրութիւն տայ ձեր բազկին։
Պատրաստ կացէ՛ք մեր սուրբ կրօնին աստուածային զօրութեամբ,
Ճամբայ ընկէ՛ք վաղուան օրը ամէնքնիդ մի քաջութեամբ.
Առաջն ելէ՛ք մեծ արքայի, Պարսկաստանի տէրութեան,
Զարթուն եղէ՛ք մոգպետներու մոգպաշտական դիւթութեան.

Զբնի թէ ձեզ ոմանց նրման պատրեն, խաբեն, համոզեն,
Որոգայթով իրանց կրօնին որսան տանեն դարձնեն.
Մերթ ահ ու դող, աքսոր, պատիժ, տանջանք և մահ սպառնան,
Մերթ հարկ, պատիւ, փառք, աստիճան, պաշտօն և շահ խոստանան:

Եթէ երբէք այս խօսքերով թագաւորը ձեզ տանջէ,
Եթէ երբէք այս կերպերով թագաւորը ձեզ պատուէ,
Մի՛ հաւատաք նրա խօսքին, կեղծաւոր է կեղծաւոր,
Զգոյշ կացէք նրա դաւից, նենգաւոր է նենգաւոր:
Արիք որդիքս, յուղի ընկէք, Աստուած ձեզ հետ է ձեզ հետ,
Զարթիք արդիքս, յուշի բերէք, այս հողս մեր երդն է մեր երդ.
Եկեղեցի և գերդաստան, արքայութիւն, ընտանիք,
Ձեզ թող լինին մի ապաստան ժառանգութիւն, հայրենիք.
Սէր ընտանեաց, սէր հայրենեաց թող ձեզ շնորհեն սուրբ պապ,
Ցաղգաց յաղգս ձեր սերընդոց անմահական է կրտակ.
Արդ ուրեմն, խորէն երէց, Աւետարանն, ժամադիր,
Պատրաստ արա վաղուայ համար, որ եղել ենք ժամադիր.
Օրհնենք այժմէն եկեղեցւոյն քաջ զինուորաց և արանց
Օրհնենք արդէն Հայաստանեայն մեր հայրենեաց պաշտպանաց.
Արիք քաջաղն նախարարներ, մերկացրէք ձեր թրերը,
Արիք մեծազն ազատանիք, արիացրէք ձեր սրտերը.
Այս սուրբ խաչով, այս սուրբ դրքով օրհնում ենք ձեր թուրն ու սուրը,
Այս սուրբ խաչն, այս սուրբ դիրքը լինի միշտ ձեր լոյսն ու հուրը.
Երթաք և դուք խաղաղութեամբ և Տէր Յիսուս ընդ ձեզ լինի,
Երթանք և մենք խաղաղութեամբ և սուրբ հոգին ընդ մեզ լինի:

(Երէցները դուրս են գնում):

ՏԵՍԻԼ Բ.

ԳԱՐԵԳԻՆ, ԱՏՈՎՄ, ՄԱՆԱՃԻՐ ՆԱԽԱՐԱՐՔ, ՎԱՐՍ ՍԵՊՈՒՀ, ՆԵՐՍԵՀ, ՎԱՐՋԱՊԵՏ ԱԶԱՏԱՆԻ:

ԱՄԷՆԲԵՆ Ի ՄԻԱՄԻՆ ԱՌ ԳԱՐԵԳԻՆ

Գարեգին, յիրաւի մաքումդ ես դրել,
Մեզ հետ խմիասին յաղկերսին դէմ ելնել:

ԳԱՐԵԳԻՆ

Անշնչաշտ՝ մի՞թէ չէք իմացել տակաւին դուք,
Որ ես ի վաղուց եմ արել հաստատուն ուխտ։

ՍՏԵՓԱՆ

Դո՛ւ, իմ Գարեգին, ուխտ ես արել դընալու,
Մայր՝ քոյր՝ տուն՝ տեղ անտէր՝ առանձին թողելու։
Մոռանո՞ւմ ես՝ որ դու տանըն Սըրուանձտեայց՝
Մեծի ցեղին մեր համօրէն Հայաստանեայց՝
Միմիայն անդրանիկ՝ հարազատ որդին ես։

ԳԱՐԵԳԻՆ

Եւ դու չի՞ս իմանում՝ որ ատում եմ և ես
Վասն արանց տէրութեան՝ օրէնքներն ու զէնքը։

ՎԱՐՍ

Եւ ես նոյնպէս նրանց բանակն ու սպառազէնը։

ՄԱՆՍԱՃԻՀՐ

Արդ դուք քաջալն աղատանի՝ ինչէք խորհում՝
Միտք ունիք մեզ հետ գընալ արեաց աշխարհում
Դէմ յանդիման կալ Պարսից Ցաղկերտ արքային։

ՆԵՐՍԵՀ ԵՒ ՎԱՐԶԱՒՈՐ

Մենք պատրաստ ենք վաղուց ըստ հարց պատուիրանին
Մեր եկեղեցւոյ ուխտին հաստատուն մընալ՝
Կեանք՝ անուն՝ ստացուածք նրա փառացը տալ։

ԳԱՐԵԳԻՆ

Արդ՝ ինչո՞ւ այսպէս երկայն ու բարակ՝
Խորհուրդ էք անում դուք աննպատակ։
Ես վաղուց անտի մտքումս եմ դրել՝
Գանդել՝ կործանել՝ բնաջինջ անել։
Անօրէն Պարսից ատրուշանները՝
Փրկել արեամբս մեր աշխարհները։
Երթանք սիրեկանք՝ յաղթենք մոգերուն՝
Ցոյց տանք աշխարհիս քրիստոնեաներուն
Մեր եկեղեցւոյն փառքն ու պարծանքը՝
Մեր արիական մեծ յաղթանակը՝

Այո՛, այս իմ կոչումն երկնային է,
Չի կատարեմ ես անհնարին է.
Փառք տամ քեզ Աստուած, Տէր Ամենակալ
Որ ինձ ես ընտրում թշնամւոյդ դէմ կալ.
Փորձիր իմ հաւատս, զօրացուր իմ սիրտս,
Երկնային պսակ կապիր իմ գլխիկս։

ԱՏՈՎՄ

. . . . . Գարեգին,
Փորձանք ես պատրաստում դու մեր գլխին.
Աստուածային հուր և հայրենեաց սէր,
Վառելով հոգիդ՝ արել են քեզ տէր.
Հոգւոյդ յուղմանցը աղատ կամացըդ,
Սանձ, չափ, միտք, ուշք դիր, նկատիր դիմացըդ,
Որ Ցազկերան է մոգերով պաշարուած,
Անթիւ զօրքերով գենուած, զենուորուած։

ԳԱՐԵԳԻՆ

Ես նուիրել եմ ինձ հոգւով և մարմնով
Զինուոր Քրիստոսի լինիլ անվրդով.
Գնալ Ցազկերտին դէմ յանդիման կալ,
Մի ըստ միոջէ սուրբ գիրքը կարդալ.
Գուցէ ահ և մահ, գուցէ հուր և սուր
Գլուխս տանեն, մարմինս անեն կուր.
Փոքր է այս զոհս սուրբ եկեղեցւոյն
Յիսուսի Տեառն մեր Որդւոյն Աստուծոյն։

ԱՏՈՎՄ

Վա՛յ մեր գլխին է, թէ դու Գարեգին,
Այդպէս անվրդով, այդպէս մոլեգին
Դէմ յանդիման կաս կատղած արքային՝
Մոգաց, մոգպետաց, Որմզդայ դենին.
Մեղ պատառ պատառ գազանաց առջև
Կերակուր կանէ կամ զոհ, կամ պարգև.
Վատ արանց բարք չէ իմաստուն լինիլ,
Ըզգաստ և ըզգօն խօսք և կերպ սորվիլ.
Մի՞թէ չես ուզում ինձ սկանջ դընել.

ԳԱՐԵԳԻՆ

Ո՛չ, ո՛չ հարկ չէ ինձ ուրիշ կերպ անել,
Այլ պէտք է դիմեմ մոգպետաց յառաջ,
Բարբառիմ աղաւ և կամ քաջալանջ։

ՄԱՆԱՃԻՀՐ

Բայց լաւ ևս է կալ հանդարտ և հեզ։

ՎԱՐՍ

Բայց պարտք ևս է դիմանալ և մեզ։
Լինիլ անվեհեր, լինիլ ախոյեան,
Քրիստոնէից և տան Թորգոմեան։

ԱՏՈՎՄ

Բայց մահն ևս պէտք է արհամարհել,

ՎԱՐՍ

Երկնային Թագին արժանի լինել։

ԳԱՐԵԳԻՆ

Միայն նահատակ, միայն քաջ զինուոր
Լինելով ուխտին, կըլնինք երկնաւոր։
Տէր մեր է բացել երկնից դռները,
Տէր մեր է վառել մեր հոգիները։
Լոյս հաւատ, սուրբ կրօն պաշտենք ամենքնիս,
Որ տուել են մեզ մեր սուրբ հայրերնիս։
Քրիստոնեայ ենք մենք շնորհօք Աստուծոյ,
Հարազատ որդիք մեր եկեղեցւոյ։
Ով երկնչում է վտանգից, մահից,
Վատն ու անարին է նա մեր ամէնից։

ԱՏՈՎՄ

Քո անգին կենացդ ամէն մի բոպէն
Մի՛ բառնար, Գարեգի՛ն, նախնեացդ տանէն։
Հարկ է, որ ապրիս քո ազգի համար,

ԳԱՐԵԳԻՆ

Արիւնս կըթափեմ նրա կենաց համար։

ԱՏՈՎՄ

Մի՞թէ դու Գարեգին աչքդ ես առել,
Բայց ես դողում եմ տանջանքներ կրել։

ԳԱՐԵԳԻՆ

Մի վախիր Ատոմ, Աստուած մեզ հետ է,
Պաշտպան է նրանց, որ յոյսը դրել է.
Միայն Աստուծոյ . . . . . .

ԱՏՈՎՄ

. . . . և սուրբ եկեղեցւոյ :
Բայց ինքն իրանից մի առաքինի,
Երբ միայն ինքն իրան կապաստանի,
Մի՞թէ քաջութիւն կընի արածը.

ԳԱՐԵԳԻՆ

Ցայց է տալի ինձ, այդ ձեր ասածը,
Որ ձեր հոգին, սիրան սառել է սառել,
Բայց իմ սուրբ ուխտն է, փութալ շտապել.

ԱՏՈՎՄ

Բայց Աստուած ինքն անդամ վարանեցաւ,
Այն մահուան առաջն, որ փառաւորեցաւ.

ԳԱՐԵԳԻՆ

Սակայն չարչարեցաւ և խաչեցաւ,
Ցետ երկք օրից յարութիւն առաւ.
Արի պատարագ և մի սուրբ սեղան
Կանգնեցնենք նրա փառաւոր անուան.
Մի կողմ թողունք հայր, մայր, քոյր և եղբայր,
Լինիլ նախարար, տէր և աւագայր.
Ցաւ է ինձ, Ատոմ, ճշմարիտն ասեմ,
Որ քեզ անտարբեր, սարսափած տեսնեմ.
Մի՞թէ մենք միկրտուած մի աւազանում,
Մի հաւատ, մի կրօն չենք դաւանում.

ԱՏՈՎՄ

Իրաւ է ասածդ, աղնիւ Գարեգին,
Բայց իմ վիճակն է կարի ցաւագին.
Շընորհք, հաւատ, սէր և միրտութիւն,
Տալիս են հոգւոյդ մի վեհ քաջութիւն.
Իսկ ես մեղաւորս, զուրկ սուրբ շընորհաց,
Տշանապու�է միշտ իմ սիրտ անիմաց.

Երբ ես մեծ դիպուած, կարևոր արկածք
Հանդիպում է ինձ յանդիմտ ու յանկարծ,
Կարծում եմ անել է ու անհնարին,
Դէմ դնել յաղթել նրանց հարուածին.
Այս ինձ պատիժ է իմ մեղայ համար,
Որմէ վախում եմ իբրև այր վատթար.
Բայց Տէրն մեր Աստուած, որոյ վրայ է իմ յոյս,
Քեզ օրինակ կարդեց ինձ անտարակոյս.
Հոգի, սիրտ տուիր ինձ, կարիճ Գարեգին,
Ըզգում եմ երակումս արիւնս ուժգին.
Արդ խաղանք գնանք անօրինին դէմ,
Եւ քարոզ կարդանք նրա դենին դէմ.
Աղղեր և աղինք լսեն, իմանան,
Հոգւով և սրտով պինդ արիանան.

ԳԱՐԵԳԻՆ

Փառք քեզ Տէր Աստուած, մեզ միշտ ողորմիր.
Մեր ուխտի վրայ միաբան պահիր.
Եկեղեցւոյ սիրոյն մեզ հաստատիր.
Ա՛հ աղնիւ Աստվա՛ծ և դու քա՛ջ ուսիր,
Վահհոգի, պինդսիրտ, անվեհեր լինիլ.
Երկնային թագի արժանի լինիլ.
Ուրախ և ղուարթ երանի կարդամ,
Լոյս արդունք աչքերս քեզ վրայ կողբամ.

ԱՄԷՆԲԷՆ Ի ՄԻԱՍԻՆ

Բա՛ւ է արդ, բա՛ւ է ժամանակն եկել,
Գնա՛նք մեր ուխտած պատարագն անել.
Ահա՛ լուսին և աստեղք երկնքում,
Փայլում, պսպղում, մեզ են նկատում.
Գնա՛նք, գնա՛նք մեր ամէն քրիստոնէից
Դրօշակն ազատենք թշնամիներից.
Դիմե՛նք, դիմե՛նք նրանք ոտընհար անենք,
Ատրուշաններրը վերնիվայր անենք.
Զոհենք մեր կեանքը, թողնենք մեր տունը,
Փառաւոր անենք Տիրոջ անունը:

Ամենքն խմիասին գնում են բացի Գարեգնից, որ նրանց դէպի դուռը ուղեկից լինելու միջոցում իր մայրն ու քոյրը ներս են մտնում:

ՑԵՍԻԼ Գ.

ԳԱՐԵԳԻՆ, ՎԱՐԴԱՆՈՅՇ, ԵՐԱՆՈՒՀԻ

ՎԱՐԴԱՆՈՅՇ

Գարեգին, իմ որդեակ, ճիր, ճիր ես գնում, ճիր,

ԵՐԱՆՈՒՀԻ

Գարեգին, իմ եղբայր, ճամն ես թողնում քո քուր.

ԳԱՐԵԳԻՆ

Ա՛հ, Վարդանոյշ մայր իմ, դու քոյր իմ Երանուհի,
Իմ հոգւոյս, իմ սրտիս դուք էք միայն տիրուհի.
Կամ առէք այս հոգիս, կամ վատացրէք այս սիրտս,
Կամ թողէք որ գնամ՝ պաշտպանեմ հայրենիքս.
Ըզգում եմ, որ ես միակ ծնունդ տանըն Սրբուանձտեայց,
Գիտ՝ ընկիմ աղատիչ աշխարհին Հայաստանեայց.
Ո՛հ, Աստուած իմ Աստուած, քեզ միայն յոյս և հաւատ
Նուիրել եմ սրտանց, դու պահիր ինձ հաստատ
Իմ ուխտին, իմ խօսքին, և հարցս եկեղեցւոյն,
Արդ խօսիր այժմ մայր իմ. քո հարազատ որդւոյն.

ՎԱՐԴԱՆՈՅՇ

Ո՛հ, վա՜յ ինձ, որդեակ, վա՜յ ինձ, այդ ի՞նչ ասացիր,
Կայծակներ, փայլակներ իմ գլխին շողացրիր.
Մի՞թէ ես քեզ կեանք, լոյս ներա համար եմ տուել,
Որ անդդամ Պարսիկք կարենան քեզ զոհել.
Տէր Աստուած, ուրթատուն տարի է այս, քեզ համար
Հայոց աշխարհս զոհեր է անում անհամար.
Արշակից մինչ վերջին Արտաշէս վատ արքայն,
Անթիւ նախարարք և ազատորեայք կորան.
Բանտեր և բերդեր մեր պապերով լիացան,
Մայրեր և հարսներ որբ սգաւոր խեղճացան.
Եւ քո հայրդ, Գարեգին, քսան հինգ տարի ամբողջ,
Բանտերումն ու աքսորում տանջուեցաւ ողջ ողջ.
Քեզ միայն, քեզ, իմ որդեակ, Աստուած նուիրեց ինձ,
Գիտա՛ քո որբ քեռ վրայ ու խնայիր և ինձ.
Դառն արտասուացս և աղխարշ հոգւոյս նայիր,
Աղերս պաղատանքն քեզ համար ընդունիր,

Զոհիր ինչքդ, զոհիր փառքդ, զոհիր և քո անունդ,
Պահիր կեանքդ, պահիր ցեղդ, պահիր և քո արիւնդ.
Ո՜հ, դժբաղդ եմ, դժբաղդ, դու էիր միայն իմ յոյս,
Իմ որդի, իմ հոգի և երկու աչացս լոյս.
Արդ խորհիր, Գարեղին, որ քո երակացդ միջում
Իմ և քո նախահարց քաջ արիւնն է շրջում.
Ճանաչիր այդ արիւնն, որ Հայոց մեծացն է,
Մեծի տան Սրբուանձտեայց վերջին սերունդն է.
Մեր Հայոց աշխարհն ու մեր սուրբ եկեղեցին
Ցարդ, պատիւ պէտք է տայ քեզ նման մեծ ցեղին.
Ճանաչիր, ասում եմ քեզ, քո յանդուգն խորհուրդդ,
Պահպանիր, աղաչեմ քեզ, քո վառուն յուզմունքդ.
Ա՜հ, սարսափ և սոսկում իմ ուշք միաքն են շուարում,
Երբ աչացս առաջը այն տանջանքն են երևում.
Որ քեզ պէս բիւր քաջեր այն անօրինաց ձեռքից
Տանջուելով անխնայ, ղոհ դառան նրանց կոյր կրից.
Սրանց մէջ էր և քո հայր, ո՜հ, իմ սիրուն որդեակ,
Նրանց հետ իմիասին եղաւ սուրբ նահատակ.
Ի՞նչպէս ես սիրտ անում և դու այդ հասակովդդ,
Այն վայրենեաց դէմ դնել միայն քո քաջ սրտովդդ.
Նրանք, որ հայհոյում են, նրանք, որ արհամարհում
Մեր սուրբ Աւետարանն, որ լոյս է աշխարհում.
Պատիժ կըսպառնան քեզ, տանջանք տալ կուտան քեզ
Մինչև կրծնդդ չուրանաս, բնաւ չեն խնայեր քեզ.
Արդ ինչով՝ իմ որդիս, կըդիմանաս դու նրանց,
Կատաղի, մոլեգին ու անօրէն բռնութեանց
Ո՛չ դունդ, ո՛չ զէնք ունիս, ո՛չ անյաղթ այրուձի,
Ո՛չ մի հզօր զօրութիւն, որ նրանց կիրքը սանձի.
Ե՛կ, իմ սիրուն որդեակ, ինձ լըսիր և հաճիր,
Այդպէս յանդգնութիւն մի կողմ դիր, մի՛ անիր.
Բաւ է մեր Աստուծոյն մի մեծ համբերութեամբ,
Աղօթքով, մաղթանքով և սաղմոսերգութեամբ,
Սուրբ երկրպագութիւն, սուրբ փառաբանութիւն,
Երդ, սաղմոս, պատարագ, ջերմեռանդ օրհնութիւն,

ԳԱՐԵԳԻՆ

Եւ նրա Աստուածութեան սուրբ մարդասիրութիւն,
Եւ երկնային անուան քաջ արիւնհեղութիւն,
Կին դու, իրաւ ես քո որդին եմ մարմնաւոր,
Բայց գիտենամ այժմ, որ Քրիստոսի եմ զինուոր.
Ո՛չ մի մարմնաւոր սէր, ո՛չ մի երկրաւոր փառք
Չեն կարող խափանել իմ խոստմունք և իմ պարտք,
Իրաւ է դու ես միայն իմ ծնող կենդանատու,
Բայց ո՛չ թէ պահանջող քեզ միայն լինել հլու։
Գիտեմ, որ հողեղէնք միմեանց համար են եղել,
Եւ բարեպաշտ ծնողք որդւոց համար են եղել.
Ինչպէս և բարի զաւակք միայն ծնողացն են
Միայն մխիթարանք և միայն յոյս ու ապաւէն.
Բայց մեր սուրբ կրօնին մէջ, երբ մենք բուն հողեղէնք,
Հաւատով և գործքով կըլինինք հոգեղէնք,
Տէր մեր Աստուածն է մեր ամենուն հայր և տէր,
Տէր մեր Աստուածն է պահանջող մեր կեանք և սէր.
Ըզդումեմ, մայր իմ, զդում մի հուր սրտիս մէջ,
Որ գիշեր ցերեկ վառուումէ միշտ անշէջ.
Այս մի երկնային հուր է կամ լուսավառ հոգի,
Որ ոչ մ' երկրային տարր չէ կարող նրան յաղթի.
Ի՞նչ կասես, դու, քոյր իմ, մի՞թէ սոյն այս զդացմամբ
Չի ծնանք, չի մնանք մենք մեր դայեկին ձեռամբ,
Մի՞թէ և դու ինձ նման չես ըզդում այս սրբոտումդ.

ՆԻԱՆԴԻՀԻ

Ո՞հ, Գարեգին, իմ եղբայր, առ ինձ քո զրկումդ,
Ասա մի ըստ միոջէ, ինչ որ ունիս մտքումդ,
Կարծումես, թէ վաղուց չեմ գիտել քո գիտումդ,
Բայց աւաղ, դու չես քննել իմ սրտի խորունկը,
Որ իմանայիր քաջ իմ ներքին խորհուրդը.
Ահա այժմ Աստուծոյ և առաջն իմ ծնողաց,
Խոստովանումեմ, թէև զուրկ եմ սուրբ շնորհաց.
Որ նուիրել եմ և ես իմ կեանք, իմ կոյս հասակ,
Միայն Յիսուսի համար լինիլ նահատակ.

Վաղուց եմ հրաժարուել թագից ու պսակից,
Գրաւուել է իմ հոգին երկնաւոր սուրբ փառքից.
Թող տուր ինձ մնայ իմ, թող, որ Սուրբ Եկեղեցւոյն
Դրօշակը ցոյց տամ ամէն Հայաստանցւոյն.
Սուրբ քարոզներ կարդամ մեր տիկնանց, տիրուհեաց,
Ասեմ պատրաստ լինին, ղ՝ահա ժամն է հասած.
Մեր աշխարհն պաշտպանել, մեր կրօնն աղատել,
Մեր մարմնաւոր կեանքը նրանց համար զոհել.
Մի վարանիր մնայ իմ, մի՛ յուսահատիր այդպէս,
Զրկայ աշխարհիս մէջ Աստուծոյ սիրոյն պէս.
Այս մի երկնային հուր է, որ Աստուած կուտայ
Նրան, որ սուրբ սիրով իրան կհաւատայ.
Մի՞թէ ես ու Գարեգինը մեծ մեղքենք գործել,
Որ Աստուծոյ սիրով մեր սիրան ենք անուշել.
Դու ես, մնայ իմ, դու ես մեզ այսպէս զարգացնողը,
Միայն հայրենեաց համար պատրաստ անողը.
Արդ մեր եկեղեցին մեր հայրենեաց դրօշը չէ՞,
Երբ նա վտանգու�է մեզ աղատել պարտք չէ՞.
Իրաւ է, ես քոյ միայնակ կոյս աղջիկն եմ,
Բայց իմ սեռիս մէջ ես ամէնից կարիճն եմ.
Կը գնամ եղբօրս հետ Ցաղկեբաին դիմացը,
Կը վարուիմ հսկառակ նրա՝ նօրէն կամացը.
Եթէ հուր և ջուր մեզ պաշտել սալ կամենայ,
Եթէ ահ և մահ ևս մեզ համար ապառնայ.

ՎԱՐԴԱՆՈՑՇ

Ո՛հ, Տէր իմ Աստուած, այս ինչ ժամու հասուցիր ինձ,
Քո աղախնոյդ հոգին արիացրու, վայ ինձ.
Չեմ կարող այլևս կռուել հոգւոյս յուզմանց դէմ,
Չեմ կարող այլ ևս դնել մայրական սիրոյս դէմ.
Իմ պապեր, իմ հայրեր քո անուան համար Տէր,
Կեանք, արիւն, փառք, անուն զոհ արին քեզ միայն Տէր.
Որը էի, ծնողաղուրկ, դու մխիթարեցիր ինձ,
Նախատարն Սրբուանձատայց տէր և այր արիր ինձ.
Օրհնեցիր մեր սէրը, նուիրեցիր մեզ միմեանց,
Փառք տալով քեզ միայն սիրեցինք մենք միմեանց.

Օրհնեալ է, գովեալ է քո անունդ, Տէր իմ Իշխան,
Շնորհեցիր ինձ որդի, իմ անտէր տան իշխան.
Օրհնելով դու իմ որդիս, պատուիրեցիր դու նրան,
Հետևիլ իր հօր, հարազատ լինիլ նրան.
Քեզ միայն պաշտելու, քեզ միայն սիրելու,
Պատուիրանքդ սորվելով հայրենիք սիրելու.
Նա իր մահուան ժամը պատուիրանք տուաւ ինձ,
Իմ որդին քեզ ղոհել, ուխտ և պարտք անեմ ինձ.
Նա միշտ զրկումն առաջ՝ իր միայն սիրուն որդւոյն,
Աստուծ էր անդադար նմանիլ քո որդւոյն.
Պատարագ անեմ նրան մեր հայրենեաց համար,
Ինչպէս և դու արիր մեր փրկութեան համար.
Ահա քեզ Աստուած իմ, ես մատաղ եմ անում,
Ինչպէս Աբրահամ իր որդին քեզ էր անում:
Սա իմ հանդուցեալ տիրոջս և իմ արիւնս է,
Հայոց աշխարհին աղատութեան յոյսն է.
Պահպանիր դու սրբան ամէն փորձութենից,
Դիւի սատանայի մոլար փորձութենից.
Զօրացրու սրա հոգին, արիացրու սրա լեզուն,
Որ ամ ի բերան անի քո թշնամոյդ լեզուն.
Գընա դու որդի, գնա՝ Աստուած քեզ հետ է,
Նրա ապաւինողին նա ինքը միայն դէտ է.
Նրա մտքի խորհրդին, նրա սրտի և հոգւոյն,
Նրա վարքին և բարքին, նրա արիական հոգւոյն:
Իսկ դու, իմ սիրելեան դուստր Երանուհի,
Եւ դու կամենում ես լինիլ իսկ սրբուհի.
Ո՛չ այդ յանդգնութիւն է, ոչ նահատակութիւն,
Պարտ է քեզ լինիլ ինձ մօտ մխիթարութիւն.
Իմ տխուր կենացս վերջին սև օրերումը,
Պահպանիր ինձ, քո ժիր և հզօր թևերումը.
Մինչև իմ հոգին առ Աստուած վերացնեմ ես,
Դու պէտք է որ իմ վրայ մահուան քող վերաձգես.
Ես կմեռնիմ մի օր և դու այն ժամանակ
Կբթաչիս եզբօրդ մօտ, կընիս նահատակ.

Իսկ այժմ պէտք է մնաս իմ մնաս սիրուիչ,
Իմ տրամութեանց և տխրութեանց միայն սփոփիչ,

ԳԱՐԵԳԻՆ

Ո՜Հ, մայր իմ, մայր իմ, ուր ինձ աջդ համբուրեմ:

ԵՐԱՆՈՒՀԻ

Ա՜Հ, մայրիկ, մայրիկ, կաց, աչքերդ պաչ անեմ:

ԳԱՐԵԳԻՆ

Մի լայր, մայր իմ, մի՛ լայր, ես դեռ եմ այս տեղն եմ:

ԵՐԱՆՈՒՀԻ

Խնդա, մայրիկ, խնդա, ես միշտ քո մոտն եմ,

ՎԱՐԴԱՆՈՅՇ

Ա՜Հ, որդեակ իմ, որդեակ, ինչպէս դիմանամ ես,
Դու միայն, Տէր իմ, Դու միայն իմ յոյսն ու կեանքն ես:

Վերջ առաջին արարուածոյն:

Մարկոս Ազարեկեան,
Եարունակութիւնը յաջորդ թուով:

ԱՐԵԳԱԿ

Սիրելի բարեկամներ, եկէք, կանգ առնենք այստեղ, ահա մենք հասանք բլրի վերի ծայրը: Եկէք նստոտենք ի միասին ու վայելենք այս զուարճալի երեկոյեան զովութիւնը: Տեսէք որպիսի փառաւոր տեսարան է ներկայանում մեր աչքերին: Այս կանաչազարդ ադարակները, ուր աչքերը սիրով ըզմայլում և յափշտակուում են և այն փոքրիկ առուակները, որոնք իրանց արդասաւոր ջրերը վազեցնելով ադարակներումը, կարծես, թէ զդուում են մի առանձին բերկրութիւն այն ոսկեփայլ հասկերով ծածկած դաշտերն, և այն խիտ անտառը, որոյ հաստ ու ահագին ծառերը նաւերու փոխուելով դնում են երկրագնտիս հեռաւոր տեղեր, թանդագին զանձեր օրոնելու, ահա այս ամէնն ի միասին ամփոփուում են այս լայնատարած դաշտի երեսին, բնութեան վայելչութիւնն ու հարստութիւ-

նը։ Այս հոյակապ տեսարանիցը դարձրէք ձեր աչքերը արեգակի վերայ, որ իւր միակ սկաւառակի փայլմամբը լցնում է այս տարածութիւնը. իւր զօրութենով և բոլոր այս շքեղութիւնը նրա գործն է։ Իւր ճառագայթների ջերմութենով բերնութենին բացի կեանք տալից, լուսաւորում է նրա մատաղահաս արտադրութիւններն և ձգում է նորա դալար հաղուստի վերայ ամենակենդանի գոյներ։ Խօսինք ուրեմն այժմ, թէ ինչ է արեգակն ու ինչ բարութիւններ է տալի երկրին։

Արեգակը մի հրային գունտ է, որ իւր զառանցքի վերայ թաւալելով զարմանալի արագութեամբ, անդադար տարածում է իր ամէն կողմն ճառագայթներ ուղիղ գծերով, որոնք նրա էութենից են կազմուում ու նրանց պաշտօնն է տանելանխմանալի արագութենով մինչև տիեզերքի ծայրը լոյսը, որ նոքան լուսաւորում է, ջերմութիւնը՝ որ նրան կենդանութիւն է տալիս և գոյները՝ որ նրան զարդարում են։ Գունտ է նա, որովհետև իւր ամէն մասներումը երևում է մեզ գնտաձև։ լաւ զօրաւոր հեռացուցով նայելիս տեսնում ենք նորա կորնթարդութիւնը։ Նա կրակ է, պատճառ՝ նորա ճառագայթները դոզաւոր հայելիներով կամ կորնթարդ շուշաներով ժողովելիս՝ այրում են ամենակարծր մարմիններն անգամ, մաշում, հալում կամ դարձնում նրանց մոխիր ու շուշայ։ Նա թաւալում է իւր զառանցքի վերայ, պատճառ՝ նկատում են նրա մակերևութի վերայ բիծեր, որոնք երևելով նորա մի ծայրումը, կարծես, թէ անցնում են նրա տրամագծի վրայով դէպի միւս ծայրը, թագչում են մի քանի օր ու նորէն երևում այնտեղ, ինչ տեղից ճանապարհ են ընկել։ Այս բիծերը հեշտութեամբ կարելի է նկատել լաւ դիտակով։ Նրանց թիւը հասնում է մինչև յիսուներ։ Նրանցից ամէն մէկը 1700 անգամ մեծ է քան թէ բոլոր երկիրը։ Որը համարում է նրանց փրփուր կազմած կրակի սաստիկ ներդործութեամբը, որը՝ կարծր բարձրութիւններ, արեգական մարմնի վերայ։ այս բիծերը (միաւորուելով ի մի զանգուած), իրանց կանոնաւոր ընթացքով հաստատում են, թէ արեգակը դառնում է նրանց հետ իրա զառանցքի վերայ և այս շրջանը, որ տևում է քսան ու չորս օր ու կէս, թէպէտև աւելի ծանր քանթէ մեր երկրինը, որ

միայն գործ է ածում մի օր, պիտի ունենայ սքանչելի արա-
գութիւն մի այնպիսի գնոտի համար, որ (1400000) մի մի-
լիոն չորս հարիւր հազար անգամ մեծ է մեր երկրից :

Արեգակն անդադար տարածում է ճառագայթներ իւր
մակերևութի ամէն կողմից, նաև ամէն կէտից, պատճառ՝ չէ
անցնում բոպէ, որ նրա լոյսը չտարածուի տիեզերքի այն կող-
մերը՝ որոնք նայում են նրան. չկայ կէտ, որ լոյս չստանայ ա-
րեգակից և ուրեղից նա տեսանելի չլինի :

Նորա ճառագայթներն ընթանում են ուղիղ գծերով և
ոչ ալեաց նման, որ յառաջանում է ջրի և օդի մէջ եղած շար-
ժողութենից, պատճառ՝ այն ժամանակն արեգակը մայր մըտ-
նելիս կերևէր ոչ թէ սարի ներքևից, այլ նաև երկրի միւս
կողմից, այսինքն՝ դիշերը լոյսը տարածուած կլինէր, որպէս
կոհակ ծովու կամ որպէս ձայն և միշտ կհասուցանէր մեզ իւր
ազդեցութիւնը և լուսինն այդ պատճառաւ երբէք չէր կարող
թագչել : Ես ձեզ համար այս մասին ունիմ էլի ուրիշ ա-
պացոյց : Դուք կանգնած էք հայելու առաջին, ձեր պատկերը
ներկայացնում է նրանում իրա նման ստուեր. ահա՛ ձեզ ա-
պացոյց, որ ճառագայթներն ուղիղ գծերով խաղում են ձեր
դէմքի ամէն գծերը : Ձեզ աւելի համոզելու համար, ես ծած-
կում եմ սենեկի պատուհանը և միայն մի ծեղքուած եմ բաց
թողնում նրանում, տեսնում էք, որ ճառագայթները, որոնք
անցնում են այս ծեղքուածով սենեկի մէջ, կոհակի նման չեն
տարածվում, այլ ընթանում են ուղիղ գծերով, լուսաւորե-
լով այն առարկաները, որոնք պատահում են այդ ուղղութեան
մէջ :

Ճառագայթները կազմած են արեգական յատուկ գոյա-
ցութենից և նորա բորբոքեալ նիւթի կոհակներն են, որ նա
տարածում է իւր ամէն կէտերից : Այն հեռաւորութենից, ուր
մենք բնակում ենք, մի՞թէ արդեօք կարող էին նրա շառաւիղ-
ները ջերմութիւն հասցնել մեզ, թէ չլինէ ին բղխում այ-
րող աղբիւրից և սպառում ճանապարհին տաքութիւնը իրանց
արագ շարժողութեան պատճառաւ : Ինչո՞ւ գլուխդ շարժում
ես Ցիդրան, : Կարծում էք անտարակոյս, թէ ուրեմն վաղուց
նա մաշած պիտի ըլի : Ձագառը, ասում էք դուք, մի բոպէում

թափեց իրա մէջ պարունակուած ջուրը։ Ես ուրախ եմ, ոմ կարող եմ հերքել ձեր ընդդիմաբանութիւնը։ Զգաստը թափումէ ջուրը մի կողմից, արեգակը տարածումէ լոյս իւր ամէն կէտից և հասցնումէ այն տեղերը, որունք միլիոն անգամ աւելի հեռու են քան թէ մենք, որովհետև կան այնպիսի յայտնի աստեղներ, որոնք այնչափ հեռաւորութիւն ունին և ուղարկումեն մեզ իրանց լոյսը։ Երևումէ, որ արեգակը և աստղերը այսքան դարեր չեն կրել պակասութիւն լուսափայլութեան կողմանէ։ Տեսնումէք, որ ձեր տարակուսութիւնները դեռ չեմ լուծել. լսեցէք, խնդրեմ, իմ պատասխանը։ Առաջ հարկաւոր է սալ ձեզ գաղափար լուսոյ մասանց զարմանալի փոքրութեան համար։ Մանրացուցով դուք տեսաք մի կաթիլ ծովի ջրի մէջ հազարաւոր փոքրիկ ոսպնաչապ միջատներ։ Այդ միջատներն ունին աչքեր, անդամներ, արիւն կամ ուրիշ հեղանիւթ, որ պտըտումէ նրանց մարմնումը և կենդանութիւն տալիս նրանց։ Ձեզ համար դժուար է, մանաւանդ թէ անկարելի է երևակայել, թէ որքան փոքր պիտի լինի այն արիւնի կամ հեղանիւթի կաթիլը։ Ապացուցած է հաշուով, թէ նա փոքր է քան թէ աւազի մի հատը, որի մեծութիւնը հաւասարումէ մի բթաչափի երկոտասանորդ մասնին և թէ աւազի այսպիսի հատ չկայ երկրագնդի վերայ։ Բայց այս փոքրութիւնը ոչինչ է, հաւասարելով լուսոյ մասանց փոքրութեան հետ։ Այս բոլորին ես ձեզ ասի, թէ արեգակը իւր մակերևութի ամէն կէտերից տարածումէ ճառագայթները, որունք թափանցումեն նորա պատկերը մեր աչքերի խորութենումը։ Անտարակոյս այդ միջատները ցերեկը արեգակ չեն տեսնում, կարելի է գիշերը տեսնումեն աստեղներ, պատճառ, արեգակը տեսանելի կլինի միջատներից, երբ նորա մակերևութի ամէն կէտերից ճառագայթներ հասնեն մինչև միջատների աչքերի խորութիւնը նորա պատկերը ձևակերպելու համար։ Արեգակը մի միլիոն չորս հարիւր հազար անգամ աւելի մեծ է քան թէ երկիրը. ամէն մի աստղ մեծութեամբ համահաւասար է արեգակին։ Ահա մարմիններ անըմբռնելի մեծութեամբ, որոնք իրանց տարածութեան, ամէն մի կէտից հասցնումեն լուսոյ կոհակներ մինչև աչքերի

խորութիւնը փոքրիկ միջատի՝ որ խառնուած ըլլով իր նման հաղարաւորների հետ մի կաթիլ ջրումը, դժուարանկատելի է մեզ համար։ Կարելի է դժուար հաւատալ, որ մի փոքրիկ կենդանի կարողանայ հասցնել իւր տեսողական զօրութիւնը մինչև աստղերը, ես էլ չեմ պահանջում, միայն կարող եմ ձեր միտը բերել Բանբվիլի գեղեցիկ ոտանաւորը, որ Աստուծոյ սքանչելի կարողութեան վերայ խօսելով, ասում է. «և միջատի աչքի վերայ նկարել է նա տիեզերքը»։ Բայց եթէ միջատը չէ վայելում այս լայնատարած տեսարանը, մենք վայելում ենք, մենք այլ ենք. մեր աչքը մի վայրկենում կարող է անցնել երկնքի բոլոր տարածութիւնը, նա կտեսնէ ոչ միայն բոլոր աստղերը, այլ և այն տարածութեան ամէն մասները, որ բաժանում են նրանց և այս է պատճառը, որով բազմապատկուում է որքանութիւնը ճառագայթների, որոնք հեռաւոր պիտի գան ու մտնին մեր աչքերը և այս փոքր ը զօրեղ ապացոյց է լուսոյ մասանց անսահման փոքրութեան համար, պատճառ՝ բազմաթիւ ճառագայթները բեկվում են ու ճնշվում մին մինի հետևից մեր աչքերումը, առանց պատճառելոյ նաև փոքրիկ աղդեցութիւն ցաւի, թէպէտ անիմանալի արագութեամբ հասնում են և թափանցում նրանց խորութիւնը։

Շատ անդամ ձեզ պատահել է տեսնել դաշտի վերայ ճրագի լոյս մի մղոն ձեզանից հեռու վառուելիս. թէ որ էս ճրագի չորս կողմով շրջան նկարենք այն հեռաւորութեամբ, ինչ հեռաւորութեամբ որ մենք կանգնած ենք, անտարակոյս ոչ միայն այս շրջանի ամէն մի կէտից կարելի է տեսնել նրա լոյսը, այլ և ամէն կէտերից այն տարածութեան, որ նա պարունակում է իւր մէջ։ Այս տարածութեան ամէն մի կէտը նաև մինչև նոյնչափ հաւասար հեռաւորութեամբ դէպի բարձր և դէպի ցած, (եթէ ճրագը կախուած էր էլել օդումը), լցուած կլինէր այն ճրագի բոցից արձակուած լուսոյ մասներովը։ Նա մի վայրկենում մաշում է ճարպի գնտակ քորոցի գլխաչափ։ Ահա այս փոքրիկ ճարպի գնտակը տալիս է այնքան լուսի նիւթ, որ կարողանում է լցնել մի գնտաձև տարածութիւն երկու մղոն տրամագիծով։ Կարելի է հաշուով ապացուցանել, որ մի բթաչափ մեմը լոյս դառնալից յետոյ, կապ լուսոյ մասունք-

ներ շատ միլեան անգամ աւելի, քան թէ աւաղի այն քա-
նակութիւնը, որ կարող է պարունակել իւր մէջ բոլոր երկիրն,
համարելով աւազի հարիւր մասնին մի բթաչափ լայնութիւն:
Ի՞նչքան ուրեմն աւելի կլինէր լոյսը մի բթաչափ չափազանց
լուսաւոր և զուտ նիւթի, որ ընդունակ է անթիւ բաժանման:
Վերջապէս եթէ մի գարեչափ մուշկը (moschus) արտաշնչումէ
քսան ու հինգ տարի անդադար իւր դոյացութեան ամէն մաս-
ներից, զգալի կերպով չկորուսանելով և ոչինչ իւր բուրմունդա-
կութենից, եթէ մի երկաթեայ գնտակ մի ոտնաչափ տրամա-
գիծով, կարմրացրած սաստիկ կրակումը արձակումէ լուսա-
ւոր ու բորբոքուած կոհակներ անկորուստ և անպակաս պա-
հելով իւր հաւասարակշռութիւնը, ապա ուրեմն աւելի հեշտ
պէտք է համոզուէք, թէ արեգակը կարող է տարածել լուսի
հեղեղատ, մնալով բոլորովին աննուազ և թէ փոքրիկ մասն
անգամ նորա զանգուածին բաւական էր, որ լցնէր այսքան գա-
րեր իւր լուսով ու ջերմութենով բոլոր այն մոլորակներն ու
տարածութիւնները, որոնք ենթադրուած են նրան:

Ինչ որ վերաբերումէ ճառագայթների անիմանալի ա-
րագութեանը, հաստատ յայտնի է, որ սոքա ութ րոպէի չափ
ժամանակ են գործածումէ մինչև մեզ հասնելը: Ցեռոյ, երբ
փոքր ի շատէ տեղեկութիւն կատանանք երկնքի մասին, ես ձեզ
կպատմեմ, թէ մարդիկ ի՞նչ դիտողութենով հասել են այդ
գիւտին և ո՞րպիսի սրամիտ փորձով հաստատել են դորա ճշգ-
մարտութիւնը, այժմ բաւական եմ համարումէ ձեզ հաղորդել,
թէ այդ գիւտը այնպէս անհերքելի է, ինչպէս լուսի
էութիւնը:

Ինձ մնումէ խօսել ջերմութեան վերայ, որոյ մասին մենք
պարտաւոր ենք նոյնպէս արեգակին, նորա բարութիւններից
սա ամենամեծն ու ամենազգալին է, սա է պատճառը, որով յա-
ռաջացնումէ շարժողութիւն և կեանք բոլոր շնչաւոր արա-
բածների մէջ: Այժմ կամենումեմ ցոյց տալ ձեզ նորա ներ-
գործութիւնը բուսերի վերայ: Միտդ բերէք այն անձուկ և
ողորմելի դրութիւնը, որոյ մէջ հառաչումէր բնութիւնը
ձմեռան տխուր եղանակին. երկիրը պատած էր թմբրութեամբ,
ծաղիկները չէին համարձակումէ երևել նորա ծոցից, ծառե-

բը զրկուած էին իրանց կանաչ տերևներից, որոնց ճիւղերումը կենդանացուցչ հիւթը թալկացած էր, շարժումէր դանդաղ և հազիւ թէ կարողանումէր պահպանել համարեա թէ, անզգայ և մերձ ի մահ մնացած կեանքը, ձիւնը ծածկել էր երկիրը: Գարունն եկաւ, ահա հողագունտը ջերմացաւ, հիւթը նորէն աղատութիւն առաւ իր ընթացքումը և կանաչ գոյնը նորէն ծածկեց ամէն բոյսերը: Փոքրիկ Զուեցարիայի սարերումն, ուրտեղ ցրտի սաստիկ ու թափանցող աղդեցութենից աղատուելու համար փորումեն գետնի մէջը խոր խոր ծակեր, և այնտեղ մնումեն փակուած բոլոր ձմեռը դժնեայ թմրութեան մէջ: Այն պրութեան մասին տեսնումենք, թէ ինչպէս մին մինի նմանումեն ծառն ու լեռնային մուկը: Երկուսն էլ թմրած են, պատճառ՝ մինի հիւթը և միւսի արիւնը, որոնք նրանց կենդանութեան հիմունքն են, իրանց ընդհանրական շարժումն առնումեն ըստ բաւականին դժուար՝ առաջինի խողովակներումը և երկրորդի երակներումը ցրտի ներդործութենից, որ սեղմումէ նրանց: Թողնենք առ ժամանակ ծառը, խօսենք լեռնային մկան վերայ: Զուեցարիայի սարերումը ճանապարհորդութիւն անելիս, կգտնէք անշուշտ այս թմրած կենդանիներից. ցուրտն է, որ պատճառումէ նրանց թմրութիւն և ես կարողեմ աղատել նրանց այդ դրութենից, ջերմութիւն տալով նրանց անդամներին: Եթէ վառենք նրանց մօտ կարճատև կրակ և միշտ հանդչելից յետոյ կրկին վառենք, այն ժամանակը թմրութիւնը կդադարի փոքր ինչ. բայց եթէ յարատև և անդադար բաղմապատկենք կրակի զօրութիւնը, անտարակոյս նրանք իրանց մահանման քնածութենից դուրս կգան, պատճառ՝ նրանց արիւնը կստանայ նորէն իւր հոսականութիւնը: Այն ժամանակը նրանք ոտները կտարածեն, աչքերը կբանան, ականջները կկփեն ու կշարժին և դուք կզուարճանաք նրանց արագ և կակուղ շարժողութեան վերայ: Ահա ձեզ աստիճաններ, ուր երևումէ, թէ ինչպէս արեգակը հանումէ բնութիւնը թմրութենից, որոյ մէջ ըն-

կըրմուած էր լինում նա, ու նոր մեկանց կեանքի է բերում:

Զմռուան դիշերների երկայնութիւնը մեզ միջոց տուաւ դիտելու, թէ արեգակը որքան քիչ էր մնում այն ժամանակը երկրի վերայ, նա ամէն օր լուսաւորում էր երկրագունտը, բայց հազիւ թէ մի քանի ժամ երևում էր մեր գլխի վերայ, իսկոյն հեռանում էր: Նա ուղարկում էր իւր իւր ճառագայթները միջասահման բարձրութենից նաև կէս օրերին: Զարմանալի չէ ուրեմն, որ երկիրը կորուսանելով դիշերներն այն նուազ ջերմութիւնը, որ ստանում էր ցերեկով, չպահեց այնքան, որ ինքը կենդանանայ: Դարունքից սկսած դուք տեսաք, որ օրերը մեծացան զարմանալի կերպով և արեգակը տարածեց իւր շաւաւիղները ուղղակի մեր գլխի վերայ. կամաց կամաց երկիրը ջերմացաւ, նորա ծոցը կենդանացաւ, բոյսերի հիւթը ստացաւ իւր շարժումը, ծառերը ծածկուեցան տերևներով ու ծաղիկներով և այժմ, երբ մենք տարուայ երկար օրերումն ենք, և արեգակը իւր բարձրութեան ամենաբարձր կէտի վերայ է, դուք տեսնում էք, որ կան պտուղներ, որ հասած են և կան՝ որ հասնելու վերայ են: Որովհետև ջերմութիւնը ամառ ժամանակը գնալով աւելանում է, պտուղները հասնելու համար ստանում են իրանց կարգով տաքութիւն, մինչև այն աստիճան, որ իրանց հարկաւոր է, քանի որ դեռ արեգակը կորցընում է իւր բարձրութիւնը հորիզոնի վերայ, տակաւին հորիզոնումը կեցած է և երբ պակասելով աստիճան առ աստիճան, մինչև աշնան վերջերը իւր ցերեկուան ընթացքը, ձգում է երկիրը կամաց կամաց ձմռան սաստկութեան մէջ: Ի՞նչ խորհուրդ է պտղատում այս բոպէին ձեր գլխումը, տիրուհի: Ես ցանկանում էի դուշակել ձեր դէմքից, թէ իմ բացատրութիւնն արդեօք արժանացաւ ձեր հետաքրքրութիւնը գոհ անելու թէ ոչ. Ինչո՞ւ ունքերդ վէր թողիք վերջն խոսքերիս վերայ. ունի՞ք տարակուսութիւններ, ասացէ՛ք, խնդրեմ, ես պատրաստ եմ պատրվել: Ա՛հ, հասկացայ ձեր միտքը: Որովհետև արեգակը, ասում էք, ձմեռուան ցուրտը խափանում է միմիայն իր բարձրանալովն ուղղակի մեր գլխի վերայ և ցերեկը երկարացնելովը, ուրեմն մի՞թէ կարող է ջերմութիւն աւելանալ ամբողջ ամառը, մինչ դեռ Յունիս ամսի վերջերը

սրեղակը կորցնում է արդէն ամէն օր իւր բարձրութեան առ-
տիճանը հորիզոնի վերայ և ծածկուում է գիշերները երկար
ժամանակ։ Այս չէք ուզում ասել. շատ բարի, ուրախ եմ, որ
կարող եմ փարատել ձեր տարակուսութիւնը։ Այդ շատ բը-
նական է, երևում է, որ դուք մոռացութեամբ էք լսում և ձեր
միտքն ընդունակ է իմացական յայտնի ճշմարտութիւնների։
Ես յօժար եմ պատասխանել ձեզ։ Ձեր միտն է, որ անցեալ
օրը իրիկնահոսքից յետոյ գիշերուայ տասը ժամին, երբ կա-
մեցանք հանդստանալ այդումը քարէ աթոռի վերայ, տեսաք,
որ քարը դեռ այնչափ տաք էր, որ ձեզ պահպանելու համար
աղտուելու փռեցիք աթոռի վերայ, թէպէտ արեգակը երկու ժամ
առաջ մայր էր մտել. չէր արձակում այնտեղ իւր ճառա-
գայթները։ Դուք տեսնում էք, որ արեգակով մարմինը ջեր-
մացած՝ կարող է երկար ժամանակ պահպանել նրանից ստա-
ցած տաքութիւնը, թէպէտև նա ենթադրուած չլինի նրա կը-
րակին։ Դուք գիտէք, որ եթէ գայլակաղը մի և նոյն աթո-
ռի վերայ դրուած էր ըլել, շուտ կըկորցնէր իւր ջերմութիւնը,
որովհետև մարմինը որքան փոքր է, այնքան շուտով սառչում
է։ Ձեզ հեշտ է սորա փորձն առնելը։ ձգեցէք կրակարանը մի
մեխ ու մի երկաթի հատ կտոր և կտեսնէք, որ հատ կտորը
ուշ կսառչի քան թէ մեխը։ Ահա՛ եթէ քարէ աթոռը եր-
կու ժամ տրեալ մայր մտնելից յետոյ ջերմութիւն պահեց
այնքան զօրեղ, որ ձեզ համար անտանելի էր, պէտք է ուրեմն
սրանից երևացնել, որ երկիրն անսահման մեծ զանգուած
լինելով՝ պահում է նոյն ջերմութիւնը բոլոր գիշերը և նաև
մինչև միւս օրուան առաւօտը։ Արեգակը յաջորդ օրը նրան
ջերմացած դտնելով՝ աւելացնում է նորէն ջերմութեան ա-
տիճաններ առաջինի վերայ, որ նա պահած ունէր և որովհե-
տև այս ամենամեծ որքանութեան վերայ աւելանում է նորէն
ու նորէն ու շատանում է յետագայ գիշերները, ուստի տաքու-
թիւնը գնալով բազմանում է և մնում թէ երկրի ծոցը և
թէ օդումը, որի հետ երկիրը հաղորդակցութիւն ունի, բայց
գիշերները երկարանում են, վասնորոյ և ցրտում է երկիրը, կը-
ցնելով գիշերուայ ժամանակի ջերմութեան մեծ մասը, որ նա
ստացել էր ցերեկուանից։ այս պատահում է սովորաբար աշ-

նան սկզբումը։ Այս է պատճառը, որ խաղողը կեռասից աւելի ուշ հասնելով, երկարատև տաքութեան կարօտ է և գտնում է տաքութիւն նա և այն ժամանակը, երբ արևն էլ չի տարածում աւելի ընդ երկար իւր ճառագայթները նորա ողկուզի վերայ։ Մի և նոյն պատճառով ջերմութիւնը սովորաբար աւելի տաժանակիր է ժամի երեքին, քան թէ կէս օրին, թէպէտև արեգակը երեք ժամի միջոցումը ցած է իջնում դէպի հորիզոնը։ Ցերեկի այսօրինակ ամառը, համարձակում եմ այսպէս ասել, դեղեցիկ կերպով նմանութիւն է բերում տարեոյ ամառուան։

Արեգական բարութիւնների վրայ այսքան երկար խօսելից յետոյ, անտարակոյս դուք շտապում կլինիք գիտենալ, թէ այս տիեզերաց թագաւորը ինչ տեղի ունի իւր տէրութեան մէջ։ Խոստովանում եմ ձեր առաջև, որ ձեզ այս մասին գոհ անելու համար ես զգում եմ փոքր ինչ դժուարութիւն։ Ինչ որ ասել եմ ձեզ մինչև ցայժմ, համաձայնում է զարմանալի կերպով ձեր դատափարների ու ձեր զգացմանց հետ, կամ գոնեա խորթ չէ երևում ձեր խակութեանը։ Ինձ մնում է այժմ մեկնել ձեզ մի անպայման հակասութիւն։ Հինաւուրց բոլոր ազգերը, նաև լուսաւորեալները, բացի մի հին փիլիսոփայից և նրա աշակերտներից, հաւատում էին, թէ արեգակը պտտում է երկրիս չորս կողմովը։ Հաւատում էին տասնց բացառութեան և երևելի փիլիսոփաները երկու հարիւր քառասուն տարի առաջ։ Այժմեան երեխաները և բոլոր տգէտ ազգերը կհաւատան միշտ այնպէս։ Սովորական բառերը —երք, բարձրանալ և մուտք արևու, որ գործ են ածում նաև աստղաբաշխները ժողովրդի հասկացողութեանը յարմարուելու համար, նպաստամատոյց են լինում հաստատելու այդ մոլորութիւնը։ Պիտի ասել, որ սոյն իսկ մեր աչքերի առաջի վկայութիւնը նպաստում է դրան։ Ի՞նչպէս կարելի է կարծել, թէ երկիրը պտտում է արեգակի չորս կողմովը, երբ նրան տեսնում ենք առաւօտը մեր ոտներին հաւասար, կէս օրին մեր գլխի վերայ, երեկոյեանը էլի մեր ոտների մօտ և ուրեմն ըստ երևութին դիշեր�ը պէտք է լինի մեր ոտների տակին։ Բայց սասցէք ինձ, խնդրում եմ ձեզ, եթէ դուք տեսած չլինիք ծառեր

հաստատուն արմատներով եղերքի վերայ անշարժ կանգնած, և զեռի երեսին մակոյկով ձեր մանդալես ժամանակին չէք կարծել, թէ նոցանից մի քանիսը վաղում են ձեր քամակից և միւսները գնում են ձեր առաջին։ Երբ դուք մակոյկի մէջ կիսաշրջան ըլէք անում եղերքին մօտենալու, մի՞թէ չէք կարծել արդեօք, թէ եղերքն է, որ ձեր ջրս կողմով պըտրտում է, եթէ չդիտենայք վաղուց, որ նա աւելի ամուր է քան թէ ծառերը։ Դուք զլո՞ւմէք արդէն, թէ մեր աչքերը կարող են մեզ խաբել։ Նիւթերի արտաքին երևութից ստիպուած՝ ներելի կլինէր մեզ խաբուիլը հեռացոյցը հնարելից առաջ։ Վաղուցուան մարդիկը չնմանալով արեգակի մեծութեան ստոյգ չափը և համարելով երկրից շատ փոքր, զարմանում էին նրանց իմաստութեան վերայ, որոնք պատոյտ էին տալիս արեգակը երկրիս ջրս կողմով. բայց եթէ երկիրը մի միլիոն ջրս հարիւր հազար անգամ աւելի փոքր է արեգակից, ինչպէս արդէն ապացուցած է, ուրեմն մենք աւելի իմաստուն չե՞նք լինիլ, թէ որ արևը անշարժ կացուցանենք աշխարհի կեդրոնում և պտոյտ տանք երկիրը իւր տարեկան ընթացքումը նրա ջրս կողմով և ամէն օր իրա ջրս կողմով։ Ի՞նչ կասէիք դուք այն ճարտարապետի համար, որ կամակորութենից յաղթուած՝ շինում ըլէր վառարան խոհարանումն այնպէս, որ կրակարանը պտոյտ դար դառան ոսի ջրս կողմով, շամփուրով նրան խորովելիս։

Անհերքելի դիտողութիւններով յայանի չէ՞ միթէ, որ դառան ոսն է, որ պտրտում է վառարանի վերայ. այսպէս էլ երկիրը արեգակի ջրս կողմով։ Խոստանում եմ ես ձեզ այս մասին յառաջ բերել ամենապարզ ապացոյցներ, երբ ձեր հաստատութեան չափը աւելի կզօրանայ։ Ինչ որ այժմ պահանջում եմ ձեզանից այն է, որ առաջին անգամ կարողանամ հաղորդել ձեզ այնպիսի ապացոյցներ, որոնք պիտի հաստատեն ձեր մտքի մէջ այդ ճշմարտութեան անհերքելի լինելը։ Ես կարծում էի, թէ վերջացրի խօսակցութեան դժուար մասը, բայց ահա աստղերը, որոնք ձգում են ինձ նորանոր դժուարութեանց մէջ։ Որովհետև մեծամեծ ճշմարտութիւնների ճապարհի վերայ ենք, պէտք է առաջ ընթանալ և ասել ձեզ,

թէ երկնային կամարը, ինչպէս և արեգակը չէ պտըտուում երկրի վերայ, այլ ընդհակառակը երկիրն է, որ պտըտում է ինքն իրա զառանցքի վերայ քսան ու չորս ժամուամը և այնպէս է երևում, թէ աստղերն են անում մի և նոյն ժամանակն այդ շարժողութիւնը: Այդ շատ զարմանալի կլինէր երկրի կողմանէ, պատճառ՝ հարկաւոր է, որ աստղերը ճշդապէս հնազանդուելով իրանց օրէնքներին, անցնէին ամէն մի վայրկենում քառասուն և ինը միլիոն մղոն. այսպիսի հեռաւորութիւնը կամ միջոցը դերազանց է հանդիսանում նաև քանդ արագութիւնը մեր երկաթեայ ճանապարհին,

Եթէ երկիրը կարօտ է արևի լուսին ու ջերմութեանը, ապա ուրեմն բարեպատշաճ է, որ նա պտըտէ նրա և իրա չորս կողմովը, որպէս զի վայելէ նրա բարութիւնները. պատճառ՝ երկիրը նրա շրջանը դանդաղ անելով՝ կարող էր դարձնել հեռաւարար իւր հայեցուածքը աստղերի ախորժ լուսաւորութեան վերայ, թէպէտ նրանք բոլորովին օտարոտի են սրանից: Ես զգում եմ, որ երեկոն փոքր ինչ ցրտում է, կարծում եմ, որ լաւ կլինի դնալ տուն ու այնտեղ շարունակել մեր խօսակցութիւնը: Ցիդրան, ձայն տուէք, որ ճրագը բերեն, և դուք, տիրուհի, բերէք այստեղ ձեր երկրագունտը: Ես ձեզ ասել եմ, որ արեգակը միշտ հաստատ կանգնած է մի և նոյն տեղումը, երկիրն է, որ նկարում է մեծ շրջան ամէն տարի նորա վերայ պտըտելով և ամէն օր իրա վերայ: Ձեզ դժուար է երևում հասկանալ, թէ ինչպէս կարող է նա մի և նոյն ժամանակում երկու շարժողութեան տակ ընկնիլ. Ձեզ մի՞ կարէ արդեօք լինիլ, որ սենեկի չորս կողմով պտըտուելիս, մի և նոյն ժամանակումը և ձեր ոտների վերայ դառնաք փոփոխակի: Եթէ դուք այս ձեր ոտքի վերայ դառնալով շրջանը առնէք երեք հարիւր վաթսուն և հինգ անգամ պտըտուելով, մեծ շրջանը, որ դուք կնկարէիք սենեկի ձախակողմովը, կներկայացնէր տարեկան շարժողութիւնը երկրի, իսկ փոքրիկ շրջանները՝ նրա օրական շարժողութիւնքը: Եթէ այս ճրագը դրած էր էլել շրջանի մէջ տեղումը, չէ՞ որ ոտների վերայ դառնալիս ամէն կիսաշրջան անելիս կտեսնէիք նրան, երբ ձեր երեսը դէպի նա կդարձնէիք ու կկորցնէիք աչքից, երբ ձեր մէջքը շուռ կտայիք դէպի նա:

Այս փոփոխութիւնը կարող է տալ ձեզ դաղափար, թէ ինչ կերպով երկիրը ստանում է ցերեկուայ լոյսը և գիշերուայ խաւարը: Փորձենք այս փորձը մեր երկրագնդի վերայ: Ես ցոյց եմ տալիս մի սպիտակ քորոց երկրագնդի այն կիսի վերայ, որ նայում է ծրագին և մի սև քորոց միւս կիսի վերայ, որ թաղ է կացած նրանից: Եթէ ես դարձնեմ երկրագունտը, այն մասը, ուր սև քորոցն է ու այժմ մթութեան մէջ է, կլուսաւորուի, բայց միւս մասը, ինչ տեղ սպիտակ քորոցն է ու այժմ լուսաւորուած է, կմտնի խաւարի մէջ: Այդ ձեզ ճիշդ օրինակ նոյն փոփոխութեանը, որով բլում է գիշեր և ցերեկ երկրիս երեսին: Այդն մի մասը երկրագնդի, երբ որ դարձնում է իր երեսը արեգակին, ստանում է լոյս նրա ճառագայթներից, իսկ երբ նա սկսում է հեռանալ նրանից, մտնում է մութը խաւարի մէջ: Այս միջոցով երկրի ամէն մասները ստանում են մին մինի յետևից ցերեկուան ջերմութիւնը, որ տալիս է պտուղներին հասունութիւն, գիշերուան քաղցը ցողը, որ հաղորդում է զովութիւն այրուած հողին, բորբոքուած օդին, բոյսերին, կենդանեայ ու մարդկանց: Երկրիս մասունքը, որոնք այս երկու կէտի չորս կողմին են, կոչում են բևեռք՝ Հարաւային և Հիւսիսային: Այդ տեղերը շատ ցուրտ են, որովհետև անցնում են ամիսներ, որ արեգակ չէ երևում. բայց այսպիսի երկար գիշերներից յետոյ, դալիս են շատ ամիսներ էլ, որ արեգակը այնտեղից չէ հեռանում: Այսպէս տարին այն տեղերի բնակչաց համար կազմում է մի ցերեկ, բաղկացած վեց ամսից և մի գիշեր՝ ևս նոյնչափ ժամանակից: Դուք խաղում էք այն տեղի բնակիչների վերայ. իրաւ երկրի այն մասը, ուր մեր բնակութիւնն է, ինձ ևս չափազանց նախամեծար է երևում: Ձեր մէջ զարթնած կարեկցութիւնը չափաւորելու համար, կարող եմ ես ձեզ ասել, թէ արեգակի բացակայութիւնը նրանց համար մի մեծ դժբաղդութիւն չէ, ինչպէս մեզ համար, եթէ որ նա յանկարծ դրկէր մեզ վեց ամիս լրա բարութիւններից: Այն տեղերի պտուղները զանազանուում են մեր պտուղներից և կերպաւորուած են բնութենով այնպէս, որ կարող են հասնել այն կլիմայի տակին: Բնակիչները կարելի է բաղդաւոր են, ինչպէս մենք մեր բաղմատեսակ վայելչութիւն-

ներով։ Նրանք մշակումեն ամառն արիաբար ձմերային կերակուրը ժողովելու համար և կաքաւում ու երգում աշխանակի անդոր լուսի մօտ այնպէս, ինչպէս մեր գիւղացիք արևի պայծառագայթները տեսնելիս։

Տիգրան, ձեր պատկերը ցոյց է տալի, թէ դուք բոլորովին չէք բաւականացել իմ մեկնութիւնովը։ Ասացէք, ես սիրով կլսեմ ձեր տարակուսութիւնները։ Ա՛հ, ես իմացայ։ Դուք մտածումէք, եթէ երկիրը պտըտումէ իրա չորս կողմով, մարդիկ, որ մեր ոտի տակին են երկրագնդի միւս երեսին կախ ընկած՝ պիտի վայր թափուին նրանից ու ընկնին երկնքի վերայ, որ շրջապատումէ նրան ամէն կողմից։ Ես շատ ուրախ եմ, որ դուք հաղորդելով ձեր տարակուսանքը ինձ, միջոց էք տալի ցրուելու։ Դիցուք թէ այս երկրագունտը թղթից չէ, մագնիսից է. չէ՞ որ եթէ մօտեցնէինք նրան երկաթի կտոր վերևից կամ ներքևից, նա նրան անշուշտ կքարշէր դէպի իրան և եթէ մագնիսեան դունտը պտոյտ տայինք իրա չորս կողմով, երկաթի կտորը նրանից չէր բաժանուիլ, թէպէտև բարձրանար և ցածրանար դնտի այն մասը, որին նա կպած էր։ Իրաւ, ասումէք այդպէս լինումէ, նրա համար, որ մագնիսը քարշումէ երկաթին. սիրելի, ահա՛ դուք ինքեանքդ լուծեցիք ձեր դժուարութիւնը։ Երկիրը ձգտողական զօրութեամբ քարշումէ մեզ դէպի իրան, ինչպէս երկաթին՝ մագնիսը։ Մագնիսեան դնտի կեդրոնն է, որ քարշումէ երկաթը. նմանապէս երկրի կեդրոնն է, որ քարշումէ մեզ։ Ինչպէս կուզէք պտըտեցէք երկրագունտը, մենք միշտ մեր ոտների վերայ կ՚ընինք, միշտ ուղղուած ենք դէպի կեդրոնը երկրի, մինչդեռ նրանք նորա մակերևութի ամէն մի կետի վերայ են։ Դրէ՞ք ասեղը ձեր մագնիսի վերայ ու պտըտեցէք իսկոյն ձեր մատների միջում. ասեղը ներքևն է այժմ, բայց չէ՞ վէր ընկնում, փորձեցէք բաժանել նրան մագնիսից, նա կ՚ընդդիմանայ։ Տուէք նրան այժմ ազատութիւն, նա նորէն կ՚դառնայ դէպի մագնիսը թէպէտ և ներքևից դէպի վերև ու նորէն կ՚ընկնի նրա վերայ։ Այսպէս էլ լինումէ մեր երկրագնդի այն մասնումը, որ մենք անուանումենք ներքևի մասն, եթէ ես բաժանէի ձեզ երկրից ու թող տայի ձեր կամքին, դուք նորէն վէր

կընկնէիք երկրի վերայ։ Ասեղը կեանք չունի, ուրեմն չէ կարող ինքն իրան պտըտուիլ մագնիսի վերայ, այսպէս էլ քարը չէ շարժուում ինքն իրան երկրի վերայ։ Մարդիկ, կենդանիք կեանք ունելով՝ շարժուելն, չ՚նայելով այն զօրութենին, որ քարշում է նրանց դէպի կեդրոնը երկրի, որովհետև երկրի մակերևութի ամէն մի մասը հաւասար հեռաւորութիւն ունենալով՝ այն կէտից կամ կեդրոնից, քարշում է այնպէս ինչպէս միւսները։ Երբ նստումենք ձիու վերայ, երկիրը միշտ քարշում է մեզ, բայց չենք վէր ընկնում, որովհետև ձիու մարմինը մեզ պահելով՝ բաժանում է երկրից, թէպէտև անկարելի է վէր ընկնել ձիու մէջքից, բայց եթէ ձին վազելիս թամքը անդադար շարժի ձախ ու աջ, մենք անմիջապէս վ՚ր կընկնիմք երկրի վերայ։ Դուք զարմանում էք, որ մենք չենք ըզդում երկրի շարժողութիւնը։ Առաջուց ես ձեզ պիտի ասեմ, որ նրա շարժողութիւնը մեզ համար անզդալի է, թէպէտ նրա ընթացքը չափազանց արագ է, որովհետև չէ պատահում նրան ընդդիմանող մարմին, վասնորոյ և նա չէ պատճառում երերանք, ինչպէս շատ անգամ այս պատահում է մեզ, երբ մենք չենք ըզդում մակոյկի շարժողութիւնը, երբ նա գնում է ջրի հոսանքի ուղղութեամբ։ Դուք կարծում էք, թէ շանտաճանճը երբ նստած ըլի բաւականին մեծ գնտակի վերայ, կարող է զդալ նրա շրջապտոյտը։ Ամենևին ոչ. որովհետև ոչինչ չի փոխուիլ նրա չորս կողմումը և բոլոր առարկաները նրա աչքի առաջև կմնան մի և նոյն տեղումը, նա բնապէս պիտի ընդունի նրան անշարժ։ Մենք և՛ս դոյն այդ պատճառով չպիտի նկատենք երկրագնդի շարժողութիւնը, որովհետև ինչպէս մենք, նոյնպէս էլ ամէն բան, որ մեզ շրջապատում է, ընթանում է նոյն արագութեամբ։

ԼՈՒՍԻՆ

Դարձնելով ձեր միտքը դէպի երկինքը, ես չպիտի մոռանամ խօսիլ ձեզ հետ և լուսնի վերայ, որ երկրի հաւատարիմ ընկերն է։ Լուսինը շրջելով երկրի վերայ, ընթանում է նրա հետ արևելեան չորս կողմով և լուսաւորում է նրան ա-

բևի բացակայութեան ժամանակը։ Կարծումեն, թէ լուսինը համարեա այն բնութենից է կազմուած, ինչ բնութենից որ կազմուած է այս երկիրը, որի վրայ մենք բնակումենք և թէ յիսուն անգամ փոքր է նրանից։ Նրա բնակիչները, եթէ որ իրաւ նա բնակիչներ ունի, ստանումեն ինչպէս էլ որ մենք լոյսը արեգակից և քաղումեն մի և նոյն օգուտները նրա ջերմութենից ու կենսաբեր ճառագայթներից։ Եթէ մենք ըլէինք նրա մակերևութի վերայ, երկիրը այս կէսից կերևէր մեզ իբրև լուսին, բայց աւելի մեծ, ուստի և աւելի մեծ փայլմամբ կցոլացնէր արեգակից ստացած ճառագայթները։ Լուսինը և երկիրը շատ թանձրութիւն ունենալով, չեն թողնում որ արեգակի լոյսը թափանցէ ու անց կենայ տարածութեան մէկ երեսից դէպի միւս երեսը։ Արեգակը կարող է միայն լուսափայլ կացուցանել մակերևոյթը, ինչպէս աշտանակը լուսաւորումէ առարկաները, որոնք առանց նրան պիտի ծածկուէին խաւարի մթութենումը։ Վերառէք իմ ժամացոյցը ու դրէք մութը տեղ, նա չէ երևում։ Ընդհակառակն դրէք աշտանակը, որ լոյս արձակէ նրա վերայ և դուք կտեսնէք նրան լուսաւորուած, որովհետև նա ստացաւ նրա լոյսը։ Այսպէս էլ լուսինն է հասկացէք։ Մենք տեսնումենք լուսաւորուած նրա մակերևոյթի այն մասը, որի վերայ ուղղած է արեգակը իւր փայլումը։ Երբեմն տեսնումենք նրա սկաւառակի կէսը լուսաւորուած, երբեմն նրա բոլոր մակերևոյթը փայլած։ Արեգակը չէ փայլում միշտ նրա բոլոր կէսի վրայ միանգամ։ բայց պատահումէ, որ նրա այդ կէսի սկաւառակի մի մասը ծածկուումէ մեզանից։ Երկրագնի արհեստական օգնութենով ես այդ բանը կարող եմ ձեզ հասկացնել աւելի հեշտ, քան թէ ուրիշ օրինակով, որ կարող եմ բերել ձեզ համար։ Դիցուք թէ այս աշտանակը արեգակն է, այս երկրագունտը լուսինն է, ձեր դլուխն էլ երկիրն է։ Երկիրը պտտումէ արեգակի չորս կողմով, լուսինն էլ երկրի, համարեա թէ մի և նոյն մակարդակի վրայ։ Հեշտ է ձեզ ներկայացնել այդ շրջողութիւնը։ Դնենք առաջ լուսինը երկրի ու արեգակի մէջ, այսինքն՝ երկրագունտը ձեր ու աշտանակի մէջ։ այսպէս է դրութիւնը լուսնի, երբ նա նոր է։ բոլոր մակերևոյթը երկրագնի լուսաւորուած է դէպի

նա դարձած աշտանակով, ուրեմն դուք չէք կարող նրան նկատել, բոլոր մութ կէսը դարձած է դէպի ձեզ, նմանապէս դուք նրան տեսնել չէք կարող։ Այդպէս նոր լուսինը ծածկուած է միշտ մեր աչքից։ Եթէ երկրագունտը փոքր ինչ դարձնենք դէպի ձեր ձախակողմը, դուք սկսում էք նկատել նրան լուսաւորուած մի փոքրիկ մասը, որ մեծանում է փոքր առ փոքր և երկրագունտը հասնում է մինչև քառորդը այն շրջանին, որ ես նկարել եմ ձեր չորս կողմով։ Դարձրէք գլուխը դէպի ձեր ձախ ուսը, դուք տեսնում էք նրա լուսաւորուած կիսի կէսը. ահա՛ առաջին քառորդ։ Այս քառորդը մեծանում է հետևաբար, մինչև որ երկրագունտը անցնում է ձեր քամակը։ Դարձէք մէջքով դէպի աշտանակը, դուք կը տեսնէք երկրագնտի բոլոր կէսը լուսաւորուած, որովհետև այդ կէսը դարձած է դէպի ձեզ այն ժամանակը, երբ նա նայում է աշտանակին. ահա՛ այս այն դրութիւնն է, որ կոչում ենք լրացեալ լուսին։ Բայց երկրագունտը աւում է իւր շրջանը և լուսաւորուած մասը նուազում է մեր աչքի առաջև այն կարգով, ինչպէս մեծացել էր. սորանից յառաջանում է լուսնի նուազումն։ Դուք արդէն տեսնում էք, որ երկրագունտը ներկայանում է իւր լուսաւորուած կիսի երրորդ մասնումը, յետոյ այդ կիսի կիսումը. ահա՛ ձեզ վերջին քառորդ։ Դուք տեսնում էք, որ այս քառորդը կամաց կամաց մեր աչքից ծածկուում է, մինչև որ երկրագունտը նորէն կ դառնայ նոր լուսին այսինքն՝ կմտնի ձեր գլխի ու աշտանակի մէջ։ Լուսինը դարձ է անում քսան ու եօթն օր, եօթը ժամ, քառասուն երեք րոպէ երկրի չորս կողմով պտտելու համար և համահաւասար ժամանակ իրա չորս կողմով։ Հասարակ աչքով լուսնին նայելիս, մենք ընդունում ենք նրան մի մեծ աստղ, բայց հեռացույցի կարգէ դուրս զօրութիւնը թոյլ է տալիս մեզ տեսնել նրա վերայ զանազան ձևերով լուսափայլ բիծեր, որոնց ոմանք համարում են քաղաքներ ու լեռներ։

ԳԱՆՁԱԿ ԲԱՂԱՐԻՑ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՆ

Միանգամ Անգղիայումը մի ընկերութեան մէջ գտնուելով՝ մի յաջթանգամ և խստադէմ Անգղիացի մօտացաւ ինձ և սպառնական ձայնով ասաց. «Օտարական պարոն, խմանում եմ, որ Հայազգի է՛ք դուք. ես ցանկանում եմ խմանալ, թէ մեր վեհափառ թագուհւոյ մօտ ձեր ազգի կողմանէ նստող դեսպանի անունն ինչ է և ո՞րտեղ է նա բնակուում, որովհետև մի կարևոր գործ ունիմ նրան հաղորդելու»։ Այսպիսի մի բնական, բայց անակնկալ հարցմունքի պատրաստ չլինելով՝ մի քիչ կանգ առայ ու այս Անգղիացու երեսին նայեցայ, որ տեսնեմ, թէ ծաղր է անում իմ չփոթուելուս վերայ ծիծաղելու դիտաւորութեամբ, թէ միամտաբար է խօսում։ Երբ որ տեսայ, թէ ինքը սառը կերպիւ և առանց չփոթելու սպասում է պատասխանիս, ասացի. — «Պարոն, ներկայ դարուս Հայը իր քաղաքական կացութեանը համեմատ չորս հինգ տէր և չորս հինգ տյլադէմ պաշտօնական դեսպաններ ունի ուրիշ տերութեանց մօտ, բայց բուն Հայոց ազգի դեսպանը Հայն ինքն է, ուստի կարող է՛ք ինձ հաղորդել ձեր հարկաւոր խօսելու բաները»։ Անգղիացին մի քիչ ծուռը մը-տիկ տալուց և դէմքս մինչև ոտքերս չափելուց յետոյ, ասաց. — Ես ամենևին չէի յուսալ, որ քու կերպարանքի տէր մի մարդ դերի լինի։ — «Բայց դուք մոռանում է՛ք, ասացի, որ Անգղիայ ոտք դնողն ազատ է»։ Այս խօսքերիս վերայ ձեռքս բռնեց ու այնպէս սղմեց, որ հինգ բոպէից յետոյ իմս լինելը զգացի. ապա տալով ինձ իր տոմսակալները, խնդրեց, որ միւս օրը գնամ իր տունը և իրան տեսնեմ։

Նշանակած ժամին անվրէպ գնացի։ Պարոն Հայլէյ իմ ծանօթս մի ծրար ձեռին մօտ եկաւ ու ասաց. — Մի քանի տարի յառաջ բարեկամներիս մէկը մեռնելու ժամանակը մի ծրար լիքը նամակներ յանձնեց ինձ, որոնց սառները ինձ համար, հինգ գիտենաս, Արաբերէն են. դէս ու դէն ցոյց տուի, ոմանք ասացին Եգիպտական նշանագիրներ (հիէրոգլիֆ) են, ոմանք կախարդական թղթեր և միւսները, թէ Հայերէն են, մինչև անդամ Հիպոկրատէսի դեղագիր են, ասող ես եղաւ։

Սակայն ես կարծում եմ, թէ ձեր հին Բարլամենդի գիւանիցը դուս բերած մանր մունր յիշատակագրեր են, սրա համար ուզում էի ձեր դեսպանին յայտնել։ Ահա բացէ՛ք նայեցէ՛ք, թէ քեզ պէտքը կգան և մի՞ջիցը օգուտ կարող է՛ք քաղել, առանց իմ անկախութեանս դիպչելու ձեզ կը-լաչեմ այս ծրարը, սակայն այն պայմանաւ, որ ինչ օգուտ որ քաղէ՛ք, կիսին բաժանող անէ՛ք ինձ։

Ծրարը բաց տրի, աչքդ բարին տեսնի. խառնիխուռն հաւաքած գրքոյրաւ և մի քանի լէ Անգղիերէն նամակներ ու չատ պատմէններ, որը

խանգարուած, որը ջնջուած և մեծ մասամբ Անգղիացիներից գրուած։

Զարմանալի բան է, ասացի բարեկամիս, որ ձեր նախնիքը ձեզնից աւելի տեղեկութիւններ են ունեցել մեր ազգի վերայ, որ մինչև անգամ Հայերին նամակներ են գրել իրար։ Լաստանք ինչպէս հետաքրքրական գրութիւններ, հարկաւոր կլինին մեզ, բայց ինչպէս օգտակար տպրանք, մի փող չեն արժել։ —Ուրեմն, ասաց, քցեցէք կրակը, և ասենս, որ մի քանի պահարան և բաւականին աշխատութիւն կորցրի այդ չնչին թղթերը պահելու համար։—Դուք այնպէս համարեցէք, թէ կրակն էք քցել և մոխիր են դարձել, ասացի նրան. վասն զի պէտք է էստանք ես հրատարակեմ։ Այս ասելով չնորհակալ եղայ նրանից ու դրսանս դրի։

Ահա այս նամակները, որ դրաբարի ու Անգղիերէնի խառնուրդ էին, աշխարհաբառ թարգմանելով և ըստ կարողութեանս կարգի դնելով՝ նը-ւիրում եմ Հայ հասարակութեանը։

Յաւելին այս է, որ այս նամակների թուականը ջնջուած էր, ուստի և չկարողացայ որոշել, թէ որ ժամանակի Հայերին են վերաբերում։ Սա-կայն որանց մէջ յիշուած դէպքերից կարող ենք վէր ի վերոյ մի ժա-մանակագրական կարգ հանել։

Այս նամակների ընդհանուր նիւթը խառն է և մասամբ իւիք Հայե-րի վերայ. տեղ տեղ այնպիսի ակնարկութիւններ և անզգիական տեսու-թիւններ կան, որ մեզ համար փոքր ինչ մութն են. կան նաև այն-պիսի անաչառ դատողութիւններ և յանդուգն կարծիքներ, որոնք դուցէ մեր ինքնասիրութեանը կդիպչին, սակայն թարգմանութեանս պաշտօ-նին հաւատարիմ մնալու համար, բնագրերիցը բոլորովին չհեռացայ։

Եթէ ընթերցողն այս թղթակցութեանց մէջ սխալ դաղափարներ և տարօրինակ խորհրդածութիւններ տեսնի, անտարակոյս պէտք է մտա-ծէ, որ խրոխտ և անկախ Անգղիացիքն են անողները. օտար ազգիքը, ո-րոնք մեր վիճակն իրանց յատուկ դիտակովն են քննում, և չէ կարելի տրանցից այն ակնառութեանը սպասել, որով ինքը օտարների առաջին իր ազգի պակասութիւնները կսքօղէ և կպարտակէ։ Բայց էստով պէտք է մխիթարուի կարդացողը, որ եթէ այն անաչառ քննիչները կրկին յետ դան և իրանց քննութիւնն սկսեն, շատ տարբեր կդտնեն Հայոց ազգի վիճակը և ուրիշ շատ լրագրաց նման դոլիսաներ չեն խնայել տալու. վասն զի որ ազգը Հայի պէս արագ յառաջ է շարժում յառաջադիմու-թեան և քաղաքակրթութեան առաջարիզումը։ Ինչպէս ոմանք կարծում են, Հայոց հանգամանքն և հերքիւլեսեան ընթացքը անվրէպ Մասեաց գա-գաթը պէտք է տանի նրանց։

Մատթէոս Մամուրեան։

ՆԱՄԱԿ Ա.

ՆԵԼՍՈՆ ԱՌ. ՎՈՒՏ

Ի. Պոլիս . . .

Բարեկամ, որանից մի չաբաթ առաջ այդտեղ Լօնտօնումը քեզ մօտ էի, այս առաւօտ չոգենաւն ինձ այստեղ բերեց երեք հազար մղոն տեղն ինն օրուան մէջ կտրելով։ Մի ճանապարհորդութեան նկարագրութիւնը անելու համար, շատ մարդիկ կարող են բաւականին աղուկալի թերթեր լցնել, իսկ ես էստոնք զանց եմ առնում, այսքան միայն ասելով, որ չոգենաւի շարժումն անդամ ծանր թուեցաւ ինձ։ Արդեօք որ օրը մարդիկ թռչունի պէս պէտք է թռչին։ Անշուշտ Մեծն Բրիտանիա թեւեր պէտք է տայ աշխարհիս. այս դիւտս կվերարերի նրա հնարագիտութեանը։

Ահա փափաքիս հասայ. Հայ եմ լեզուով և քեզ հայասիրիդ հայերէն գրելու առիթ ունիմ։ Եթէ իմ Անգղիացի լինելս չդիտենայիր, կարծեմ, որ դիրս կարդալիս, ինձ բնիկ Հայ կհամարէիր։ Սակայն այս բանիս վերայ բոլորովին վստահ չեմ, վասն զի գրիչը՝ որի եւեիցը մարդս իրօք չի երեւում, որչափ վարժ լինի և մաքուր գրէ, եթէ գրողն ինձ պէս օտարազգի է, կարող է մի այնպիսի նորաձև խմասա, ոճ կամ զարձուածք յառաջ բերել, որ իսկոյն մատնուի։ Ո՞ւր մնաց Անգղիացիս, որ աշխարհիս բանական կենդանեաց միջին այլանդակն է, որ իր կազմութեամբը և բնութեամբը ազգերի մէջը մի աննման երեւոյթ է, որ ինչ վարագուրի տակ էլ մտնի, մի մղոն հեռաւորութիւնից իր շուքը միայն իրան կմատնէ, իր դէմքը, քայլուածքը, փեղուրի ձեւը, ձայնի չեչաը և մինչև չունչն անդամ ամէնի առաջին իրան կյայտնեն։ Մեր որ վարմունքը կամ որ գործը կնմանի օտարներին. խառնէ մի հատ Անգղիացի մի մկիսոն Եւրոպացու մէջ, ես քեզ հեռուից մատով ցոյց տամ նրան. ամբ աչխարհիս մէկ ծայրը, նա այնտեղ էլ իր հետ կտանի իր բնական և հայրենական սովորութիւններն ու դաղափարները։ Մէկը մի նոր, անմերձենալի և անյայտ երկիր դտնա, ինչպէս Տրէքը. ահա նա Անգղիացի է. միւսը սաւուցեալ բեւեռը ոտքը դրեց, ինչպէս Ֆրանքլին, Անգղիացի է և նա. մի խորհուրդ եղաւ Ովկիանոսը պատռելու և հին ու նոր աշխարհը մի թելով իրար հետ կապելու համար. անդղիական է և այդ խորհուրդը. ընկերութիւններ հաստատուեցան բոլոր տիեզերքը մի ապակեայ պատի մէջ պարունակելու և մի ահաւոր ծովածուփ քաղաք* անդունդի վերայ կանդնեցնելու համար, Անդղիացւոց դրդելովն են։ Այսուհետև որ Անգղիացին կարող է ասել. «Ես ասիածս, երբ մի մանաւոր նպատակի համար կովի մարթ հանդիմ, պիտի ցաւիմ, որ բաշն ու

*) Հակոբական Լեյվադան կամ Մեծն Արեւելեան նաւը։

մանչիան ինձ կերևացնեն»։ Մթթէ փառք չէ բարեկամ, որ մարդս իր մարդկութեան և աղգութեան մէջ միչտ ուամէն տեղ ճանաչուի։ Աւելի չեմ սիրիլ քո անչքնական մերկութեան մէջ ման գալ ու յայտնուիլ՝ քան թէ օտարի մարթը քեզ սեպհականել, մանաւանդ՝ երբ որ մարթը տաք է ու մարմնոյն վակչել կբռնէ։ Ճշմարիտ, որ մի ախորժելի վիճակ չէ, ատուն թիւնից անատուն դառնալ։ Կան այնպիսի մարդիկ և այնպիսի ժողովուրդ, որոնք քաղաքականութիւն են համարում մի ժամանակ անբան դառնալ, որի վերջը չգալով՝ նոյն քաղաքակրթութիւնը փոխուում է սովորութիւն և ի հարկէ իրանք էլ չեն կարողանում իրանց պչերը տեսնել։

Ուստի անհոգ կաց, աղգային գոռողութիւնդ թող չվիրաւորուի, փոքր ինչ ժամանակ ինձ հայագիր տեսնելուդ համար։ Մի վախենալ, ոչ պոչ ունիմ և ոչ ստանալու փափաք։ Տրդատի լեղուով խօսելու համար նը բա պէս վարաղ չեմ համարուիլ։ Անգլիացու խմորը չատ պինդ և զօրաւոր է և ուրիշ թթու խմորների մէջն անգամ զուտ և անարատ կմնայ, Աւելի հեշտ է Չիմալայա լեռը զլորել՝ քան թէ անգղիական ընատուր ինքնասիրութիւնս, որ չաղախուած է հայրենասիրութեանս հետ, չնչել։ Այս առաջին անգամը չէ, որ ես զանազան աղգերի մէջ թափառում եմ, և ինչպէս դիտես, այս հեղուն նպատակս մի ուսումնական հետազօտութիւն է, որ ներքին պէտք է բացատրեմ։

Ցոյները Ցոյն չլինողին բարբարոս էին կոչում և նրանից հեռու էին կենում, սակայն մեղնից աւելի ազգասէր չէին։ Մենք օտար աղգերին չենք ատում, այլ քննում ենք նրանց, ինչպէս բուսաբանը քննում է տունկերը, որպէս զի եթէ նրանց մէջը մեզ համար անծանօթ բնական յատկութիւն, պիտոյք կամ փափաք գտնենք, նրանցից օգուտ քաղենք։ Մեր հայրենիքը մեծ կորուստ չի ունենալ, եթէ ինձ պէտքերը թողուն և օտար աշխարհ գնամ։ Իր կառավարութեան անիրաւ դարձնող արժանաւոր և ընտիր անձինք ունի իր ծոցումը, իր իրաւունքը և աղատութիւնը պաշտպանելու համար ախոյեաններ չեն պակասիլ այնտեղ։ Եւ մթթէ ես հեռու լինելով, և ծերունի Անգլիացի յիշատակները և սիրելունքը սրտումս պահելով, ինչ ձեռնարկութիւն և ինչ գործ որ ունիմ, միչտ իմ աղատ հայրենի աշխարհի համար չեմ արած լինիլ։ Մի Անգլիացի եթէ աշխարհաշրջիկ լինելուց յառաջ մարդ լինի, Անգլիացի լինի.—ինչ ճիգն, ինչ քրտինք որ թափէ, ինչ արիական գործքեր որ անէ, էս օգտաւէտ սղբիւրից բղխածը կերթայ բրիտանական մեծութիւնն և բարգաւաճութիւնը կշատացնէ։ Քանի քանի սասկոսիաններ իրանց քաջութեան և հանճարի զօրութեամբը և աննկուն յանդգնութեամբը սրատաճառ չեղան մեր մայրենի երկրի աղդեցութեանը և աշխարհակալութեան տարածուելուն։ Ցատն հաղարաց նահանջը, Թերմոպիլի գործը չնչին և հասարակ բաներ են համարուում նրանց չահատակութեանց առաջին։ Մեր մայրերը փոխանակ մեզ Սպարտացի կնկան պատուէրը

ասում, թէ «թշնամուդ յաղթէ և թող քո վահանը չլինի կամ քո յաղթական դանը կամ քո դաւաղանը», ասում են. «Ձեր հայրենիքն են ձեր ամրոցն (ծծմէր) ու պաշտպանը, և ձեր աշխարհն է ձեր ասպարէզը. մտէք այնտեղ. ձեր աղատական, արի և արդար գործքերը արձագանք պէտք է տան մեր որոշ և պատմութեան մէջ, գնացէք»։ Եւ ահա մի Գուք, անյաղթ նահապետը վեր կ կենայ և աչի արիւն չրջոնը կ կատարէ, մի Հիւսիսն՝ Ամերիկեան հիւսիսը և նոր նոր շաւիղներ կ դանէ. մի լորտ Բլայմ մի փոքր գնոով բոլոր Հնդկաստանին կահայնէ. Լիվինգսդոնն՝ Ափրիկէի խորերը կթափանցէ։ Բայց, բարեկամ, ինքնապարծութիւն չը լինի ինչ որ պէտք է ասեմ. ընչիցն է, որ ուրիշ ազգեր մեր աղատասիրութեան, անվեհերութեան և գործունէութեան վրայ զարմանում են։ Պատասխանդ գուշակում եմ. պէտք է ասես, թէ նրանք մեզ պէս չեն դաստիարակուում։ Վասն զի ընտիր կամ թիւր դաստիարակութեան համեմատ մարդս կամ մեծ ու քաջ կլինի, կամ ստորին վատ ու անբան. այս զիտեմ. սակայն մեր հոդու մէջ մեզ միշտ դէպի հոյակապ գործքեր մղող զրգիռից աւելի ուրիշ զրգիռ չկայ։ Կարծեմ, փոքր ինչ մեր երկրի զիրքը, մեր կառավարութեան վիճակն և մանաւանդ մեր հնագրքը քիր և ինքնասատան հոգին զրդռում են մեզ դժուարութիւններին դէմ կենալով դուրս ընկնել՝ Անդղիային նոր նոր զուներ, առուտրի նաւահանդիստներ բանալու, աղատութեան շունչը ազգերի մէջ սփռելու և ամէն բանի էութիւնն ու պատճառը քննելու համար։ Իսկ այս ամէն պատճառները չահասիրութեան ոգին է պսակում, և ահա այս ոգին է, որ անմիտ մարդիկը իրրև նախատինք մեր երեսին են տալի։ Ո՞ր մարդը, որքան մեծ կոչումի տէր լինի, որքան տաղանդական գործեր ունենայ, չահի և փառասիրութեան համար չի աշխատիլ աշխարհս մէջ։ Անտարակոյս, երբ որ Նիւդին մոլորակների օրէնքն է գտնում, Կալիլէոս ճշմարտութեան զոհ և վերնէր սիրոյ նահատակ է լինում, իսկական չահից աւելի մէկ վսեմ նպատակ են ունեցել. իմաստասիրութեան և անմահութեան սէրն է եղել իրանց հրապուրողը. բայց մթթէ զարձեալ նրանց արդասիքը մեր երախտագիտութիւնը և յարգանքը չեն զրաւում և նրանցից մարդուս միտքը և սիրտը մի չահ չեն քաղում։ Եւ ինչ են վատասկաւոր և լուսաւոր մտքերը. ոչինչ, եթէ ոչ ապագայ կանոնաւոր գործունութեանց աղբիւրն և պահարանը, որտեղից է և նրանց յաջողութիւն և արդիւնաւորութիւնը։ Հմի չկարծես, որ ես էլ Էլանտրի * աշտարակի և Ս. յետ Սոֆիի մօտ գտնուելով՝ մեծ բան պէտք է անեմ և մեր երեսի հայրենակիցների կարդը, (որոնց գովութիւնն անելն աւելորդ է և միայն սիրելի է ազգային հպարտութեանս, որ Հայ լեզուի նորաձև քօղի տա-

*) Դրդ դուլէսի։

կին պահուած է), չկարծեն, ասում եմ, որ այս ճանապարհորդութեանս մէջ փառասիրութիւն ունիմ նրանց կարդումը դառնալու։

Իմ արածս հետաքրքրութիւնից ծագած մի անշա՛ք ձեռնարկութիւն է, որովհետև իրարու խոստովանում ենք, թէ երբեմն այլանդակ տեսիլքների հիանդութիւնը բռնում է մեզ։ Յոյս ունիմ, որ չես ծիծաղիլ վրէս, եթէ համառօտ կերպիւ բացատրեմ քեզ այս առաջին նամակիս մէջ իմ նպատակը։ Արդարև ոչ բարդ, ոչ փիլիսոփայական քար, ոչ ոսկեթել բուրդը* և ոչ Էրօ** դտնելու եկայ Էստեղ։ Սակայն վախում եմ, որ նրանցից աւելի դժուարագտանելի բան չդառնայ որոնածս, թէև պատմութեան մէջ սիլդին և տեղ է բռնում։ Հայրս թոռներ էկայ Էստեղ պտտելու, բարեկամ, և թէպէտ ինչպէս Ասորեստանցիք, Բաղդէացիք և Հռովմայեցիք անհետ են եղել ժամանակի աւերակների տակին, նոյնպէս Հայերին եմ երևակայում նրանց վիճակից, սակայն երբ Անդղիայ էլ, մի քանի տեսարակների մէջ կենդանի Հայի նշոյներ աչքիս առան, հարց ու փորց անելով իմացայ, որ Պօլիս մանաւանդ դունդ դունդ շարժում են և բաւականին շունչ են առնում։ Շատ զարմացայ, վասն զի երբ պատմութիւնների և Հայաստանի մէջ Հայերի մասունքը և ոսկորներն էինք դնում, նրանց յարութիւնն ոչ ներդործեց։ Եթէ այն յարութիւնն ստոյգ է, այսուհետև և ուրիշ յարութիւնների էլ պէտք է հաւատամ։ Ուստի ես՝ որ Գեմարիճի համալսարանի առաջին հայագէտ աշակերտը եղայ քեզ հետ, ես՝ որ այն աղդի դրականութեան և պատմութեան ճաշակը փոքր ի շատէ առել եմ և հիմայ վարժուելու համար նրանց լեզուն մը-բոստում եմ այստեղ, պէտք է, որ այս մասին տեղեկացածս և սովորածս փորձով ստուգեմ։ Կա՛յ մի աղդ, որ մեզ չափ դործ ու փորձ տեսնիլ ուզէ համոզելու համար, մանաւանդ հին պատմական իրայ մասին, որոնց վերջին ապացոյցներ պէտք է հաւատ ընծայել։ Կան շատ առասպելներ, որոնք իրարից օրինակուած են ունոր օրինակելու արժանաւոր անդամ չեն, շատ ադէտ մարդիկ իբրև ճշմարիտ պատմութիւն ընդունում են։ Սիթէ բաւական միջոց չէ, մեր ստացած փոքր ի շատէ մութ տեղեկութիւններն լոյս բերելու համար, Հայի բերանից իր կենդանի լեզուն լսել, նրա սովորութիւններն ու բարքը դննել և նրանից թէ հին և թէ այժմեան Հայաստանի վերայ տեղեկութիւններ քաղելը։ Վասն զի պատմութիւն ասած բանը մէկ պատկեր է, որ նկարողի կողմնասիրութեան կամ ճշմարտասիրութեանը համեմատ մարդկանց և պատ-

---

*) Հայաստանի հիսիսային կողմը մի երկիր կար, որտեղ ոսկեղէն բրթով մի խոյ էր դտնուում. Յասոն բաւականին Յունաց դլխաւոր լինելով՝ դնաց այս խոյը ձեռք ձդելու։

**) Լէանարի սիրտին։

մութեանց գոյնը կամ նսեմ կամ խիստ պայծառ կերևայնէ և նոյն բանը չատ կամ քիչ տեսանելի կլինի մեզ աչքին։ Սակայն բուն իսկ դէպքերի չարժողներն երբ առաջներս բերենք, իսկոյն պատկերի հետ համեմատելով ճշմարիտը կիմանանք։ Ուստի քանի որ Հայեր ճանաչելու հետաքրքրութիւն ունիմ և նրանց հետ միայն պատմութեան մէջն եմ տեսնուել, ինչի չի պէտք է անձամբ նրանց կենդանագրները պըտրռտեմ, քանի որ ասում են, թէ մինչև հիմա շնչաւոր էակներ են։

Այս հետաքրքրութեանս գլխաւոր շարժառիթներից մէկն ես եղաւ մասամբ լսիք Հայի բնութեան նմանութիւնը մերի հետ. ոչ թէ մեր կլիամերկ և խրճիթների տակ որսորդութեամբ ապրելիս և անտառներում թափառելիս, այլ մեր նոր կեցութիւնը նրանց հետ բաղդատելով։ Վասն զի մեր վայրենեաց մորթ հագած և կաղնի պաչտած ժամանակը, նրանք մեսաքսի և զոհարեղինաց մէջը ծփում էին, մեծամեծ պալատներում էին բնակուում, տաճարներ ու թատրոններ ունէին և քան զմերը աւելի մի ընտիր էակ էին պաչտում, այսինքն՝ արեգակը։ Թէպէտ մեղ պէս մի ծովային ժողովուրդ չէր Հայը, սակայն նրանց ցամաքային վաճառականութիւնը մինչև Հնդկաստան էր տարածուում և պատմութիւններից խմանում ենք, որ նրանց բնութիւնները, նրանց ընտանեկան և քաղաքական կեանքը մերից չատ հեռու չէին։ Հայերը չարքաշ, ամրակազմ, աշխատասէր, ճարպիկ ու ծանր մարդիկ են եղել, միայն մեր երկայնամտութիւնից, միաբանասիրութիւնից և հնարագիտութիւնից զուրկ. ուստի և հետևապէս չատ հեշտութեամբ մտել են օտար արիւնարբու իշխանների լծի տակ։ Մէկ Հայ հայր ինչ տարբերութիւն ունէր մեր Ջոնն Պուլիցը։ Երբն նահապետ՝ ընտանեաց և տան տէր լինելով և իրայնոց սէրն ու վստահութիւնը դրաւելով՝ ըստ պահանջման հարկին միանգամայն և օրէնսդիր, դատաւոր և զօրական էր լինում. և եթէ ինքնասիրութիւնը դար, առանց հասարակաց օգուտը մտածելու, վակուում էր իր տան միջումը, որ միանգամայն և իր ամրոցն էր։ Երբ որ տեսնում ենք Հայաստան աշխարհը առանձին առանձին նախարարութիւններ բաժանուած և թագաւորի իշխանութիւնը նրանց աղդեցութեամբը բնականապէս չափաւորուած՝ միթէ մտքներս չի գալի մեր կալուածական (feodal) վիճակի մէկ տեսակը և մեր Լորտերի տիրապետութիւնը։

Վաղարշակ Պարթեւի արածը համարեա թէ մեր Ուիլեամ Յաղթողի օրինակն է։ Առաջինը իր հետ բերած մի քանի զինակից իշխաններին բաժանեց Հայաստանի գեղեցիկ նահանգները, վերջինը իր Նորմանտացի զօրականներին բաժանեց Անդղիայն։ Այս ևս ճշմարիտ է, որ լուսաւորութեան եռանդն ու աղատութեան հոգին հասարակ ժողովրդի մէջ զեռ չմտած լինելով՝ չեն կարողացել ըստ ժամանակին մեզ պէս աղդային տեսակներ և ժողովներ հաստատելու, իրանց իրաւունքը, օգուտը և

անկախութիւնը պաշտպանելու և ներքին քաղաքական կոիւները վերջացնելով՝ արտաքին ասպատակութիւնների դէմ պատերազմելու։ Այլ մեծ մասը որս էին դարձել մի քանի դաս արտօնութեանց տէր և բրոնատէր մարդկանց, այսինքն՝ իշխանաց, նախարարաց և կրօնաւորաց, որոնք մանաւանդ վերջին ժամանակներումս աշխատում էին ժողովուրդը իրար ձեռքից յափշտակելու, իբրև թէ նրանք մի ևնոյն հայրենեաց զաւակը և մի ևնոյն Հայկայ ծնունդը չէին։ Այս ևս իրաւ է, որ Հայից աւելի երեսի աղգեր գերեզման մտան։ Ո՞ւր են Հռովմայեցիքդ, ուր են Կարթագինացիք. Հռովմը մի ծեր քահանայի բաժին ընկաւ, Անիբալի ուրուականը անապատներումն է թափառում, բայց Հայը, որ նրանցից հին է, դեռ կենդանի է մնում։ Ինչպէս մարդիկը, նոյնպէս և պետութիւններն իրարու կյաջորդեն։ Սակայն այն պետութիւնը, որ կծնի, կտարածուի, կփայլի և իր պատմութիւնը մարդկան աղգին թողուց յետոյ, ժամանակի փոշու տակին կանցայտանայ, մինչ այդպիսիների վերայ մարդկօրէն մտածելով՝ կասենք, թէ իր շրջանը կատարել է և ուշադրութեան արժանի է։ Բայց երբ որ մի աղգ իր մահուանը կմօտանայ և չորս կողմից մասամբ խիք իր անզգուշութիւնից զաղանների ճանդը կընկնի, երբ տեսնում ես, որ վերջին ժամուն, քանի որ նրա գլուխը կարում են, եօթնաղիւեան հրէշի պէս մէկ ուրիշ նորը բուս նում է նրա տեղ, երբ նա արեան և արտասուաց հեղեղների մէջից վեր կգենայ, կանդնի և դարէ դար մինչև մեր օրը կհասնի, բոլորովին զերկուած իր հայրենական ժառանգութիւնից և միայն նորա մասունքներն ու բեկորները չալակած՝ այն ժամանակը ոչ թէ միայն այն աղգի վերայ պէտք է դատմանայ, այլ և պէտք է համարել, որ Նախախնամութեան ծածուկ վճիռների մէջին այն աղգի պաշտօնը և առաքելութիւնը ուրիշ աղգերի մէջ տակաւին չէ վերջացել։ Այնա մի այսպիսի աղգի սերունդը տեսնելը կարծեմ թէ և ես էլ թռվմայի պէս եկայ, որ նրա վերքերը շօշափեմ և հաւատամ։ Մէկ կողմ թող այն կարևորութիւնը, որ ունի հնասիրաց մօտ Արարատը, Աղամի եղեմը և նրա ծոցումը գտնուած Նոյի տապանը։ Մի աղգի պարծանքն ու գոյութիւնը այսպիսի հնութիւնների վերայ չեն կայանալ, նրանք միայն պէտք է պատուել առանց քննելու։ Եւ կարծեմ, որ այս բաները Հայերի երեսակայութեան բաժիններն են, որ դուցէ թէ միմիայն ականջներին են հնչում, առանց սրտերը արթնացնելու։ Մի աղգ ճանաչելու համար մի նաւի կամ լեռան երկայնութիւնը չափելով չի լինիլ, այլ պէտք է նրա բարուց հիմնարկութեանց, գործոց և հանճարի մէջ նրանց հողն պտտել, որ ևս նոյն աղգի մէջը մտնելով և տեսնելով կլինի։

Բայց դեռ նոր եմ հասել, ահա փոշոտ ու մրոտ նոտերի քեզ նամակ գրելու. սիրտս չէր տալի տեղիցս թնդալ, մանաւանդ թէ այս հիանալի Պոսֆորի տեսարանիցը հեռանալ, որ հայելու պէս առաջս փայլում է,

թարգմանությունն եմ բարեկամ, կամ թէ ավելի լաւն ասեմ, առաքելի հինգերորդ երկնքումը, այս հեշտութեան օրօրոցումը, որտեղ բոլոր ըղգացմունքս և երևակայութիւնս օրօրուում են և աչքս լիդուր տեղն է ջանք անում դրկել այս օձաձև նեղուցը, կանաչաւէտ լուսրները և ծովեզերեայ պարտէզները, որոնք կարծես թէ օդի միջին դոյն ղոյն նըշոյներ արձակելով, ծածանում են։ Սակայն որչափ պայծառ լինի քո երկինքդ, ով Բլազանդիոն, որչափ սքանչելի թուի քո բնական դիրքդ՝ քո արևի հետ ես չեմ փոխիլ իմ Արզիոնի մշուշը, որի քամակումը վառուած քաղաքակրթութեան շահը հողիներ և մտքեր է լուսաւորում, այն ինչ դեռ քո ունեցածը տանում է դէպի երաղներ և դէպի մեղկութիւնները։

Հերիք է իմ այսքան երկարաբանութիւնս, այս մեր սովորութիւնն է, քանի որ իրար մօտ ենք լինում՝ բերաններս փակած նստում ենք, վասն զի այն ժամանակը մեր վարմունքն են խօսում. իսկ հեռուից չատախօս ենք դառնում։ Ինձ լուրեր հաղորդիր Անդղիայի վերայ, Բարլամէնդի բացուիլը մօտանում է, ինչ խնդիրներ պէտք է շարժին այս տարի։

Գնա տես իմ սիրելեան Լիլիա (Շուշան) և սիրան տա, վասն զի գիտեմ, որ իմ հեռանալս իրան չատ ծանր էկաւ. բայց ինչ օգուտ, էդտեղ էլ լինէի, նրա ծնողաց կամակորութեան և անափառութեան հետ չըպէտք է կարողանայի զլուխ հանել և միշտ պէտք է բաժանուած լինէինք։ Մի Լորդի օրէնքը ոսկին է, իսկ մեր սրտերը միայն անկեղծ սիրով են վառուում։

Խնդրեմ, ինձ առանց դրի մի թողալ. Հայոց վերայ խորհրդածութիւն և լուր եթէ դրես, յօժարութեամբ կընդունիմ, ուստի օգնէ ինձ այս նըպատակումս։ Ապահով եմ, որ հետս կգայիր, եթէ առաջուց միտքս քեզ յայտնէի։

Քեզ սրտահաս բարևներս։

ՆԱՄԱԿ Բ.

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՈՆ

Լոնդոն. . .

Բարեկամ, դիրդ ստացայ, արևելեան քամի, հայերէն ոճ և անդղիական ոգի է բուրում միջիցը։ Նոր եմ խմանում ճանապարհորդութեանդ բուն նպատակը, որ արդարացնելու համար ոքքան լեզու ես, թափել։ Ակն յայտնի բան մի մթթէ լեզուի կարօտ ու զարմանալի է։

Զարմանալուն մեր Հոպան է*, որ ուզում է մարդուս հոգին մի շարժական մեքենայ փոխել, որպէս զի ամէն բանաւոր իրա կամացը հաճոյ սարդէ և գործածէ նրան։ Մարդս պէտք է ճշմարտութիւնը պատռէ, գիտեցածը կատարելագործէ և դժուարութիւններից չյաղթուի։ Որքան որ քեզ չափ հետաքրքիր չեմ նոր Հայի լինչ լինիլը հասկանալու, քանի որ հին Հայի վերայ էլ խիստ որոշ տեսիլքներ չունիմ, դարձեալ ձեռքիցս եկածին չափ պէտք է քեզ օգնեմ այդ քու խուզարկութիւններումդ, տեսնելով որ իմ հպարտութիւնս չպիտի տանի, որ Անգղիայում հայադէտ կոչուիմ ու պրծնիմ և նոյն միջոցումը չգիտենամ, թէ Եւրոպայի կեդրոնումը հայկազունք են գտնուում։ Ես էլ քեզ հետ զարմանում եմ մեր ուսիտութեան վերայ այս մասին։ Ո՞վն է յանցանքը, եթէ մասամբ իւրքը մերն է, մեծ մասամբ Հայինն է։ Նորա համար եմ փոքր մասամբ ասում, որովհետև մեր անթիւ անձնական և իսկական գործերն ուինքնահաճութիւնը մեզ չեն թողում անոչան բաների վերայ ուշադիր լինելու, թէև վարժարանումը սովորել ենք, թէ Պրուդոս ինչի սպանեց Կեսարին, Դեմոսթենէս ինչպէս գրգռեց Աթենացւոցը Փիլիպպոսի դէմը և թէ Արամ ինչ քաղաքականութեան էր հետևում։ Հին պատմական եղելութիւնները ուշի ուշով քննում և մեծ ենք համարում այն ազգին, որի ազդեցութիւնը մինչև մեր օրերն է ներգործում։ Թէ Աստուածներից լինի գալիս և թէ դևերից, երբ մի ազգի կործանման ժամը զարկեց, գիշերը ծալում ենք, աւերակաց վերայ նրա տապանագիրը կարդում և խրատներս առնելուց յետոյ, մնում բարեաւ ենք ասում, առանց յետ դառնալու և նայելու, թէ մեռելի չունչը դեռ վրէն է և թէ նա զլուխը ցերեզմանիցը դուրս է հանել։ Իսկ միւս կողմիցը աւելի մեղադրանաց արժանին մենքը Հայն է, որ չի շարժուում, չի կանչում, մեր աչքին չի երևում և կարծես թէ մի երկնառաք հրեշտակի է սպասում, որ իրան հանի իսոր վիրասիցը։ Լսելոնացիքն անդամ ծանօթ են մեզ և հիւսիսից մուշտակ և ձուկն են զրկում մեզ։ Կովկասի խոր ձերիցը Շամիլի գոչիւնը արձագանք է տալի Եւրոպայումը և մեր համակրութիւնն և ուշադրութիւնը շարժում է։ Մինթէ մենք պարտաւոր ենք միշտ ճրագ և սպեղանիք ձեռքներս առած կիսամեռ դիակներ պատռել և դարման տանել։ Մի հին ազգի ճայնը իր պատմութիւնն է, իսկ նոր ազգինը ապր դործքերը։ Կարելի բան է, որ մի Հայ ազգ գտնուի ու ողջ լինի։ Երևում է, որ այժմեան Հայը արտօրէն առաքինութեան տէր, բուսերու կեանքն է ապրում։ Վասն զի կամ ես ականջ ու աչք չունիմ, կամ նա լեզու, ճայն, Եւրոպայումը գործ և ազգաց կաճառի միջին մի փոքր աթոռ չունի։ Արդեօք Հայկայ ուրուականը տեսար երազումդ. մինթէ Հայը

*Ներեսում է, որ այս տեղ Վասա ակնարկում է Հոպս երևելի փիլիսոփային, որ միահնձան կառավարութեանը ջերմեռանդութեամբ ջատագով մնաց։

մի հիր է, որ սիրամամբ ուրիշի զու

կանգնելու ուժը, այն ժամանակը կարող եմ քեզ հետ ասել, որ Նախախնամութիւնը սահմանել է իրան մի ազգայի և առաքելութեան համար աշխարհիս մէջ։ Իսկ այս առաքելութիւնը մի ազգ ինչպէս կարող է կատարել, եթէ ոչ ստանալով օտար ազգաց վերայ թէ նիւթական և թէ բարոյական մի ազդեցութիւն և իրաւունք և նրանց հետ ունենալով մի յարաբերութիւն։ Ազգերի ասպարէզը մտնում է մարդս իր առանձին զբօշակովը, այնտեղ է բերում իր վաճառելիքը, վճարում քաղաքակրթութեան հարկը և նրա փոխարէն ստանում է անուն, կացութիւն և իր հատատատ զոյութեան երաշխաւորութիւնները։ Այդ քո Հայը ինչ նոր սկզբունք, ինչ նոր դիւտ, ինչ նորահնար գործիք, ինչ տոհմական առաքինութիւն և ինչ ինքնահնար ճարտարութեան արդասիք ունի դուրս բերած ընդհանուր ատենի առաջը*։ Ո՞ր ժողովրդեան սրտին է տիրում, նրա ո՞ր դանդիճի անունն է յիշուում, ո՞ր ընկերական վիճակի և ո՞ր քաղաքական դաշինքների մէջ մի կշիռ ունի. ցոյց տուր ինձ այս բաների մի նշմարանքը կամ մի փորձը և իսկոյն խոնարհեմ քու դրածիդ։

Զեմ ուրանում, որ հին Հայը իր թէ լեզուի, թէ զէնքի, թէ վաճառականութեան և թէ լուսաւորութեան զօրութեամբը իր շրջակայ ազգերի վերայ փոքր ինչ ազդեցութիւն բանացրել է։ Ինչպէս մենք չատ բան ենք սովորել Յունաստանից և Հռովմից, այնպէս էլ Պարսիկները, Վրացիք և Աղուանները նրանից չատ բան են սովորել։ Իրաւամբ է խորենացին ասում, թէ «Հանուրց հիւսիսականաց վեհագոյն էր նա»։ Վեհագոյն էր՝ ոչ թէ իր պատերազմական փառքերի մէջը, որ միմիայն մի ժամ փայլեց, ոչ թէ մարտիրոսների և նահատակների արիւնի համար, որ ընդհանուր եկեղեցու խորանը մաքրեց, առանց Հայաստանը քաջերով պարարտացնելու, այլ Հայոց մաքուր և բարոյական բարուց ունընդրանց հայրենի աշխարհի վերայ ունեցած անյագ տիրոյ համար. և ով գիտէ, դուցէ թէ՝ և այլևայլ մեհեանների մէջ փակուած արևապաշտական մատենագրութեանց համար, որը որ քրիստոնէական անհեթեթ եռանդը հրոյ ճարակ արեց, Հայոց ազգի մի կուռը կտրեց և նրա արմատը քանդեց։ Արևելքն էր մարդկութեան օրօրոցը և բանաստեղծութեան աշխարհը, մթթէ Հայերը չպէտք է ունենային իրանց Պինտարոսը և Հոմերոսը, մթթէ մի Պղատոն չի դուս էկաւ նրանց միջից. անպատճառ ունէին. և երբ խորենացին հին երգերից և առասպելներից մի քանի անդին կտորներ յիշում է, սրանով վկայում է նախ ասածս։ Սակայն դարձեալ այս ամէնը և որքան էլ որ ուրիշ զրաւոր գանձեր գտնուին Հայի ձեռքին, չեն կարող սրանք՝ իր արժանաւորութեան վաստրագիրը համարուիլ, եթէ նրանց ճակատին չդրոշմուի նեռկայ գալուս կնիքը։

---

*) Վատը իր Անդղիական բարէրութեամբը շատ բան է պատանջում Հայից և դեռ նորա արիւնալի վէրքերը չի ճանաչում։

Այսպէս երևակայէ, թէ մի Արշակունի Մասխիցը դուս պրծած՝ գալիս է դէպի քեզ մի ձեռքին Նոյոյ տապանից մի կտոր բռնած և միւս ձեռքին մի ծիրանուոյ կտոր և քեզնից օգնութիւն է խնդրում. միթէ յետ չես դառնալ ու նրան ասել. «Պարոն, քո հայրերի պանծալի պատմութիւնը խմանում եմ և յարգում, դու ինքդ ինչ ես արժում հիմի. քո հայրենասիրութեան և քո արժէքիդ փորձը տուր ինձ հիմի, ապա թէ նրանից յետոյ կարողանաս ինձանից նպաստի իրաւունք ստանալ»։ Այսպէս էլ մի ամբողջ ազգի համար խմայիր։ Հազար տարի էլ որ նա հնոտի և պատռտուած արքունական ծիրանի հագնի և դանէ դուռը մուրացկանութիւն անի մի ասեղ գտնելու համար, էլի անօգուտ է. մի դերձան էլ չունք տալ նրան, քանի որ նա ինքը չունի մի նոր ծիրանի հագուստ կարելու միջոց և կարելու ասեղ։ Ռուսի ներկայ դարումս Հայն ինչ վիճակի և ինչ ճանապարհի մէջ է, այն եմ հարցնում. ճակատագրին է հաւատում արդեօք, եթէ ոչ, իր ապառնին բարեկարգելու յոյսն ունի և մի ազգութեան դէթ նշան ունի վրէն։

Կարող եմ ասել, որ մարդիկ այն շրջանի միջին մի և նոյն լեզուն, մի և նոյն կրօնը և մի և նոյն արհեստն միայն ունենալով՝ մի ազգ չեն կազմիլ։ Ահա քեզ օրինակ Ամերիկացիք, որոնք թէպէտ մեր կրօնն են, համարեա, դաւանում, մեր լեզուովն են խօսում և մանաւանդ թէ մեր ազգից դուս եկած՝ մեր զաւակներն են, սակայն որքան որ Հնդիկը, այնքան էլ նրանք ի ներքուստ մեզ չեն նմանում, թող միւս կողմը նրանց մեզ հետ ունեցած ատելութիւնը, որ մեր Լորա Ջէմաղի բռնաւէր քաղաքականութիւնից ծագեց։ Ուրեմն մի ազգութիւն պէտք է հիմնուած լինի աւելի էական և հաստատ պայմանների վրայ, և որանց աղբիւրը պէտք է որոնել նախ մարդուս սեպհական բնութեան մէջ։ Վերա՛ռ, մի որ և իցէ բաւական մեծ ժողովուրդ՝ մի հողի վերա բնակուած և մի տոհմից յառաջ եկած, քննէ նրա թէ նիւթական կազմուածքը և թէ բարոյական յատկութիւնները, նշանակէ նրա հողին, բարքը, կենցաղավարութեան կերպը, ընտանեկան և քաղաքական կեանքն ու կայութիւնը, նրա հանդէսները, խաղերը և մինչև նախապաշարմունքներն անդամ, կարդա նրա գրականութիւնն ու պատմութիւնը ու բաղդատէ ուրիշ ազգերի հանդամանքների հետ, եթէ զանազանութիւն գտար, նշանակում է, որ այն ժողովուրդն իր առանձին կերպարանքն ու նշաններն ունի ուրիշ ժողովուրդների մէջ՝ ինչպէս մի անհատ մարդ բազմութեան մէջը և այն ժողովուրդը արժանի է մի առանձին ազգ կոչուելու։ Իսկ նախակարգ կնամարուի ազգաց մէջ, երբ կատարում կլինի իր ամէն թէ ընտանեական, թէ կրօնական և թէ ընկերական պարտաւորութիւնները, լուսաւոր դասակարգութեան պատուները վայելում կլինի, արդար օրէնքի և իշխանութեան տակ կառավարում էլինի, իր հայրենի աշխարհը, իր դոյութիւնը, ազատութիւնը և իրաւունքը պաշտպանելու համար վերջին աստիճան

հիրն թափում կլինի և լիակամ յօժարութեամբ զինուորուում կլինի չարաղէպ և թշնամական արկածքների դէմ։ Արդարև այն ժամանակն ահա այն աղբի դէպի մի դեղեցիկ ապագայի յառաջ դիմելը կ՚յայտնուի։

Բարլամենդի բացուելուն թէև ասկաւին ժամանակ կայ, սակայն արդէն թէ զրաերումը, թէ ժողովքների, թէ լրագիրների և թէ անձերի մէջ, թէ լոյս, թէ վաճառական, թէ կին և թէ ծառայ, ամէնքն էլ խօսում են այն խնդիրների վերայ, որոնք այն մեծ ասէնի վիճարանութեան նիւթերը պէտք է լինին։ Անդրիայցին իրան պարտք է համարում ոչ թէ միայն աղատօրէն առանին գործերով զբաղուիլը, այլ և քաղաքականութեան վերայ խորհիլը, որ պինդ կապուած է իր օգտի հետ։ Չկայ մի այնպիսի խնդիր, որ դեռ մեծ ժողովրդի մէջին չքննուած, հասարակայ կարծիքի տակ ընկած և հաղած ու զտուած չլինի։ Անրադդ է նա և վատ, որի կացութիւնը չի ներում և ինքն էլ կամաւ հրաժարուում է իր երկրի քաղաքական գործերին մասնակից լինել։ Ինչ անուն տանք այն աղին, որի հոգին, կամքը և մարմինը մի մարդի է յանձնուած և նրա ոտի տակին սողում է կամ նրա գաւազանիցը վախենալով, կամ ոսկուցը հրապուրուելով և կամ թէ իր մոլի զանգաղութիւնը։ Ժէքէ-էննէրը* նրանցից յարդի են, նրանք գոնեա մի աղատ օդ էլ է ծծում են։

Սիրուն Վիլիզ գնացի տեսայ, չատ փոխուած դասյ և կարծեմ, թէ մի բան լինի անց կացած ձեր միջին, որ դու ինձանից պահում ես։ Ամէն անգամ ինձ նկատելով՝ քեզ տեսածի պէս էր լինում, սակայն այն անգամը մի սաւը կերպարանք ցոյց տուեց և տրտում էր։ Գէրդ աչքի տակովն անց կացրուց ու ասաց. «Ուրեմն պարոն Նկսանը հիմի բոլորովին Հայ է դառել և այնքան հոգսը հասել է, որ մի մութն աղբի փչրանքը դանելու է ելել, մինչ դեռ ինքն ուրիշի հոգին է փչրում»։ Գատրատատ կանց, մի փոթորիկ պէտք է վեր կենայ գլխիդ, վասն դի Վիլիի անոյշ աչքերի մէջին մի ամպ և մի կայծակ տեսայ։

Ասելու բաներ չատ ունիմ, սակայն նամակի սահմանից դուրս գալը խնամատարութիւն է։ Գրելու բաներս դուշակում ես դու. մենք քո լուրերին անհամբերութեամբ ապասելով սպասում ենք, ոմ Բիւզանդեան Անաքարսիս։

(Պիտի շարունակուի)։

---

*) Ժէքէ-էննէրէն (Ռէֆէնէրէն, Ցէկէնէրէն) Անդրիայումը արուած անունն է, որ ինչպէս և ամէն տեղ դանդ դանդ մեն են դալի դիպիրումը։

ՆԱՄԱԿ

Մեծարգոյ Հրատարակիչ «Կռունկ Հայոց աշխարհին» պատուական Ամսագրոյն։

Վաստակաւոր Արծուին հաղիւ մի տարի հանդիստ տալով իւր խոնջած թևերուն, դարձեալ դէպի պանդխտութիւն թռչելու թևերը կբանայ։ Թող կուտայ Վարագայ Խաչահանդիսատ լեռան հովանիք, թող կուտայ իր ընկել բոյն և այն սրտին սիրած նորափետուր ձագերը՝ Կովկասեան յարերու ստորոտ հանելով՝ կուր դեպի քաղաքաշէն ափերուն հիւր կիջնայ։

Նախապէս քեզ ողջոյն կմատուցանէ, սիրաձայն Կռունկ Հայոց աշխարհին, ու ձեր թևերուն ձայնով բոլոր Ցփփխու բնակիչ աշխոյժոցի Հայկազանց։ Մեր հայրենաբեր ողջոյն տալէն յետոյ բարեհաճեցէք հիւրասիրութեամբ, զու մեր խեղճ Արծուոյն բարի դրաքի Կռունկ, ոյն հետեւալ յօդուած հրատարակել ձեր սիրափետուր թևերով. որ տխուր պանդխտութեանս մէջ ձեր սիրուն Կռնկան խապրիներու մտիկ տալով և ուրիշ քանի մի աղդասիրական թերթեր կարդալով՝ միտքս թելադրեցին զիս, որ Արծիւն ալ իւր ձայն Կռնկանդ խապրիներուն խառնէ Հայոց աշխարհին տանելու։

Մ. Վ. ԽՐԸՄԵԱՆ։

ՁԱՅՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾԻՈՑՆ

Ներկայ դարուս յառաջնութաց շրջանին մէջը Հայաստանեայց դրականութեան երկնուց կամարը փոքր ինչ պայծառութեան աղօտալոյս նշմարանք կըշողշողի։ Հայկայ լուսակարօտ ոգիքները էրրու թէ աղիտութեան քնէն նոր արթնցած սկսեր են այս մթնալուսին տակ փոքր ինչ ուսման խաղերով զուարճանալ։

Հայկազանց այժմեան դրականութեան կամարին ծիր գանազան աստղեր ծագեր են. որը պայծառ, որը աղօտալոյս, որը մեծ և որը փոքր. բոլորն էլ երկնից շրջանին մէջը շարժումնին և կընթանան դանդաղ կամ թեթեւաշարժ իւրաքանչիւր առանձին ճանապարհով. դէպ 'ի միմիայն նպատակ Մասիս կամ 'ի Հայաստան։ Այս փոքր և մեծ աստեղունք 'ի միասին դրեթէ ցիսուսի ծննդեան օրը երևցած Յակոբեայ աստղի նմանութիւն ունին, և նոր աւետիս տալով կառաջնորդեն Հայկայ սերունդներուն դէպ 'ի նորածին լուսաւորութեան մանուկը. որ պա-

ռաւցած մօր Հայաստանի հաղարամեայ ամուլ արդանդէն ցաւերով ու վշտերով հազիւ հաղ ծնաւ։ Այս նորածին մանկան մարմնոյն կազմուածքը խիստ սիրուն, զուարթ և կայտառ կթուի շատերու աչքին. բայց թէ պիտի ապրի՞ երկար կամ ամ՛ելով պիտի զարգանա՞յ սոյն վերջին տկար ծնունդ հսկայական հասակով, ինչպէս չորրորդ դարու այն անդրանիկ ընքանչելի ծնունդ հայկական դրականութեան։ Թող վճիռ տան Հայ բանասէրները. նախատեսութեան աչք չունող մարդիկներէն ո՞վ կրհամարձակի երաշխաւոր լինելու. միայն թէ նախագէտ Աստուած. թէ և փոքր 'ի շատէ մարդն ևս իւր կարճատես աչքով ներկայէն ապառնին կարէ դուշակել երբեմն։

Գիտէք, պատուելի խմբագիրք, արդի ժամանակ բաւական թուով գրասէր հեղինակներ ծնած են մեր մայրենի լեզուի ծոցէն. բայց թէ այս վերջի գրասէր ծնունդները մտքով, հոգւով, սրտով և արուեստով հարազատ նմանութիւն ունի՞ն Մեսրովպեան դարուն մէջ երևցած անդրանիկ ու ոսկեդրիչ Սահակնադիրներուն. կամ թէ վերջիններուն աշխատութեան արդասիքը կրհաւասարի՞ առաջիններուն հոգեկան շահաւէտութեամբ. թող կուտանք այս դատաստանը բանասէր քննիչներուն ճշմարտայոյզ մտաց։

Սակայն մեծ դժուարութեան ու ծանրակշիռ վարձուց պրսակներու արժանի են այժմեան դարու ազգային գրասիրաց արդիւնքը. որոնք արդարև Հայոց նեմմացած դպրութեան կամարը կրզարդարեն հետզհետէ պէս պէս լուսաբեր աստղերով։ Աւելի սիրուն ու գեղեցիկ կրտեսնուին այն աստեղաց նոր նոր երևոյթները, որ շաբաթէ շաբաթ կամ ամսէ ամիս կրծագին հայրենասիրական ճառանչներով ու կառաջնորդեն դէպ 'ի հնոյն Հայաստանի հեռաւոր աշխարհը. միայն թէ այս աստղերու ուղեցոյց ընթացքը զանազան շաւիղներ ունի։ Բացայայտ խօսինք, աստեղալոյս խմբագիրներէն ոմանք կրպրնդեն և կհաստատեն թէ պէտք է արևմտեան Եւրոպիոյ լուսաւորեալ քաղաքակրթութեան ճանապարհով ընթանանք, որպէս զի մեր հին հայրենիքը շուտ հասնինք. ոմանք ևս ընդհակառակ կրպնդեն թէ ի՞նչ պէտք է մեզ Արևմտեան օ-

տար ճանապարհով, ու մեծամեծ աշխատանքով դէպ 'ի Հայաստանը երթալ։ աւելի լաւ է մեր բնիկ սեփհական կարճ ու դիւրին ճանապարհով երթանք, և առանց հայրենասահման դիծէն դուրս ելնելու՝ կորուսեալ հայրենիքը դարձեալ հայրենեաց մէջը դտնելու ջանալ։ Այս երկու հակառակ ուղեցոյցներն ալ իրենց նպատակին նայելով կերևի որ բարի է դիտաւորութիւններն։

Լաւ մտածէ, ուշիմ ընթերցող, սոյն երկատեսակ ճանապարհ երթալու համար սիրտ, խելք և արիականութիւն պէտք է։ վասն զի իւրաքանչիւր ճանապարհ մեծամեծ վտանգներ ունին։ երկու կողմ յալ ու յահեակ խորագոյն անտառներու մէջ դարանամուտ կեցած կսպասեն զանազան գիշերաշրջիկ գազանագողի գազաններ։ Հայկայ պարզամիտ զաւակներ որսալու լեզուի խորամանկութեան ժանիքներ սրելով կդիտեն հեռուանց, որպէս զի յարձակին ու յափշտակեն խեղճ, աղքատ և տառապեալ ժողովուրդ Հայոց։ Մեծ զգուշութիւն, մեծ արիականութիւն և մեծ պատրաստութիւն պէտք է նոցա պատասխիչ ժանիքներէն ապահովութեամբ անցնելու համար։ Հայ սրտեր այնչափ երկիւղով պաշարեալ թուլցած են բազմաժամանակեայ ստրկութեան, ծառայութեան և բազմադիմի թշուառութեան մէջը, մինչև ըստ Սողոմոնեան առածին՝ դեռ ճանապարհ չէլած իբրև վատասիրտ կաղաղակեն թէ «Առիւծ դոյ 'ի ճանապարհին»։ Ո՞ւր են այժմ, ո՜հ, Հայոց անոնման քաջերը, որք երբեմն աղատ սարերուն վերայ սիգաձեմելով առիծներ և արջերը նոցա ոտքի տրոփիւն միայն լսելով որջերու մէջը կ'փախչէին։ Թող դայ մեր քաղցրախօս Եղիշէն և այս տեղը իւր արտասուալից ոտքերը կրկնէ։ «Սպառեցան բարակք որսականք և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց»։

Ուստի Հայոց յառաջադիմութեան քայլ տարակուսած անշարժ կեցած է իր տեղը։ հաղարամեայ մեռեալ ծերունւոյ ոսկորները դեռ յուսահատական ոդով կ'թուլացնեն այս բանակին սիրտ ու ոդին։ «Խորհրդական չէ 'ի մէջն, որ յարդարէ»։ Հայկազանց անդրանիկ բանակը։ Դու, Կռունկ Հայոց աշխարհին։ արօրաձև երամովդ այս տխուր բանակին վրայ ման

կուգաս, քո զբաւոր հանդէսներուդ մէջ աւաղական ձայնիկդ ածելով՝ քնացած հոգիներու նոր արթնութիւն կուտաս, վոսկոս եղանակովդ երբեմն քաջին Վարդանայ հոգեվառ ճառերով կ'սրտասղնդես աշխարհական զինուորներու լքեալ սիրտերը, երբեմն ևս հայրենի եկեղեցեաց ու բազմաթիւ վանօրէից սահմանները շուրջդալով, ձայնիկդ դէպ'ի կղերաց խումբ կ'դարձուցանես. Քրիստոսի զինուորներ, ելէք, առէք ձեր զէնքը, խաչ ու Աւետարանը. Հայոց յառաջադիմութեան բանակ դաշտին մէջ անտէր, անօգնական կեցած ձեզ կ'սպասէ, Յովսեփայ, Սահակայ և Ղևոնդի պէս գիտութեան, լուսաւորութեան և մեր հայրենի եկեղեցւոյ պաշպանութեան դրօշակ'ի ձեռս առեալ անցէք յառաջ։

Ա.հաւասիկ պատրաստ է բանակն ձեր եռեւէն գալու. նրուիրական ձեր խաչին սուրով փշրեցէք, խորտակեցէք գայլերուն ժանիքները, և ձեզ յանձնուած հօտին առաջնորդ լինելով հասուցէք մինչև մեր այն վաղեմի Գրիգորաշէն ցանկապատ դաւիթը։

Ա.յսպէս, երբ որ Հայոց աշխարհի դատարկ օդերու մէջ բարձրաբարող աղաղակներդ կ'ցնդին, ու կանչելով կանչելով կրնուազի ձայնիկդ. պահ մի տխրութեամբ բունիդ մէջ քաշուած կ'լռես տպա ուրիշներ կսկսեն։

Մինչև ե՞րբ Հայոց բանակը տգիտութեան ամայի դաշտին մէջը սպասէ. մինչև ե՞րբ նոցա յառաջադիմութեան քայլը ոտնակապ բևեռած մնայ իր տեղը. մինչև ե՞րբ նոցա աչք ձեր գալստեան նայելով հալի ու մաշի. դուք, ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ անուանեալ կղերք, մինչև ե՞րբ իրրև լուսեղէն սիւն մի ձեւանալով չլինիք առաջնորդ ու ջերթաք բանակին յառաջ. մինչև ե՞րբ չորրորդ դարու գիտութեան լուսափայլ դրօշակը ծուլութեան, անհոգութեան վարշամակի մէջ ծալելով չբարձրացնէք իրրև քաջ դրօշակիր զինուոր մի յառաջ խիզախելով։

Մեր յոյսն ու համբերութիւն հատաւ, ձեր օգնականութեան ձեռքը մեզի պէտք չէ. լաւ գիտցանք ու հասկացանք, որ դուք Աստուծոյ տապանակ կրող քահանայից պէս ժողովրդեան յառաջ չէք երթար։

Եկէք ուրեմն, Հայոց շուարած բանակ, ընտրենք մեր մի-

ջէն ուսումնական անձինքները. թող լոկ աշխարհականք լինին, վնաս չունի, դրաւոր հանդէսներու նոր տեսան մի բանամք, խորհուրդ առնենք, ու համաձայնութեամբ վերջին վճիռը հաստատելով գրենք, կնքենք, հրատարակենք և քարոզենք բոլոր Հայկազանց տանիքներու վերայ. մերժենք միանգամայն բոլոր կղերաց դասը, պարսաւանք, բամբասանք, նախատինք կարկուտի պէս թափենք նոցա գլխուն. այս եղանակ դատապարտութեան կնքով դրոշմենք ամէնու ճակատը, որպէս զի աշխարհի առաջ ամչնան, մեր այսչափ արհամարհանաց սուր խթանէն զգան և սթափին անհոգութեան արբեցութենէն. իսկ եթէ մեր այսքան կշտամբանաց քարերուն դէմ դնելով՝ տակաւին իւրեանց հեղգութեամբ մէկ անկիւնը քաշուած, Յովնանի պէս պառկած խորդան. այնուհետև առանց խղճի և արդար իրաւամբ այն հայրենատուր նուիրական սուրբ աւանդ—վեղար և փիլոն, որ նոցա ամօթանաց միակ պատըսպարան ու ծածկոցն է, քաշենք, հանենք վրաներէն.

Հերիք եղաւ. մինչ ե՞րբ Հայոց կառավարութեան նաւը աշխարհիս յառաջադիմութեան ծովուն վերայ՝ իւր տեղ կենալով միայն տատանի ներհակ հողմերուն և ալիքներուն ձեռքէն. Հայ նաւաստիներուն ճարը հատած, մէկ մէկ թի ձեռքերնին առնելով, առանց խմաստուն ղեկավարութեան կվարեն ու կ'կանչեն, յառաջ երթանք, յառաջ երթանք. Բըռնենք ուրեմն, միանգամայն եկեղեցւոյ և ազգային կառավարութեան ղեկը, վասն զի յուսահատութիւն մեզ իրաւունք կուտայ. քաջալերենք մեր ընտիր նաւասաները, թող բանան առագաստները, դէմ դնելով յաղթահարենք ամէն հակառակաշունչ հողմոց բռնութիւնը. բոլոր ճիգն թափենք, դոնէ մեր ազգային նաւը ասպարէզ մի յառաջ երթայ.

Եւրոպիոյ յառաջադիմութեան նաւը Ռվկիանոսի ահագին տարածութիւնը չափեց. ո՞ւ, Հայոց նաւը միայն դեռ մի արտաչափ տեղ չի չափեց. միայն յայսկոյս յայնկոյս կերերայ, կ'ծփայ անյաջողակ հողմերով. ամ՞թ մեզ, ամ՞թ :

Բայց հաստատուն յուսով իրախոյս առնենք, Հայոց նաւաստիք, անյաջողակ հողմոց փչմունքները թող չ'վհատեն մեր սիրտը. նոր լուսաւորեալ դարուս հնարագէտ իմաստութեան

մեր ենական արուեստներին բաւական է մեր նաւը յառաջ տանելու. եռանդուն ազգասիրութեան կրակը վառենք մեր սրտի մէջ, ուժ տալով շարժենք արագ արագ ազգային հոգւով միացած ընկերութեան անդամները. վերջապէս ամէն կերպ ճարտարութիւն ի գործ դնելով դարձուցենք կառավարութեան անիւները, և դէպ 'ի յառաջադիմութիւն մղենք նաւը։

Ամենապէս պատերազմի դաշտին մէջ կեցած անգլուխ բանակին զօրավարութեան պաշտօնն ալ մենք վարենք. լուսաւորութեան, ազատութեան և քաղաքակրթութեան դրօշակը բարձրացնելով՝ յառաջ երթանք։ Թէ որ Աստուած տայ՝ առանց Մովսիսի առաջնորդութեան կամ այն հրաշաւոր դաւազանին ներգործութեան կարող եմք Կարմիր ծովուն տոիտութեան խաւարին անդունդները պատառել և ազատութեան միւս կողմն անցնել։

Տարակոյս թող զմեզ չեպաշարէ. նայեցէք դէպ 'ի վեր, ահա դիտութեան լուսաւոր սիւն մեզ կառաջնորդէ մինչև հասնինք Սինայի սար և հայրենեաց ցանկալի անապատը։

Թող տանք նաև քահանաները Յորդանան դեպի այս կողմը. Աստուծոյ տապանակ մեր թևերուն վերայ բառնալով անցնենք միւս կողմը։ Յեսուն՝ մեր նոր Յիսուսը իւր Աւետարանին զօրութեամբ կարէ զմեզ Աւետեաց սուրբ երկիրը տանել, առանց Ղևտական քահանայից պաշտօնական ծառայութեան։

Ահա այսպէս, խոհական ընթերցող, այժմեան ազգային օրագիրներն թէ Տաճկաստանի և թէ Ռուսաստանի մէջը հրատարակուածներ առ հասարակ։ Կհամաձայնին նաև նոցա հետը շատ ազգասէր անձինք և մանաւանդ աւելի ուսումնականները. Կ'թողում, չեմ յիշեր քաղաքացի ժողովրդոց բերանացի գանգատները, որոնք ամէնքն 'ի միասին մեծ պարտաւորութեան կամ ճիշդ խօսինք, դատապարտութեան խակ արժանի կ'տեսնան արդի դարուս Հայաստանեայց Եկեղեցւոյ կղերաց վարմունքը։ Բայց թէ արժանի՞ ենք կամ չե՞նք այսօրինակ դատապարտութեան. ո՞վ կարող է կամ ո՞վ կհամարձակի ճշդութեամբ որոշել. վասն զի մարդկային մտաց դատմունքը միշտ սխալական է, միայն Աստուծոյ դատաստան ճշմարիտ է։

ինչպէս կ'խօսի Դաւիթը։

Իսկ Վասպուրական Արծուոյն տկար դատողութեան թըռիչը այսչափ միայն կհասնի. ժողովրդոց դատաստան հողեւորականաց համար ճշմարիտ է և ճշմարիտ չէ։ Աւետարանին խրատ միտ բերող՝ թոռ կրիւք բժժոտած աչքին դատաստանը ձգէ ու լուսաւոր մտաց ուղղիղ դատաստանով դատի։ Այո՛, մեր վարմունքը սուրբ կոչման համեմատութիւն չունի, մեր մշակութիւն եկեղեցւոյ այգւոյն համար անպիտան է, մեր հովութիւն Քրիստոսի հօտին համար քուն և անհոգութիւն է. այո՛, աւելի ստոյգ, ճշմարիտ և յաղթող կ'հանդիսանայ ժողովրդոց դատաստանը, երբ որ նախնի դարու այն սքանչելի կղերաց դասը յիշատակուին, որոնք արդարև իբրև լոյս մեր խաւարին գործքերը կ'յանդիմանեն։ Մարմնով գերեղմանին ծոց ննջեր են այն սուրբ նախնիքը հաղարաւոր տարի յառաջ, բայց իւրեանց մշանջենաւոր և անմահ արդարութիւնը ու գրաւորական արդեանց լոյս դեռ արևանման կ'ճառագայթի Հայաստանեայց եկեղեցւոյ մէջը։ Արդարև մեր անարժանութիւնը տեղիք տուած է ժողովրդոց առ հասարակ բամբասել, զմեզ չափով կամ անչափ, բայց երբ մենք մեզէն բերանով կ'խոստովանինք մեր յանցանքը ու մեր մեղքերու համար կ'խոնարհինք մինչև գետնին հաւասար. պատասխան անգամ չունինք տալու, տգիտութիւնը մեր բերան փակեր է. ուրեմն ժողովրդականաց բամբասանքն ու դատաւորութիւնը աւելորդ է, մինչ դեռ բռնուած յանցաւորը իւր արածը բերանով կխոստովանի։ Եթէ այսպէս. պարտ է կամ ներել, կամ 'ի մահ դատապարտել։

Վերը խօսեցանք, թէ ճշմարիտ չէ. յիրաւի ժամանակիս մարդկային ազգի ծնունդը չէ կարելի բնաւ, որ նախնի դարու ծնունդներու հետը բաղդատուի։ Պարզ խօսինք, քննութեան ատեան հանենք հին Հայաստան և նոր Հայաստանը, հինը քրիստոնէական սուրբ կրօնին համեմատը՝ հարսանեաց հանդերձ հագած, սատուածպաշտութեան լոյս դէմքին կցոլայ, սրտին վերայ Աւետարան զրկած, մէկ ձեռին խաչը և միւսն սուր, աչկունք դէպ 'ի երկինք բաց, դէպ 'ի երկիր փակ, աշխարհիս ունայնութեան կամ վայելչութեան ա-

ռարկայք ոսքի տակն առած, մէկ խօսքով Հայրենի եկեղեցւոյ պաշտպանութեան համար 'ի մահ և 'ի տանջանս պատրաստ. իսկ ողբմելի նոր Հայաստանը այդ բոլոր առաքինի կամ հարսանեաց հանդերձներէն զուրկ է. թէ որ ատեան հանեմ, կամաչեմ. իւր վերջի զաւակներու վերայ կ'կատարուի, գիտես թէ, Պողոսի դուշակութիւնը. «Յաւուրս յետին եղիցին մարդիկ անձնասէրք, հպարտք, ամբարհաւաճք, արծաթասէրք քան թէ աստուածասէրք, անհաւանք ծնողաց և այլն: Այս յետին դարու խորշակահար ու անհարազատ սերմունքը ինչ բարի պտուղ, բոյս կամ ծաղիկ կարէ բերել. ոչ ապաքէն այժմեան կղերացու կամ ժառանգաւոր զաւակները այս վերջածնունդ մարդիկներու յանաճ սերմերն են: Բանաղատ գրիչներ, յիշեցէք ուրեմն Յիսուսին վճիռը. «Չի ոչ 'ի փշոց քաղեն խաղող և ոչ 'ի տատասկէ թուզ». կամ թէ «Ծառ բարի՝ պտուղ բարի առնէ և ծառ չար՝ պտուղ չար առնէ»: Նախնի դարու ազնիւ բողբոջները բուսուցանելու համար դաստիարակութեան մշակութիւն ուէտք է. այն հողերու վերայ միայն, ուր որ Սահակ, Մեսրոպ և նոցա որդեգիր աշակերտներ բուսան. այն վանքերուն ծոցը, ուր որ իբրև 'ի մայրենի դիրկ, անխարդախ դիտութեան կաթ ծծեցին սուրբ հոգեսնունդ դայեկներէնկ ատարեալ մասնութեան և աստուածպաշտութեան մէջ զարգացան ու մինչև երկինք բարձրացաւ նոցա առաքինութեան հսկայական հասակ: Ո՞վ է այն երկրագործը, որ առանց մեծ աշխատութեան առատ արդիւնք կենդրէ իւր անդաստանէն. ո՞վ է այն մշակը, որ առանց ցանելու քաղել կուզէ:

Եկեղեցւոյ արժանաւորութիւնը կամ իւր տիրական մեծութիւնը շատ բարձր է. այնքան, մինչև Աստուածը երկինքէն խոնարհելով նմա ծառայեց: Այս դերապոյն վարժապետը խաչին օրինակով սորվեցուց իւր աշակերտներուն, որոնք ևս նոյն դասը աւանդեցին յաջորդ հայրապետներուն: Այս դասին միտքը ուրիշ բան չէր, բայց թէ միայն Քրիստոսի եկեղեցւոյն տնտեսութեան պաշտօնը հաւատարմութեամբ վարել: Այս մեր հոյակապ նախնիքները այն հաւատարիմ տնտեսներն էին, որոնք երբեմն Տիրոջմէն Հայոց եկեղեցւոյ դերդաստանին վի-

բայ անտես կարգուեցան • որոնց համար երբէք արտունջ կամ դանդատներ չըլսուեցան սուրբ հօր Գրիգորի զաւակներու բերնէն, այլ մանաւանդ առատ ու կշտապինդ վայելեցին նոցա պատրաստած զրաւորական կամ հոդերուղիս վարդապետութեան սեղանին ախորժաճաշակ կերակուրները : Թէպէտ Հայոց որդիքն էլ կերան կշտացան ու սիրելին անկուշնեցին • այսինքն՝ ապերախտութեամբ ոտքի տակ առին, մեռցուցին մեր եկեղեցւոյ մեծ բարերարները : Այժմ քաղցած, անօթի, սովալլուկ անտես կ'խնդրեն, մատակարար կ'կանչեն, այն անարատ հոգիներու պատիւը նոր կ'ճանչնան : Հայկայ որդիքնե՛ր, երկու ճանապարհ կայ ձեր առաջը• կամ պէտք է արժանաւորութեամբ բոլոր սրտանց հունձքն Տիրոջն աղաչել, որպէս զի ժիր մշակներ հանէ իւր եկեղեցւոյ հասած հունձերը քաղելու, կամ ինչպէս որ վերը խօսեցանք, թէ եկեղեցին տիրաբար իշխանութիւն ունի, թող հաշիւ ու համար պահանջէ իւր անհաւատարիմ տնտեսներէն և տունէն դուրս հանէ : Բայց երբ որ անկարելի և դժուարին է այս բանը, գուցէ այժմեան տընտեսներու պատրաստած խիստ սակաւ փշրանքներէն ալ զուրկ մնայ :

Այս ուրեմն մեծ խոհականութիւն պէտք է, նախ՝ արժանաւոր, հաւատարիմ տնտեսներ պատրաստելու յետոյ հիները դուրս հանել, եթէ որ մեք ալ Աւետարանին պատմած այն խնամատուն տնտեսին պէս յառաջուց դիտնալով ու մատնելով մեր գլխուն ճարը չտեսնանք : Այո՛, սիրելի՛ պաշտօնակից եղբարք, աչքերնիս բա՛ց անենք մեր պարտաւորութեան հաշիւները տեսնանք, աշխատինք հաւատարմութեամբ ծառայել մեր սուրբ եկեղեցւոյ գերդաստանի զաւակներուն, հոգևոր դաստիարակութեան հացալից սեղանները պատրաստենք նոցա համար• արդեօք մեր խ՛ղճ, սիրտ չի՞ տանջեր, երբ որ Լուսաւորչեան եկեղեցւոյ երբեմն հարուստ զաւակները վերջին չքաւորութեան հասած, ընկեր են օտար դռները դժուարութեամբ, թշուառութեամբ հաց կմուրան• հա՛ց՝ որուն մէջը շատ անգամ թոյն խառնուած կուտեն մեր կարօտցած պատանիները ու կմեռնին ազգութեամբ և կ'հեռանան հայրենի եկեղեցւոյ դրկէն :

Օտար սահմանները բուսած որոմնախառն ցորենէն շինուած հացը՝ Հայու ախորժակին դառն է և Հայրենեաց համար ապրելու սնունդ չի տար։ Հայ պատանին Հայաստանի հողերու վերայ բուսած պատուական, անխառն դարնանացան ցորենի հաց կուզէ, որպէս զի քաջառոյգ մարմնով ու արիական հոգւով աճի և Հայրենեաց սիրոյն նուիրէ իւր անձն։

Թող ծանր չթուի մեր ականջներուն մինչև երկինք բարձրացած ժողովրդոց աղաղակ և տրտունջը։ ոչխարներու հօտը բառանչելով կ'թափառի, մինչ դեռ արածողները հովուական ցուպ գլխներուն տակ դրած՝ կ'ննջին ծանր քնով։ Եթէ որ այս խոր թմրութեան մէջ մնամք, տակաւին ոգորմելի է Հայաստանին վախճանը։ յանկարծ սթափելով աչքերնիս պիտի բանամք ու Հայրենի լեռներու, ձորերու և դաշտերու մէջը մեր տակաւաթիւ մնացորդ ոչխարներն ալ կորսուած պիտի տեսնամք գայլերէն ու գանազան գազաններէն յափշտակուած։ Ահ, թափուր պիտի մնայ Դրիգոր սուրբ հօր շինած ընդարձակ փարախ։

Այսպէս ահա, սիրելի ժողովուրդ Հայոց, ու Ազգային աշխատասէր խմբագիրներ, երբ որ դուք ձեր իրաւացի բամբասանքներ կամ տրտունջները թէ գրչով և թէ գրաւոր հրատարակութեամբ հասարակաց ատեանը հանելով՝ դատապարտութեան արժանի կտեսնաք բոլոր կղերաց դասը։ կ'մնայ մեզ, որ մեք ալ իբրև անձնատար յանցաւոր խոնարհինք լռութեամբ, մինչև աստուածային սքանչելիքը մեր փակուած լեզուն բանայ ու համարձակութիւն տայ մեզ, որպէս զի մեք ալ մեր բարձր պաշտօն ու նուիրական պարտքերնիս ճանչնամք և մեր իրաւունք պաշտպանեմք։

Մ. Վ. ԽՐԸՄԵԱՆ։

ԴԻՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՈՆԿԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾԻՈՅՆ

Ի ՏՓԽԻՍ

Ա. Քո զալուստ բարի, Արծիւ Հայրենեաց,
Փութա կատարում տուր մեր բաղձանաց,
Գիտեմք Հայաստան աշխարհիս կդաս,
Բայց մեզ նորանից ինչ խապրիկ կոտաս։

Բ. Վարագայ սուրբ վանք է քո օթարան,
Ինչպէս ձմեռուան նոյնպէս ամառուան.
Հայաստան աշխարհ է միշտ քո առաջ,
Որոյ զրութիւն յայտնի է քեզ քաջ։

Գ. Երկինք խոյանաս ամպերի վերայ,
Քո աչք հայրենեաց միշտ մտիկ կոտայ.
Վանայ գեղեցիկ քո տեսմ երկիր
Դու ինչպէս թոռիր ու այտեղ եկիր։

Դ. Մենք պանդուխտ կռունկք այս օտար աշխարհ,
Կարօտ եմք քաշում հայրենեաց համար.
Զունիմք մէկ վայրկեան հանդիստ մեր կենաց,
Մեղնից Հայաստան մինչ հեռու մնաց։

Ե. Բայց դու Հայաստան վեհ աշխարհ թոռած,
Այստեղ Տփխիսում էր կաս զբաղուած.
Կամ ինչ նպատակ քո սրտումդ կայ,
Փութա պատասխան մեզ չուտով տուա։

Զ. Մթիթէ դու եկիր այցելու լինել,
Քո որդւոց ցաւեր դու ինքնին դիտել.
Քո աչքեր սուր են չուտով կտեսնես,
Սրտիդ ցանկութիւն անշուշտ կդտնես։

Է. Բայց դու, ով Արծիւ, որդիդ հարազատ,
Հայրենեաց ցաւոց դու տեղեակ հաստատ.
Մէկ խապրիկ տուա մեր մայր աշխարհքից,
Սրտերիս հանդիստ առնենք քեզանից։

Ը. Ողջ է Հայաստան մեր Հայոց աշխարհ,
Կամ իւր ցաւերին կլինի մէկ ճար.
Կենդանութեան յոյս արդեօք ունենանք,
Թէ այսպէս վշտօք մեռանենք դնանք։

Թ. Ցեղնեմք ինչպէս է, որ մենք էլ փութանք,
Մեր կարօտ եղբայց ձեզանից լուր տանք.

Որոնք ամէն մէկ տէրութեան խորշում,
Հայրենեաց ցաւով հաշուում են մաշուում։

Աշակերտ Դ. դասատան Ներսիսեան Դպրոցի Տիփիսայ
Յարութիւն Տ. Մարտիրոսեան Տ. Դանիէլեանց Դանձակեցի

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻՐ

ՆԱԽԸՆԹԱՑ ՈՏԱՆԱՒՈՐԻՆ

ԱՌ ԴԻՄԱՒՈՐՈՂՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՒՈՅՆ

Ընդ առաջ Արծուոյն այս օտար աշխարհ
Ո՞վ դու, որ դոչես, դիմես սիրահար.
Ընդքեզ կրքաղձամ տեսնել միանգամ,
Թէ ո՞վ ես արդեօք և ինչ է քո բան։
Գիտեմք Ներսիսեան մեծանուն դպրոց
Քո կրթարան է և մայրենի ծոց,
Որով բորբոքի ձեր սրտի հնոց,
Հայրենեաց վառել վաղուց չիջեալ բոց։
Դու, ժիր պատանի, դու հայրենասէր,
Հայրենեաց սիրոյն դու անձնանուէր.
Արծուն, զզայուն այդ մատաղ հասակ,
Ինքնին կ՚յայտնես բնութեամբդ համարձակ։
Կեցցես դու և քեզ նման պատանիք,
Հայրենեաց փառաց ժառանգորդ որդիք.
Հայոց ապագայն ձեզ մնայ յուսով,
Ձեր ճակտին վերայ դրոշմած նոր տուսով։
Սխրացաւ, այո, Արծուն ի ձեր սէր,
Այլ կարդն ինձ հասաւ զրել այս տողեր.
Քանզի հաւատար են իմ և քո պաշտօն,
Դու մեծ Կռնկան՝ ես ճագ եմ Արծուոյն։
Դու սիրահար, ես սիրավառ,
Միմեանց լինինք ուրախարար.
Երգէ՛ ուրեմն, սա՛ քո քնար,
Երգէ՛ սրտիդ սէրն և հանճար։
Ա. Դոքտրիկ մատանց արուեստաւոր այս հիւսուած,
Վառեալ սիրով իբր ի վաղուց կարօտած.

Անտես Արծուոյն մատչիս սիրով բարև տաս,
Արծիւ, դու մեր հայրենիքէն անշուշտ դաս։
Եւ ինչ բաշձանք կամ ինչ եռանդ քո սրտին,
Ըղձեղ մղէ փութալ յայտնել նորեկին.
Սիրուն քո սիրտ, հայրենասէր քո հոգին.
Հայաստանէն ինչ լուր կուգես, վչտագին,
Թէ նոր փառաց, նոր աւետիս ՀԱՅ ազգին։
Ո՛չ այս, ոչ այն, այլ յոյս միայն ամէն տեղ,
Հայոց նոր բազդ կիստատանայ տալ չքեղ։

Բ. Աչկունքդ վառ վառ սրտիդ հետ կրպած,
Զարծիւն՝ տակաւին ի մէջ հայրենեաց,
Տեսար վարազայ Աւագ խաչին վանք,
Իւր ճաղերն առած ջերմիկ թեոց տակ։
Եւ այն տուրբ տարէն՝ վերին վարազէն,
Հայէր Հայաստան աշխարհի վերէն.
Մերթ արտասուագին, մերթ ուրախագին,
Ինչանէր, հանգչէր ի վարազ ներքին։
Իսկ այժմ Այրարատ և Մասեաց վեհ սար
Այցելու բերին զԱրծիւն այս աշխարհ.
Առաւերակուռնս երբ հայէր աչօք,
Հեծէր, հառաչէր ազի արտասուօք.
Եւ այսպէս լալով և յառաջ գալով՝
Հասաւ ի Տփխիս խոնջած թեւերով։

Գ. Արծիւն մինչ երկինք, ինչ չափազանց բան.
Կարճիկ թեւերով երբ կարէ այնքան
Խոյանալ, ճախրել ամպերու վերան.
Ո՛հ, դեռ տկար է, դեռ անօգնական։
Գիտես ինչ կասեմ, եղբայր պատուական,
Հանգիստ, ապահով նստած վարժարան,
Գրէս ու ընես, որքան ժամանակ,
Ոչ հացդ է պակաս, ոչ դասդ, ոչ զգեստ։
Սակայն խեղճ Արծուին, աղքատ և թշուառ,
Իւր ոստրմելի ճաղերու համար
Սարէ սար ինկած, աշխարհէ յաշխարհ,
Շրջի հայթայթէ օրական պաշար։
Վան չատ գեղեցիկ, ընտիրեամբ է վեհմ,
Արծուոյն հայրենիք, այլ բաղդն է դժխեմ.
Ուստի կրկնակի ցաւ եղև սրտին,
Երբ թողուց հեռի իւր բուն հայրենին։

Ահա այս պատճառ, որ զԱրծիւն բանի
Տարապիր վարէ հայրենեաց հեռի.
Զի ոչ Ներսիսեան ձեր զպրոցի պէս
Ոնի ճոխ կալուած, զոնէ կիսոց կէս։
Դուք պէս պէս խորտիկք մնանիք անհոգ,
Մեք չոր հաց պանրով, չորթանով, թըթուաք.
Երբեմն անզգեստ, երբեմն ոտիւք բոկ
Մեր կեանք կվարեմք այսպիսի վշտաք։

Դ. Ասես թէ, պանդուխտ եմք մեք այս աշխարհ
Եւ կարօտ մնամք հայրենեաց համար,
Ինչպէս դուք առնտ, նոյնպէս և նա ձեզ
Սպասէ դարձին ձեր առնել հանդէս։
Ո՛հ, թէ ինչ սիրով և ինչ փափաքով
Ըզձեզ ընդդիմէ մայրական բազկով.
Դուք ինքնին պէտք է լինիք մխիթար,
Միխիթար նորա սրտին վշտահար։

Ե. Չէ, Արծիւն չէ թողած Հայաստան,
Ուր ծնաւ, մնաւ խնամօք մայրական.
Արծուին չի մոռնար այն օդ, հող և ջուր,
Թէև տառապանք կրէ հազար բիւր։
Այն վեհ աշխարհին ինքն անձնանուէր,
Որ ի սէր նորին դիմէ ի հրաւէր.
Հրաւէր հիւսիսոյ Հայոց բնակչաց,
Վառէ նոցա սիրտ սիրով հայրենեաց։
Տփխիս Վրաց տուն և օտար քաղաք,
Զարմանայ, թէ ղի բաղմացան ատ Հայք,
Իսկ մեր Այրարատ, Մեծ Վաղարշապատ,
Գանդած, աւերած, անհնչան, անդարդ։
Կամ Բիւզանդիոյ բաղմաթիւ Հայեր
Իւրեանց հայրենիք ձգած անաւեր,
Եւ ինքեանք հեռի, օտար հողի մէջ
Շինեն փառաւոր պալատ մեծամեծ։
Թէ դուք և նոքա, երկուք միասին
Դառնաք միանգամ նայէք Մասիսին,
Եւ յիշէք, թէ այս մեր նախնի փառաց,
Այս միայն անյաղթ, անկործան մնաց։
Եւ հայրենասէր աչօք դէպ Անին
Դառնաք և նայէք նորա յաւերին,
Յիշէք թէ, այս մեր մայրաքաղաք
Մինչև երբ սպասէս մնայ աւերակ։

Հայրենակարօտ ձեր սիրտ, ձեր հոգին,
Նուիրէք սիրով Երասխ, Եփրատին.
Ցիշէք, թէ մեր հարք նոցա տուրբ ջրով
Մեծցան, զօրացան անահ, ապահով։
Եւ ճանաչեցէք, թէ ձեր հայրենիք
Այս երկիրներ չեն, ուր դուք բնակիք։
Այլ էր դու, եղբայր, Արծուոյ նպատակ
Կուզես խմանալ և կամ նորին ջանք.
Մինթէ տակաւին քեզ չէ յատնուած,
Թէ «Հայրենասէրն հոգայ զհայրենեաց»,
Ցիշեալ քաղաքաց ողբալի տեսիլ,
Կամ Հայոց ազգի վշտալի անցքեր,
Կուզէ, որ ամէն Հայ սրտի վերայ
Նոցա սէր և յոյս դրոշմէ ու դնայ։
Արդէն իւր շրթունք, իւր ճառն և գրիչ
Արծուոյն խորհրդոց են յատնի պատմիչ.
Նոյնպէս վարագայ գպրոց, ապարան,
զԱստուած, Հայրենիք ուսան և կարդան։
Այս ահա հարցմանդ գրեա բաւական
Ներելով այսչափ տալ քեզ պատասխան.
Զ. Արծիւն ուրախ է ընդ մեր սրտի ցաւ,
Քանզի մեր թմրած հոգին արթնցաւ,
Որ մինչև ցայսօր օտարի փառքեր
Մեզ համար պարծանք էին համարեր։
Շատ անդամ այսպէս ցաւն ու անձկութիւն
Մարդոյս կբերէ նոր երջանկութիւն.
Անառակ որդին մինչ խող չարածեց,
Զըղարձաւ իւր հօր բարիք վայելեց։
Կը յիշէ՞ք արդեօք, մեք էլ հայր ունիմք,
Հայրենի ընչից մեք ժառանգորդ եմք.
Այլ անդ օտարներ մեր տանը երջանիկ,
Մեք այստեղ օտար և տկերջանիկ։
Այն բերրի հողեր. արդաւանդ դաշտեր,
Ամենքն էլ ինկած են օտարաց ձեռ.
Նոքա մեր բաժին ուտեն դիրանան,
Մեք այսպէս զրկեալ՝ կարօտով մնամք։
Է. Մեր մայր Հայաստան թէպէտ և երբեմն
Զայն ուրախութեան արձակէ ի վեր,
Իրրու թէ ահա կրկին իմ՝ որդիք
Սկսան դառնալ իւրեանց հայրենիք։

Այլ վշտացածի յոյս թէ յուշանայ,
Գիտես, ինչ փութով կատկած կունենայ։
Մանաւանդ երբ որ յիշէ ոմանց դորձ,
Դորձ անհարազատ ասպաշնորհ որդւոց.
Երբ նա կատարեալ իւր ցաւեր և վիշտ,
Կարէ սփոփել, ուրախ լինել միշտ։
Այլ ցաւն ու սփոփանք հաւասար ընթանան,
Աւերակք ողբան, ողջաւէտք յոյս տան։

Ը. Արդ եթէ կուզէք Հայաստան նորէն
Կանգնի կենդանի իւր ինկած տեղէն.
Պէտք է միաբան հոգւով և մարմնով
Դիմեմք նորա դիրկ անբաժան ուխտով։
Թէ կուզէք կրկին Հայաստան կանգնել,
Պէտք է լեզուի տեղ մեր ոսներ չարժել,
Շարժել և վաղել նորա քաղցրիկ դիրկ,
Նա է մեր ծնող, նա մեր հայրենիք։
Յաւ անթիւ են ցաւք մայր Հայաստանի,
Սակայն կրուժուի, երբ զմեզ տեսնի.
Տեսնէ միաբան և անձնա ւէր
Նորին փրկութեան տամք, ինչ որ է մեր։

Թ. Ահա վութացէք, ահա պատմեցէք
Մօտիկ հեռաւոր եղբարցն ասացէք,
Դուք որ տակաւին՝ թէև օտար տեղ
Պահէք ՀԱՅ անուն անարատ, անմեղ։
Այլ բաւ, այլ հերիք, ձեր դատն քրտինք
Օտար հողերու վերայ դուք թափէք.
Դարձէք, ձեր ճակտի ցօղ զուարթափայլ
Հայրենեաց վէրքին է առողջարար.
Ձեր բեռանց ներքև մաշուած յաղթ ուսեր,
Օրհնէ մեր Աստուած,
Նորոգէ ձեր աչ բաղուին անվնեներ։

Յօհ. Գարեգին Սրուանձտեան աշակերտ
Ժառանգաւորաց Վարժարանին
Վարագայ։

ԱՌ ԿՈՒՈՒՆԿՆ
ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ

Կռունկ, բարով յաջող գնաս
Մեր Հայաստան կամ ուր կերթաս,
Այս մեր աղերս. անփորձ մնաս.
Կռունկ, իջնես մեր սիրելեաց տաս ողջոյն։
Կռունկ, գիտեմ, շատ տեղ կանցնիս,
Մեր Հայ եղբարց ուր հանդիպիս.
Մեզ լաւ խոսքիկ բերել պիտիս.
Կռունկ, իջնես մերազգեցից տաս ողջոյն։
Կռունկ, երբ դու չրջագայիս,
Ամէն տեղում Հայ կդտնիս,
Թէ բարեբաղդ, թէ խեղճ տեսնիս,
Կռունկ, իջնես պանդուխտ եղբարց տաս ողջոյն։
Կռունկ, թէ հարց անեն քեզնից
Մեր հոգատարք մեր վիճակից,
Ասես, թէ զուրկ եմք ուսումից.
Կռունկ, իջնես աղգասիրաց տաս ողջոյն։
Կռունկ, երբ թռչիս յԷջմիածին,
Պատմես ի լուր Վեհափառին,
Զունիմք հովիւք հսկող հօտին.
Կռունկ, իջնես նախնի սուրբ հարց տաս ողջոյն։
Կռունկ, ով ոք քեզ հարցանէ,
Մեր աշխարհի տէրն ով է,
Ասես նոցա «Ընտրեալն Մատթէ».
Կռունկ, իջնես սրբոց աջոյն տաս ողջոյն։
Կռունկ, աչքերդ դու չորս արա,
Գիտնոց, հարստաց յորդոր կարդա,
Մեր տպիտութեանն անեն չարայ,
Կռունկ, իջնես վարժարանաց տաս ողջոյն։
Կռունկ, պատմես, բացան մեր աչք,
Ուսմանց օգուտ մենք հասկացանք,
Ափսոս չունիմք Սմբատ, Սահակ.
Կռունկ, իջնես ժիր Հայ մանկտոյն տաս ողջոյն։
Կռունկ յարդես ամէն հանճար,
Որք պարդ սրտով մեզ դեղ ու ճար
Առնել ջանան գրչով ճարտար,
Կռունկ, իջնես Հայ օրագրաց տաս ողջոյն։

Կռունկ, մեծաւ մատամբ քո բան,
Է աղղային և կրօնական,
Որով աղդի կապք ամրանան.
Կռունկ, մեղնից քո երամիդ տան ողջոյն։
Կռունկ, կթեկես չատ տեղ օտար,
Այս իմ խրատս առ քեզ պաշար.
Սիրես հաւատդ և քո աշխարհ.
Կռունկ, իջնես սուրբ տաճարաց տան ողջոյն։
Կռունկ, ճանապարհ քոյդ դրախտին,
Մոիդ պահես, չխափուիս օձին,
Քեզ ուղեցոյց դեպք Եդեմին.
Կռունկ, իջնես հայրենի ջուրց տան ողջոյն։
Կռունկ, պատուես հանճար վսեմ,
Արտեր աղնիւ, միտք երկնաճեմ,
Որք աղդ ու կրօն մեզ քարոզեն.
Կռունկ, իջնես վարժարանաց տան ողջոյն։
Կռունկ, պանդուխտ Հայք թէ հարցանեն,
Ի՞նչ հայրենեաց ընծայ անեն.
Ասես նրանց. —Սէր ազգային,
Կռունկ, իջնես ազգայնոց տան ողջոյն։
Կռունկ, դիտեմ ես հաւատանաս,
Եւ այս տարի չուրջ դաս բարեաս
Ի Հայաստան, հեռս, հարաւ,
Կռունկ, ողջ Հայոց կենդանութեան տան ողջոյն։

Ո. Հ. Դ. Հ. Դաշտ գիւղաքաղաքի
Խրայել Մամիկոնեանց։

ԱԶԳԱՑԻՆ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԱՏԻՊ ԴՐԵԱՆՔ

ՍԷՐ

ՀԱՅ ԵՐԵՒԱՆՑԸ ԸՆԾԱՅ ԳԱԲՐԻԷԼ ԽԱՏԻՍԵԱՆԻՑ

Հատոր Ա. 1861. Թիֆլիզ, ի Տպարանի Գ. Մելքումեանց և Հ. Էնֆիաճեանց։

Այս նորատիպ գրքի վերայ մի քանի խօսք ասելուց առաջ, իմ սիրելի համազգի եղբայրներս, ներեցէք՝ թոյլ տամ նախ ձեզանից մի քանի հարցմունք անել։ Ձեր միտը գալիս է ձեր աշակերտութեան առաջին տարիքը, յիշում է՝ թէ երբ ձեր վարժապետը ձեզ տառերը ճանաչեցրուց, երբ որ դուք սորվեցաք առանց հեղելու քիչ չատ վարժ կարդալ բառերը, ինչ գիրք տուին ձեր ձեռը և այնուհետև ինչ գրքի վերայ չարու-

նակիցիք ձեր դրավարժութիւնը։ Գուշակում եմ, որ միաբերան ինձ ոչ-ոտի պատասխանէք, թէ նոյն գրքերու վերայ, ինչ գրքերու վերայ որ ես էլ սովորած եմ, այսինքն՝ ՈՒԹՆ ԿԱՆՈՆ ՍԱՂՄՈՍԻ և ԿՏԱԿԱՐԱՆԻ։ Բայց էս էլ ասացէք, այդ հաստ գրքերը մինչև ի վերջը դաս դաս հանիլը, որ ի հարկէ մի երկու երեք տարի էլ է կանէր, այդքան միջոցումը ինչ նոր տեղեկութիւններով և ինչ նոր նոր հասկացողութիւններով ձեր ուշք ու միտքը բաց արին այդ գրքերը և նրանց դաս տուող վարժապետները։ Այս տեղ էլ ես ձեր տեղակ պատասխանը կասմ հէնց ձեր սրտիցը և ձեր հոգուցը, թէ մենք մեր ուսման առաջին մին քանի տարուսը մի գրքովը ջարդում էինք վանկերը ջոկելու յետոյ միմիայն գրաւարժ և անսխալ կարդալ սովորելու համար, բայց կարդացածը հասկանալու, կամ գրաւարժութիւն սովորելումը մեր միտքը նոր նոր հասկացողութեամբ բաց անելու համար և մեր սիրտը նոր նոր ապաւորութեամբ առ բարին կրթելու համար, այդ մասին գլուխդ ապրի, ոչ մեր ձեռքը տուած գրեանքն յարմարութիւն ունէին և ոչ մեր վարժապետներն։ Այսպիսի մի բանի հարկաւոր, օգտակար և կարելի լինելն անդամ ճանաչում չէին և ասելի աղին ասենք., ես տեսել եմ խիստ չատերը, որոնք քերականութիւն և ճարտասանութիւն սովորելու դիտաւորութեամբ հինգ տասը տարի հաց են կերել, չոր մաշել և մանկութեան թանդաղին ժամանակը կորուսել և էլի նրանց սիրտը և միտքը նոր մտունդ չէ ստացել և մեծացել է էլի առաջուան պէս ամուլ։

Ի՞նչ էք կարծում, ինչն է եղել սորա պատճառը։ Այն է եղել սորա պատճառն, որ մեր վարժապետներն այնպէս են եղել համոզուած (և այժմս չատերն են դոնուում), թէ ուսանել Հայ երիտասարդների համար նշանակում է միմիայն գրոց լեզուի կազմութիւնը սորվիլ, գրաբառը հասկանալ և գրաբառ չարադրել. ուստի նոքա աշակերտին հէնց ընկերից կարդացածը հասկացնելն աւելորդ են համարել և անկարելի։ Ա-ՒԵՐԴ են համարել, որովհետև իրանց միակ պարտաւորութիւն են համարել և տակաւին էլ համարում են աշակերտին ՀԱՅԿԱԲԱՆ պատրաստել և ոչ թէ նրա մտքին և սրտին դիւրըմբռնելի տեղեկութիւններից և ծանօթութիւններից նորանոր մտունդ տալով, ուսման ծարաւը և բարութեան սէրը նրանց մէջ զարթեցնել և աճեցնել։ Ասացի «ԱՎԵՐԴ», և արդարև ինչ պտուղ կարելն հասկանալ աշակերտները Սաղմոսից և Կտակարանից, մինչ դեռ վարժապետները իրանք այդ խորհրդաւոր գրքերը հասկանալու համար, բառարաններու և մեկնութիւններու կարօտ են լինում։ Այսպիսի վիճակում դտնում ենք Հայ աշակերտելոց մեծ մասը և սոյն այս մեր օրերումը և նոյն իսկ մեր աչաց առաջը, սորա վնասակարութիւնը հասկանում ենք, մեր որդւոց վարժապետաց բռնած սխալ ճանապարհը բամբասում ենք, բայց այս վնասի առաջն առնելու, սորա ճարը խորհելու և մի բարւոք ուղղութիւն տալու հոգացողութիւնը դանց ենք առ-

նում նաև այն Հայ երիտասարդներս, որոնք շատ յաջողակութեամբ կարող էինք օգնել մեր ազգի մանկանց համար խիստ ուսումը հեշտացընելումը։

Ես իմ կողմանէ չեմ դատապարտում մեր հին վարժապետներին և նորերումս նրանց հետևողներին, որովհետև ինչքան իրանց խելքը հասել է և հասնում է, այնքան իրանց ծառայութիւնը անում են իրանց ազգին, մանաւանդ որ նրանց այս մասին մեղադրելու չափը այնքան կըզակասի, որքան որ սորա նման երևոյթներ նաև վերջին դարերումս ուրիշ այժմ լուսաւորեալ ազգաց մէջ ևս նկատուել են, քանի որ նոքա չունէին կանոնաւորեալ վարժատուններ և յատուկ դաստիարակութեան համար մեծ ջանքով պատրաստած վարժապետներ և մանկանց յարմարաւոր դասագրքեր։ Ինչպէս գնացածի վերայ մենք ցաւելուց և զգուշանալու խրատ ստանալուցն աւելի ոչինչ պարտաւորութիւն չունինք։ Այո՛, ՅՈՒԼԻ ՊԷՏՐՈՍԵԱՆ Եղբայր ստանալ, այս երկու բառիս մէջ պարունակուում է Հայ բանիմաց ուսումնականաց իրանց սիրելի ազգին անելու ամենից ծառայութեան բարձր խորհուրդը և ահա այս մասին թող լսեն մի չատ արժանայիշատակ մեր ժամանակի լուսաւոր Հայ վարժապետի սրտումը զգացած ցաւը և նորա ամէնից առաջ խորհած զգուշութեան ճարն ու դարմանը։ Մեր լուսահոգի Խաչատուր Աբովեանի վերայ է իմ խօսքը, լսեցէք, թէ ինչպէս է երուում նրա սիրտն իր հայ զաւակաց բարոյական կամ գրաւորական մտքի մնունդից զուրկ մնալը տեսնելիս. լսէ, թէ այս բարձր դիտնական անձը իր սիրելի ազգի մոտաց երեխայական վիճակը տեսնելիս, ինչպէս ինքն էլ վէր է դալի գերականութեան, ճարտասանութեան, Հայկաբանութեան և Տրամաբանութեան փառաւոր աթոռից, ինչպէս նա երեխայամիտ իր համազգիների հետ ինքն էլ թողնում է արհեստական ոճը, երեխայի լեզու և երեխայի սիրտ ստացած, նրանց ընկեր է դառնում, որ առանց նրանց խրատնեցնելու նրանց ձեռքը բռնէ, կամաց կամաց կատարելութեան սանդխանից ի վեր բարձրացնէ դէպի հայրենասիրութիւն, դէպի քրիստոնէական առաքինութիւն և դէպի ճշմարիտ դիտութիւն։ «Բան—երեսուն տարուց աւելի ա, ասում է նա, իմ ազիզ հէր՝ իմ սիրելի ազգ, որ սիրոս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա, դիշեր, ցերեկ յայն ու սուքը իմ աչքիս, ախն ու ոխը իմ բերնիս չէ պակսում, այ իմ արիւնակից բարեկամք, որ մէկ մտքս ու մուրազս ձեզ պատմէի ու յետոյ հոգը մանէի։ Ամէն օր գիրեզմանս առաջիս տեսնում էի, ամէն սրհաթ մահուան հրեղէն սուրը գլխս պտտում էր, ամէն բոպէի ձեր սիրան ու դարդը՝ հոգիս էրում, մաշում էր. լսում էի ձեր քաղցր ձէնը, տեսնում էի ձեր սիրան երեսը, իմանում էի ամենի միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սէրն ու բարեկամութիւնը, մոռանում էի ձեր կորցրած վառքն ու մեծութիւնը, մեր առաջին՝ էն հիանալի թագաւորաց, իշխանաց գործքն ու կեանքը, մեր Հայրենեաց, մեր սուրբ աշխարքի առաջվան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի անմեռ բնութիւնը ու արած քաջութիւնները։ Մոռ. առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս՝ թէ ինչ աշխարքի ծնունդ եմ ես. Դրոխոը մտքումս էր կենդ-

դանի, որ ինձ երազում, թէ լուրջ՝ միշտ մեր երկրի անունն ու պատուականութիւնը՝ իմ առաջս էր բերում. Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսաւորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին՝ որ ես իրանց որդին եմ. Եւրոպայ թէ Ասիայ ինձ անդադար ձէն էին տալիս, թէ Հայկայ զաւակն եմ ես, Նոյեան թոռը, Եղմիածնայ որդին, Դրախտի բնակիչը. դաշտում, թէ ժամում, չոլում, թէ տան՝ էն քարերն էլ ուզում էին, որ սիրտս պոկեն, ուր տեղ որ իմ ազգի ոտը կոխել ա, ու էս օր էլ կոխում ա. շատ անգամ մէկ Հայ տեսնելիս՝ ուզում էի՝ էլած շունչս էլ հանեմ, նըրան տամ. բայց ամ՝ լեզուս վակ էր, աչքս բաց. բերանս բռնած, սիրտս խոր, ձեռքս պակաս, լեզուս կարճ. դանձ չունէի, որ զրնծով ցոյց տայի ուզածս. անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի, մեր գրքերն էլ էրեբուռ, մեր նոր լեզուն էլ անդրէ, որ սրտիս հասրաթը խօսքով յայտնէի. հրամայել չէի կարող, ինդրէի, աղաչէի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ, չունքի ես էլ էի ուզում՝ որ ինձ վրայ չընծիծաղին, չասեն կապիտա, յիմար ա՝ որ բերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն չդիտի. ես էլ էի ուզում, որ ասեն՝ «Օ՛հ էնպէս էրբը, խրթին շարադրիկ դիտի, որ սատանէն էլ միջիցը մէկ բառ չի կարող իմանալ, հասկանալ. ես էլ էի ուզում՝ որ իմ գլուխս ցոյց տամ, որ ինձ վրայ զարմանան ու ինձ դովեն՝ թէ «Հայերէն շատ խորը տեղեակ եմ:» Ոչ մէկ լեզու դիտի, ես մէկ քանիսը գիտեմ, ինչ գիրք ասես՝ որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ թողալ. ոտանաւոր, շարադրութիւն հօ՝ էնքան եմ գրարառ գլխիցս դուս տվել՝ որ մէկ մեծ գիրք էլ՝ էն կդառնայ: Ես միջոցումը Աստուած ինձ մէկ քանի երեխէք էլ հասցրեց, որ պէտք է կարդացնէի: Սիրտս ուզում էր, պատռի, որ էս երեխէքանց ձեռքն էլ՝ ինչ Հայի գիրք տալիս էի, չէին հասկանում: Ռուսի, Նէմեցի, Ֆրանցուզի լեզուն ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին էնպէս բաները գիր դալիս: Ուզում էի շատ անգամ մազերս պոկեմ՝ որ էս օտար լեզուքը աւելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր, էն լեզվընելումը նրանք կարդում էին երեսելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նըրանք կարդում էին էն բաները՝ որ մարդի սիրտ կարող է դրաւիչ, չունքի սրտի բաներ էին՝ ով չի սիրիլ: Ո՞վ չի ուզիլ լսիլ՝ թէ սէրը, բարեկամութիւնը, հայրենասիրութիւնը, ծնողը, զաւակը, մահը, կռիւը ինչ դատ են, բայց մեր լեզվումը՝ թէ կապէս բաներ ըլին, թող՝ աչքս հանեն: Էլ ընչով երեխին քո լեզուն սիրիլ տաս: Գեղջուկ վրա ջաւահիր ծախիր, հա, շատ լաւ բանա, ամա որ կարողութիւն չունի, մէկ կտոր ճաթի հետ էլ չի փոխիլ քո տված անգին քարը:

Է՛ս հօ էս՝ Եւրոպիումն էլ որ չէի կարդում բացի գրքերում, թէ Հայ ազգը պէտք է՝ որ սիրտ չի ունեցած ըլի, որ էնքան բաները գլխովը անց են կացել, մէկ մարդ էլայ չի դուս էկել, որ մէկ սրտի բան գրի, ինչ կայ՝ եկեղեցու վրայ ա, Աստծու ու սրբերի, բայց հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոֆոկլէսի գրքերը՝ երեխէքն էլ գլխատակներին ունէին, չունքի բոլոր աշխարի բաներ են: Թէ ասէի՝ բոլոր Եւրոպացիք են անիծիք, անհաւատ, որ Աստուծու բանը թողած, Եսպէս ծռոի մռոի բաների հետ էին ընկել, յիմարութիւն կըլէր. թէ չէ մեր Նաբիկը թողած, ախր ինչպէս էին նրանք էն գրքերին հաւանում: Լաւ գիտում էի, որ մեր ազգը էնպէս չէր, ինչպէս Նրանք ասում էին, ամա ինչ անես, անադուն ջաղացի քարն՝ էլ չի պտտա դալիս. եմ ասես: Մխոք էի անում՝ որ թէ կորիչ մարդ ասես, մեր միջումը հազարաւորն են էլել ու էս օր էլ կան. թէ խելօք խօսք ասես, մեր պատանիներն էլ հազարը գիտեն: Թէ ազ ու հաց ասես, սէր, բարեկամութիւն, քաջութիւն, երևելի անձինք՝ ասես, մեր դեղջոնց սիրտն էլ ա լիքը կապէս մաքերով: Ամա, մասապայ, սուր սուր խօսքեր՝ որ ուզենաս հօ՝ էն յիսուն ամիկ մարդը՝ մէկի տեղակ հազարը կասի: Ախր ինչ պտէր արած՝ որ մեր սիրտն էլ ուրիշ ազգեր խմանային, մեզ էլ գովէին, մեր լեզուն էլ սիրէին,

մնացել էի տարեկուսած։ Լաւ գիտէի, որ թէ Օսմանցիի, թէ Ղզլբաշի երկրում ինչքան էնպէս երևելի, խելօք, հունարով մարդ են էլել, ինչքան Խանի, Շահի, Սուլթանի դռներին սիրեցան աշըղ, լաւ խօսող ասող, ոտանաւոր շինող մարդ են էլել, շատը Հայ ա էլել։ Մենակ Գէշիշ օղլին, Գեօռ օղլին լաւական են, որ ասածը սուտ չէ դուս գայ։ Թող էս օր էլ մէկ մարդ Գրիգոր Թարխանովի հետ խօսայ, Նրա ասած խօսքերին, Նրա էն ճարտար լեզուն, Նրա էն հիանալի բոյն ու պատկերը, Նրա հէնց մէկ հունարը տեսնի, որ հարիր տեսակ զանազան մարդի ու ազգի՝ լեզուն, շարժմունքը, նատիլ վեր կենալը էնպէս ցոյց կայ, որ քառասնամ՝ թէ Եւրոպիոյ էն ընտիր թէատրնելումն էլ տեսած ըլիմ, ու վարժատան և բես հօ՝ իր օրումը՝ կարելի ա, էն ժամանակն ըլի տեսած՝ որ այրեանը մեր միջումը դարով էլին բանում, դիւլլով վեր քցում, էն ժամանակը կիմանայ, թէ Հայոց միջումը ինչ հունար կայ։

Էսպէս բանները մտածելով, օրս ու ումրս մաշվել էր։ Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մտու տամ։ Չէի իմանում՝ թէ սրա չարէն ինչ կըլի։ Թող լսողը չհաւատայ, ամա էս ցաւն էնպէս էր սիրտս առել, որ շատ անգամ գժվածի պէս ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ եդ սիրտս լիքը տուն գալիս։ Հէնց էս էր պատճառը՝ որ մէկ օր էլ ամաուման դատաստրի ժամանակին՝ աշակերտներս՝ որ առաւօտը թողի, ճաշիցը եդ՝ ընկայ էլի սարէսար։ Ճարս կտրվեց, գնացի Նեմնցի Կալենիէն՝ մէկ Նեմնց բարեկամի մատ. Նրանք էլ ինձ վրայ ցաւելով՝ իրեք օր չթողին, դամ քաղաքը։ Բայց քաղաքումը՝ իմ սիրելի ա շակերտները, ծանօթ, բարեկամք՝ իմ սուքս վազուց էլին արել։ Հէնց իմացել էլին՝ թէ գուն եմ ընկել, չունքի ամէն առաւօտ, բիզուն գնում էի, լղանում։ Էլի իմ, իմ աղիզ, իմ սիրելի աշակերտներն էլին ընկել եղեկոց՝ որ բալքի մէկ բան էլայ իմանան։ Մէկ առաւօտ վանքարումը նստած, էլի մտքիս հետ էի ընկել՝ որ նը-բանք առաջուս անց կացան։ Որ չտեսայ նրանց, հոգիս տեղը հան էլաւ։ Իմ ու նրանց՝ էն օրվան իրար տեսնելը ով կարայ պատմել, ով սիրտ ունի, ինքը կիմանայ։ Բալքի թէ դերեզմանումը էս ձեր սէրը մտքիցս գնայ՝ այ իմ սիրելի, իմ աղիզ բարեկամք, թէ չէ, որքան էս կապատ երկինքը ղլխիս ա, շունչս բերանումս, ձեզ, ձեզ սուրբ պէտք է համարիմ ինձ համար, ձեր արևին մեռնիմ։

Բայց ամա՝ Ֆրբ ա երկինքը մէկ կերպի մնացել՝ որ մարդի սիրտը մնայ։ Հէնց իմ վոգը մտքիս արևը երևայ թէ չէ, էլի սև սև ամպերը գլխներս բարձրացրին, էլի կայծակ ու որոտումն սրոտումս մէյդան բաց արին։ Ջուրն ընկնել՝ էլ չէի կարող, չունքի Աստուծոյ անը մտքումս, անմեղ քօսվիս ձէնը անկաջումս էր. սէրն ու ծնողական զուրը ջիղերումս, ես գինջանայի, երբմին ով պահէր։

Բանը հէնց էս էր՝ որ ասում էի մտքումս՝ թէ նախիմ, ինչքան խելքս կրերի, մեր ազգին զովեմ, մեր երևելի մարդկանց արած քաջութիւնները պատմեմ, էլի մտածում էի, թէ ում համար գրեմ, որ ազգը լեզուս չէ հասկանալ։ Թէկուզ Ռըսերէն, Նեմնցերէն, ես Ֆրանցուզերէն գրած, թէկուզ գրարառ՝ տասը՝ կըլի որ հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թէկուզ իմ գրածը, թէկուզ մէկ քամու ջաղաց։ Ամբ որ ազգը էն լեզվովը չէ խօսում, էն լեզուն չէ հասկանում, սաքի հէնց բերնիցդ էլ ոսկի վեր ածիր, ում պէտք է ասես։ Ամէն մարդ իր սրտի խարջ բան կուզի։ Քա գարլու վիրան ինձ ինչ օգուտ, որ ես չեմ սիրում։ Ում հետ էլ որ խօսում էի, էն էին թանխայ տալիս՝ թէ մեր ազգը ուսումնասէր չի, կարդալը նրա համար գին չունի, բայց էս տեսնում էի, որ ես մեր կարդալ չը-սիրող ազգը Ռոպէնսոնի պատմութիւնը, Պենձէ քաղաքի յոմար գերքը ձէ ունէ ձեռն էր մտածում։ Էս էլ լաւ գիտէի, որ ինչ երևելի ազգեր կան, բոլորն էլ երկու լեզու ունին, ՀԻՆ ու ՆՈՐ։ Ամբ թէ լուսաբանայ լեզուն լաւ ա, ու գարի էլ պէտք է՝ տրաքին ու հասկանան, էլ ուսնլուզ, նշան, պատիւ ուր են սալիս գլուռանդ

էն լեղուագէտ խմաստունը՝ թող գնայ, կանգնի, դոռայ, ջանը դուս գայ, լսողը թող՝ ինքը հասկանայ, լուսաւորեալ գլուխն ափսոս չէ, որ ցաւի:

Միտք էի անում, որ գիժն էլ էս չէ անել: Էլի էսպէս մտքիս հետ ընկած՝ շատ անգամ՝ որ զմտալ էի գնում, էս քաղաքումը անց կենում, ուշ ու միտքս հաւաքում էի՝ թէ տեսնիմ, խալիսը խօսալիս, քէֆ անելիս, ինչ բանից ա աւելի հաղ անում: Շատ անգամ տեսնում էի, որ մէկ յդանում, վոզոցում մէկ քօռ աշըղի էնպէս են հայիլ մայիլ մնացել ու կանգնել՝ անկաջ գլնում, վոր բաշխում նը-լան, որ բերնըների ջուրը գնում էր: Մէջլիս ու հարսանիք հօ՝ առանց սազանդարի ինչ հայը կուլ կէրթար: Աստծնեքը թուրքերէն էր, շատը մէկ բառ էլայ չէր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր գլխատը, էդ գալիս: Միտքս ասի, մէկ օր էլ ասեցի ինձ ու ինձ, ասի քօ քերականութիւն, հարստանութիւն, տրամաբանութիւն ծալիր, գլաղ գիր, ու մէկ աշըղ էլ դու դառ, ինչ կելի, կելի, խանչալիդ քարը հօ վեր չէ ընկնել, դառ վարաղդ հօ չէ գնալ: Մէկ ասի էլ դու վեր կըն նիս, կմեռնիս, մէկ ողորմի ասող էլ չես ունենալ.....:

Թող ինձ այսուհետև ազգա կանչեն • լեղուս բայա էլել, իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրելան ազգ: Թող՝ տրամաբանութիւն գիտեցողը իրան համքեալի համար գրի, ես, քո կորած, շվարած որդին՝ քեզ համար:

Ով թուր ունի, առաջ իմ գլխիս խփի, իմ սիրտս խրի, ապա թէ ոչ, քանի բեր նուսս լեղու կայ, փորումս սիրտ, ես լեղապատառ ձէն կամամ. «Էդ ում վրայ էք թուր հանել: Հայոց մեծ ազգին չէք ճանաչում: Թաք ելի դու, դու իմ պատուական ազգ՝ քո որդու ասածը, քո որդու խակ լեղուն սիրես, ընդունիս, ինչպէս հէրը իր մանուկի կմկմանը, որ աշխարհի հետ չէ փոխել: Երբ որ կմեծանամ, խրթին լեզուով էլ կխօսանք» : (ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ. ԺԲ-ՔԷՖՈՆ):

Սիրելի կարդացող, թէ որ դու էլ մեր էն հայկաբանների կարգիցն ես, որոնք իրանց աշակերտի կամ իրանց շարադրած գրքի կարդացողի սրտի և մտաց զարգացումը զանց են առնում, վախումեմ թէ ինձ էլ բամբասես ու այն նորատիպ «ՍԷՐ, ՀԱՅ ԵՐԵԽԱՆՑԸ ԸՆԾԱՅ» անունով պարոն Խատիսեանցի գիրքն էլ, որ առիթ տուց ինձ այսքան շատախօսութեամբ քու գլուխը ցաւացնելու. բայց խնդրում եմ, քիչ երկայնամիտ լինիս, այս տեղ բանը իմ առաջարկած այս գրքի հեղինակին մի չափազանց գովութիւն տալու վրայ չէ և ոչ նորա աշխատասիրութիւնը և նորա համեստ աշխատասիրութիւնը մի երևելի մատենագրութեան կարգումը դասելը: Չէ, չէ, նա յարգոյ հեղինակը ինքն էլ չի ցանկանալ այսպիսի մի մատենագրական փառքի, այս բարձր տիտղոսը կրկին ձեր իրատանց ներքոյ է թողնում. իսկ ինքը Հայ մատաղ մանկանց հայր է ցանկանում կոչուիլ, նա սրանց եղբայր ու ընկեր է ուզում հանդիսանալ. երևայցից հետ բան ունի նա, սիրում է նրանց և իրանց ընծայ է անում իր առաջին հայերէն լեղուով աշխատասիրութիւնը: Այո, Հայ մանկանց անմեղ սրտերն և պարզ մտքերն իրանց համար պատրաստած ընծայից գոհ կլինին. թէ որ չէք հաւատում, դուք հարցրէք նրանց ձևոը և փորձով կհաւատաք ասածս ճշմարտութեանը:

Պարոն Խատիսեանցը հաւատարիմ աշակերտ է իր վարժապետ լուսահոգի Խաչատուր Աբովեանցին, որոյ սիրտը կրակ ընկած էրուում փոթթուում էր, թէ ինչու Հայոց լեղուումն էլ (Ռուսիայի Հայոց մասին է մեր

խօսքը այստեղ) Երուսալեմոց նման ամէն հաստակի, ամէնի հաստակցողութեան և ամէնի սրտի համնման գրեանք չկան, որ կարդացողի սիրան ու հոգին դրաւէ, նրա մէջ ընթերցասիրութիւն զարթեցնէ, նորա վերայ մի բարոյական տպաւորութիւն թողնէ, նորա միտքը նոր նոր գիտութիւններով զարդարէ իր խօսած և իր հաստակցած լեզուովը ու ոճովը։ Պարոն Խատիսեանցը այս երեխայից ընծայած ԱԷՐ անունով իր գրքոյկի մէջ մնաս բարով է ասել մատենագրութեան իններորդ երկնքի բարձր սահմաններին, որտեղի մարմիններին մտաց աչքը հասցնելու համար, թող երեխայքը, չափահաս ուսումնականաց սրատես աչքերն անդամ զանազան գործիքներու և դիտակներու կարօտութիւն ունին, իջել է նա ցած ու ցած մինչև եօթն ութն տարեկան մատաղ և պարզամիտ մանկանց աշխարհի անճուկ և յոյժ սահմանափակ մտաց և սրտի մըթնոլորտը։ Էս աշխարհը նա վաղուց սիրել է, էս աշխարհը նա քաջ քրն նել է և նորա ամէն անկիւնները իրան ծանօթ են։ Էս տեղի բնակիչների քնքուշ սիրտը, պարզ մտքերը և անմեղ հոգիները իրան ուշադրութիւնը գրաւել են։ Ուզում ես ասվի լաւ իմանալ այս գրքի և սրանը-մանների արժանաւորութիւնը և օգտակարութիւնը, մի քանի ժամ յետ ու յետ դարձիր, քեզ մանկութեան հասակումդ երևակայէ ու այնպէս ձևռդ առ այս գիրքը ու կարդա։ Ահա էս ժամանակին քու մանուկ սիրտը ու հոգին կթռչեն երկինք, կըզգան Աստուծոյ մեծութիւնը, և նորա մարդասիրութեան հաստատ ու մէկ նշանները կտեսնեն ու նորա առջևը խոնարհած՝ նրա անհուն կարողութիւնը կըփառաբանեն, կտեսնեն իրանց բարութիւնները և իրանցից խեղճերի կարօտութիւնը, կօրհնեն երկնաւոր Հօրը և իրանց խեղճ ընկերաց վերայ զութը շարժելով, նրանց համար կաղօթեն, օգնական և կարեկից կլինին, կըճանաչեն իրանց դայութեան բարձր վախճանը, կսիրեն ամէն բանից ավելի բարութիւնը և սրբութիւնը։ Քու մտաց առջևը կը բացուին մեր հրաշալի բնութեան խորհրդոց գաղտնիքը և մարդկային ընկերական կենաց պարտքերն ու յարաբերութիւններն և քո մէջդ կծնի մի անկշտանալի ուսումնասիրութեան բաղձանք ամէն բանի խորհուրդն ու պատճառը հարցնելու և սովորելու ու այն ժամանակը դուն էլ այն Միրոյ Ընծայն ընդունող քու կարծեալ ընկերակից Հայ երեխայից հետ ի միասին կը երգես ընծայարեր յարգոյ Պարոն Խատիսեանցի գրքոյկի մէջից հետևեալ ԵՐԵԽԱՆՑ ԵՐԳ Ը ՍԻՐՈՑ ՎԵՐԱՑ։

Օ՛յ, արի սիրենք մենք միշտ երեխէրք,
Ամէն էն մարդուն, որ սիրումէ մեզ,
Որն որ մեզ համար հոգս է միշտ քաշում,
Ու մեզնից իր խրատը չէ պակսեցնում։
Օ՛յ, արի՛ սիրենք մենք միշտ երեխէրք,
Ամէն էն մարդուն, որ է խաստուն.

Որ հոգին բարի ու ազնիւ ունի,
Ընդ որ ողողմած է միշտ ազգատին։
Օ՛յ, արի սիրենք մենք միշտ երեխեր,
Ամէն որբ ու խեղճ ազգատ երեխին.
Զիրոդնենք, որ մեան նրանք անտէր, քաղցած,
Որ նրանց շինենք մեզ եղբայր, բարեկամ։
Օ՛յ, արի սիրենք մենք միշտ երեխեր,
Ու պատուենք մեզնից մեծին, պառաւին,
Սիրենք ազգատին, սիրենք քամրախոին,
Ու նրանցը օգնենք, ինչով որ կարանք։
Օ՛յ, արի սիրենք մենք միշտ երեխեր,
Բարի երեխանցը ու լաւ ընկերին.
Բայց թող վատերին էլ արի չընտրենք,
Ու միշտ աշխատինք, որ նրանցը լաւացնենք։
Օ՛յ, արի սիրենք մենք միշտ երեխեր,
Խաղեր ու երգեր, զբօսանք, զուարճութիւն.
Սրանցով պահենք խստակ ու ուրախ,
Ու թող պառաւները քաշեն մեր դարդերը։
Բայց պէտք է էն էլ մենք չմոռանանք,
Որ աշխատանքի ու ուսման մէջն էլ
Մեր ջհել օրերը պէտք է անցկացնենք,
Որ՝ երբ մեծանանք, էլ չփոշմանենք։
Ուրեմն եկէք, սիրենք երեխեր.
Երգեր ու ուսում, աշխատանք ու խաղ,
Ամէն մարդկերանցը՝ թէ բարի թէ չար.
Ինդուր որ ամէնին սիրում է Աստուած,
Աստծուն հօ սիրումենք ու՞ սիրում։

Այսպիսի մի ազնիւ նպատակաւ և այսպիսի մի պարզ աշխարհիկ բարբառով ենթեթոց զգուշաւոր ընտրութեամբ գրքի մասին է, որ մենք մեր և մեր Հայ երեխանցը կողմանէ յայտնումենք մեր անկեղծ շնորհակալութիւնը յարգոյ ընծայաբեր հեղինակին և խնդրում, որ այս օգտակար աշխատասիրութեան շարունակութիւնն ևս հետ զհետէ ընծայէ իր սիրած Հայ մանկանցը, որոնք անշուշտ այս մասին երախտագէտ կլինին։

Հարկաւոր եմ համարում այս տեղ յիշել այս գրքոյկի և տրտաքին արժանաւորութեան վրայ մի քանի խօսքով։ Յարգոյ հեղինակը չէ մոռացել և այս մասին իւր Ընծային և արտաքուստ հաճոյական և գեղեցիկ տեսք ու ձև տալ. որչափ կարելի էր մաքուր տպուած է սպիտակ թղթի վրայ և զարդարած երեսները անկիւնաւոր սիւներով և քանի մի փոքրիկ պատկերներով։ Ամբողջ գրքոյկը պարունակումէ իւր մէջ 107 երես ուրթածալ։ Գինն է 90 կոպէկ արծ. ծախուումէ հեղինակի մօտ և Պ. Ասատիր Լենգիսանցի գրատունը։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ։

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ ԿԴՆԿԱՆ ԽԱՊՐԻԿՆԵՐԸ

ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ Ի ԹԻՖԼԻԶ

Ցիշում կլինին անշուշտ մեր ընթերցասէր համաղգիքը Թիֆլիզումը ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ հաստատուելու այն առաջարկութիւնները և պայմանները, որոնք մեր օրագրոյն անցեալ ամի տասներորդ համատեսակով մեր բարեխնամած Թիֆլիզաբնակ Հայերից ուշադրութիւն և գործադրութիւն գտնելու յուսով հանդէս հանուեցան։ Ուրախ եմք, որ այժմ առհասարակ մեր աղգի բարեսիրաց այս անգամ առիթ ունինք աւետաւորելու այս առաջարկութեան ընդունելութիւն և գործադրութիւն գտնելու ուրախալի լուրը։ Ինչպէս յայտնի է նոյն յօդուածը կարդացող մեր համաղգեաց, նոյն բազմաշահ և պանծալի հաստատութիւնը զլուխ բերելու համար կարօտութիւն կար յիսուն բաժին ստորագրութեան, իւրաքանչիւր բաժինը համարուելով յիսունական մանէթ. ահա մինչև օրս օրագրոյս Հրատարակչին իրանց յօժարութիւնը այս աղնիւ գործոյս մասնակից լինելու յայտնել են տասն և ութն բարեխնամած և զերազատիւ անձինք, որոց անուանքը փութամբ հրատարակել։

1 Արծրունի Երեմիա Գէորգեան, Ղեներալ։
2 Արտաղեան Բարսեղ Ղազարեան։
3 Բաստամեանց Ստեփան Գէորգեան, բժիշկ։
4 Գնունի Տէր Ղուկասեանց Այէբոյէ Յարութիւնեան։
5 Լինֆիանեանց Համբարձում Մկրտչեան։
6 Թահիրեանց Աղէքսանդր Ղազարեան, առաջնորդ։
7 Իզմիրեանց Յովսէփ Աստուածատրեան ի Ղզլարէ։
8 Խերումեանց Յովսէփ Յարութիւնեան։
9 Ծովիանեանց Աղէքսանդր։
10 Ղազարեանց Միքայէլ Յովսէփեան։
11 Մելքումեանց Գաբրիէլ Յովհաննիսեան։
12 Մելքումեանց Միքայէլ Յովհաննիսեան։
13 Նադիրեանց Ռոմանոս Պօղոսեան։
14 Սերոբեանց Յակոբ, Շահինեանց Յովհանէս և Լազարեանց Կարապետ։
15 Սվէչնիկեանց Աւետիք Աստուածատրեան։
16 Տէր Ղազարեանց Յովակիմ։
17 Փոտինեանց Նիկոլայոս, բժիշկ։
18 Քէչարեանց Կարապետ բժիշկ։

Շատ ցանկալի էր, որ մնացեալ թիւը լրացնելու համար մեր քաղաքի ուսումնասէր համաղգիքը ըստ օրինակի ոտցա իրանք իրանց շարժէին այս աղնիւ գործոյն մասնակից լինելու, որով առաւել ստացուցութիւն կտային իրանց աղնիւ զղացմանց և զովանի ուսումնասիրութեանը։

Հրատարակիչ և Տնօրէն } ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՆՑԻՆՑ, Խմբագիր ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԿԵԱՆ։

Печатать позволяется г. Тифлисъ. 30го Января, 1861 года.
Цензоръ И. Кайтмазовъ